ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ



ՊԱՐԶԵՑՎԱԾ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ.....4

2. «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ.....32

3. «ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ.....52

4. «ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ.....85

5. «ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ.....121

ISBN 978-92-9235-833-4

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Թումանյան 15, բն. 4 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ԱՍՈՂԻԿ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ին կայացրած՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը եւ գերակա խնդիրները հաստատելու մասին», թիվ 1440 որոշման համաձայն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի ապրիլի 11-ի թիվ 188-Ա որոշմամբ հաստատված փոքր ձեռնարկատիրական գործունեության ոլորտում հարկային օրենսդրության եւ վարչարարության կատարելագործման նպատակով, ՀՀ կառավարության կողմից մշակվեց, այնուհետև ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց հարկային օրենսդրության որոշակի փոփոխությունների փաթեթ, որի նպատակն է թեթևացնել տնտեսության փոքր և միջին ձեռնարկատերերի (այսուհետ՝ ՓՄՁ սուբյեկտներ) կողմից հաշվապահական և, մասնավորապես, հարկային հաշվառմանը տրամադրվող ֆինանսական և մարդկային ռեսուրսների ծավալները, ինչպես նաև թեթևացնել ՓՄՁ սուբյեկտների մոտ ստուգումների իրականացման բեռը:

Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներառում է հետևյալ հիմնական սկզբունքների սերմանումը օրենսդրական դաշտում.

1. Գործարքների առաջնային փաստաթղթավորման նկատմամբ պահանջների խստացում,
2. Գործարքների առաջնային փաստաթղթավորման նկատմամբ հասարակական վերահսկողության գործիքների սահմանում,
3. Առանց հիմնավորող փաստաթղթերի կատարվող գործարքների մասով պատասխանատվության մեծացում,
4. Հարկային օրենսդրությունում ՓՄՁ սուբյեկտի չափորոշիչների վերասահմանում,
5. ՓՄՁ սուբյեկտի նկատմամբ հարկային բեռի թեթևացում,
6. Հարկային հաշվառման համակարգում հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոնների դերի մեծացում,
7. ՓՄՁ սուբյեկտների համար ՀՀ կառավարության 31/07/1997թ. Թիվ. 314, 315 որոշումներով սահմանված գրանցամատյանների վարման առանձնահատկությունների սահմանում,
8. ՓՄՁ սուբյեկտների մոտ ստուգումների իրականացման որոշակի սահմանափակումների սահմանում :

Վերը թվարկված սկզբունքների սերմանումը իրականացվեց հետևյալ իրավական ակտերում փոփոխությունների իրականացման արդյունքում.

- ❖ *Հարկերի մասին ՀՀ օրենք*
- ❖ *Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենք*
- ❖ *Շահութահարկի մասին ՀՀ օրենք*
- ❖ *Եկամտահարկի մասին ՀՀ օրենք*
- ❖ *Պարտադիր սոցիալական վճարների մասին ՀՀ օրենք*
- ❖ *ՀՀ Կառավարության 31/07/1997թ. 314 որոշում*
- ❖ *ՀՀ Կառավարության 31/07/1997թ. 315 որոշում*

Սույն ուղեցույցում առանձին առանձին ընթերցողին կներկայացվեն հարկային հաշվառման կիրառական մոտեցումները ըստ վերը թվարկված իրավական ակտերի, ինչպես նաև կբերվեն օրինակներ, որոնք կպարզաբանեն օրենքի դրույթների կիրառման առանձնահատկությունները:
Ուղեցույցը մշակվել է ՓՄՁ պետական աջակցության շրջանակներում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի նախաձեռնությամբ «Լոգիկոն Դիվելփմենթ» ՍՊ ընկերության կողմից :Փորձաքննության է ենթարկվել Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի,Հաշվապահական կենտրոնի և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից :
Ուղեցույցը տպագրվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ :

Ուղեցույցը նախատեսված չէ վաճառքի համար :

ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ

Հարկերի մասին ՀՀ օրենքը իր հրամայական պահանջներով և կիրառական դրույթներով չի սահմանում հարկային հաշվառման որևէ հաշվետվության ձև, կամ հարկային հաշվառման առանձին ոլորտին կամ ուղղությանը վերաբերվող որևէ հաշվառման ընթացակարգ:

Հարկերի մասին օրենքը հիմնականում բացատրում է թե.

- *Ի՞նչ է հարկը,*
- *Ինչպիսի՞ հարկատեսակներ գոյություն ունեն,*
- *Ի՞նչ հիմքով է առաջանում հարկը,*
- *Ի՞նչ հիմքով է դադարում հարկը,*
- *Ո՞ր պահին է անձը դառնում հարկ վճարող,*
- *Ո՞րն է հարկման օբյեկտը,*
- *Հարկային հաշվառման խախտումների համար պատասխանատվությունը:*

Հաշվառման կազմակերպման տեսանկյունից ուշադրության են արժանի հարկերի մասին օրենքի

- **15** հոդվածի բ/ կետով սահմանված տեղեկությունների տեղադրման ընթացակարգերը,
- **20** հոդվածով սահմանված ֆիզիկական ծավալների և իրացման փաստացի գների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերը,
- **28** հոդվածով սահմանված գրանցման գրքերի վարման ընթացակարգերը,

28/4 հոդվածով սահմանված տեղեկությունների տրամադրման ընթացակարգերը*

***Հարգելի հարկատու, ուշադրություն : Այս հոդվածի դրույթները մինչև 2012թ հունվարի 1-ը կասեցված են:**

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հարկ վճարողի վերաբերյալ հայտարարության տեղակայման

Հարկ վճարողները պարտավոր են իրենց գործունեության յուրաքանչյուր վայրում առավել տեսանելի մասում տեղադրել հայտարարություն որտեղ կներկայացվեն հետևյալ տվյալները.

- **Հարկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում անունը, ազգանունը, հայրանունը)**
- **Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)**
- **Գործունեության տվյալ հասցեն**
- **Տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը, տեսակները**

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ֆիզիկական ծավալների և իրացման փաստացի գների վերաբերյալ հաշվետվությունների

- Ստորև բերված ցանկերում նշվում են այն ապրանքները, որոնց վերաբերյալ ներկայացվում են տվյալ հաշվետվությունները,
- Հաշվետվությունները ներկայացվում են ընկերության սպասարկող տարածքային հարկային տեսչություն,
- Հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանի հաջորդող ամսվա 20-ը ներառյալ,
- Հաշվետու ժամանակաշրջան է համարվում կամ ամիսը, կամ եռամսյակը՝ ըստ ներկայացված ցանկի,
- Հաշվետվությունը լրացնելիս յուրաքանչյուր ապրանքի համար լրացվում է առանձին տող,
- Ինքնուրույն սխալները հայտնաբերելիս հարկ վճարողը կարող է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող **<u>երկրորդ</u>** ամսվա 20-ը ներառյալ ներկայացնել ճշգրտված հաշվետվություն:

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը 1601	Ապրանքատեսակի անվանումը երշիկեղեն	Չափման միավորը կգ	Ներկայացվող հաշվետվության պարբերականությունը (հաշվետու ժամանակաշրջանը) եռամսյակային
1601 0099	նրբերշիկ և սարդելկա	կգ	եռամսյակային
0207	ընտանի թռչնի միս և մսամթերք	կգ	եռամսյակային
0401	կաթ	կգ	եռամսյակային
0405	կարագ և այլ կաթնային յուղեր	կգ	եռամսյակային
0406	պանիր	կգ	եռամսյակային
210500	պաղպաղակ	կգ	եռամսյակային
0407	թռչնի ձու՝ կճեպով	հատ	եռամսյակային
0901	սուրճ	կգ	եռամսյակային
1001	ցորեն	կգ	եռամսյակային
1101 00	ալյուր	կգ	եռամսյակային
1302	բուսական հյութ և խտահույթ	լ	եռամսյակային
1902	մակարոնեղեն	կգ	եռամսյակային
1905	հաց և հացաբուլկեղեն	կգ	եռամսյակային
2002	տոմատի մածուկ	կգ	եռամսյակային
2009	բնական հյութեր	լ	եռամսյակային
2201	հանքային ջրեր	լ	եռամսյակային
2202	զովացուցիչ ըմպելիք	լ	եռամսյակային
2203 00	գարեջուր	լ	ամսական
2204	գինի	լ	ամսական
2204 10 110 0	շամպայն-գինիներ	լ	ամսական
2207-2208	սպիրտ	լ	ամսական
2208	օղի և օղու-լիկյորի արտադրանք	լ	ամսական
2208 60	օղի	լ	ամսական
2208 20 120 0	կոնյակ	լ	ամսական
2402 20	ծխախոտ	հատ	ամսական
2402 2090	ծխախոտ ֆիլտրով	հատ	ամսական
2501 00	կերակրի աղ	կգ	եռամսյակային
2710 00 250 0	բենզին	տոննա	ամսական
2710 00 590 0	դիզելային վառելիք	տոննա	ամսական
2711 12	հեղուկ գազ (պրոպան)	կգ	ամսական
2711 13	բնական գազ (բութան)	$մ^3$	ամսական

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	Հանքանյութերի անվանումները	Չափման միավորը	Ներկայացվող հաշվետվության պարբերականությունը (հաշվետու ժամանակաշրջանը)
2505 90 000	ավազ	$մ^3$	եռամսյակային
2515 11 000, 2515 12	տուֆ	$մ^3$	եռամսյակային
2517 10 100	խճաքար	$մ^3$	եռամսյակային
2515 20 000	գաջ	տոննա	եռամսյակային
2523 10 000, 2523 21 000, 2523 29 000, 2523 30 000, 2523 90 100, 2523 90 800	ցեմենտ	տոննա	եռամսյակային
2516 11 000, 2516 12, 2516 90 000	բազալտ	$մ^3$	եռամսյակային
2513 10 100	պեմզա	$մ^3$	եռամսյակային
2516 90 000, 2517 10 200	ֆելզիտ	$մ^3$	եռամսյակային
2507 00, 2508 30 000, 2508 40 000	կավ	$մ^3$	եռամսյակային
2515 11 000, 2515 12, 2515 12 900	տրավերտին	$մ^3$	եռամսյակային
2515 11 000, 2515 12, 2517 41 000	մարմար	$մ^3$	եռամսյակային
2616 90 000, 7108 11 000, 7108 12 000, 7108 13 100, 7108 13 800, 7108 20 000	ոսկի	տոննա	եռամսյակային
2516 90 000	կվարցային դիորիտ	$մ^3$	եռամսյակային
2603 00 000	պղինձ	տոննա	եռամսյակային
2516 11 000, 2516 12	գրանիտ	$մ^3$	եռամսյակային
2516 90 000	գրաբրոսիենիտ	$մ^3$	եռամսյակային
2516 90 000	պորֆիրիտ	$մ^3$	եռամսյակային
2505 10 000	ավազ կվարցային և կրեմնային	$մ^3$	եռամսյակային
2517 20 000	հրաբխային խարամ	$մ^3$	եռամսյակային
2521 00 000, 2522 10 000, 2522 20 000, 2522 30 000	կրաքար	$մ^3$	եռամսյակային
2530 10 100	պեռլիտ	$մ^3$	եռամսյակային
2529 30 000	սիենիտ	$մ^3$	եռամսյակային

Օրինակ

«Անի» ՍՊ ընկերությունը զբաղվում է երշիկի արտադրությամբ: 2009թ. II եռամսյակում ընկերությունը արտադրել է 10 տոննա երշիկ: Եռամսյակի սկզբին ընկերության հաշվեկշռում առկա երշիկի մնացորդը եղել է 2 տոննա: Եռամսյակի ընթացքում ընկերությունը իրացրել է 9 տոննա երշիկ, և իրացումից հասույթը կազմել է 18 միլիոն դրամ:
Հաշվետվությունը լրացվում է հետևյալ ձևով.

Հաշվետվություն

ապրանքների արտադրության եւ շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) անվանումը (անունը)	»ԱՆԻ« ՍՊԸ
ՀՎՀՀ	01500001
Հաշվետու ժամանակաշրջանը	2009 թ. II եռամսյակ

Արտադրանքի՝											
Տեսակը	ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	չափման միավորը	մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	արտադրված քանակը	ներմուծված քանակը	իրացված քանակը	Կորուստ	օգտագործված է սեփական արտադրության համար	մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	իրացումից ստացված հասույթը (դրամ)	միավորի միջին գինը
երշիկ	1601	կգ	2000	10000		9000			3000	18000000	2000

(հաշվետվությունը ներկայացրած (կազմած) պաշտոնատար անձի պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 200 թ. Կ.Տ.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

28 հոդվածով սահմանված գրանցամն գրքերի վարման ներկայացման

Այս բաժնում ներկայացվում են.

- *ՀՀ Կառավարության 31/07/1997թ. 314 որոշմամբ սահմանված գրանցամատյանի վարման կարգը, այսուհետև՝* ***ԱՌԱՔՄԱՆ ԳԻՐՔ***
- *ՀՀ Կառավարության 31/07/1997թ. 315 որոշմամբ սահմանված գրանցամատյանի վարման կարգը, այսուհետև՝* ***ՀԱՍՈՒՅԹԻ ԳԻՐՔ***

1. ԱՌԱՔՄԱՆ ԳԻՐՔ

Առաքման գիրքը վարում են ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) առաքող կամ տրամադրող (կարգի իմաստով՝ առաքող) կամ տեղափոխող ՀՀ հարկային մարմիններում հաշվառման կանգնած հարկ վճարողները, այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստեղծված՝ առանձնացված ստորաբաժանումները և անհատ ձեռնարկատերերը:

Առաքման գրանցման գիրք չեն վարում

- Ավելացված արժեքի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող չհամարվող այն անձիք, որոնց համար օրենքով սահմանված կարգով հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակատվածում,
- Բանկերը և վարկային կազմակերպությունները:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից առաքումների գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են իրենց կողմից առաքվող կամ իրենց մոտից տեղափոխվող ամբողջ արտադրանքը և ապրանքները: Բացառություն են կազմում միայն պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումները, խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով արտադրանքի առաքումը, տարածման նպատակով մամուլի տեղափոխումը, վերանորոգման և համանման այլ ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման ժամանակ պահեստամասերի կամ երաշխիքային ժամկետ ունեցող տեխնիկայի տեղափոխումը, տնտեսավարող սուբյեկտների հիմնական միջոցների, փոքրարժեք և արագամաշ առարկաների, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը:

Առաքվող ապրանքը ներառում է՝

ա) տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ տնտեսավարող սուբյեկտներին իրացնելու համար նախատեսված ապրանքի (այդ թվում՝ կոմիսիոն վաճառքի ձևով և այլն) տրամադրումը.

բ) իրացման համար չնախատեսված ապրանքների (պատրաստի արտադրանքի) տրամադրումը (հատկացումը, բացթողումը, այլ ձևով օտարումը, այդ թվում՝ անհատույց):

Առաքվող ապրանք է համարվում նաև առևտրական կետից տնտեսավարող սուբյեկտներին իրացվող (վաճառվող, տրամադրվող) ապրանքը:

Տեղափոխվող ապրանքը ներառում է՝

Տնտեսավարող սուբյեկտի կողմից բացառապես ապրանքի և պատրաստի արտադրանքի տնտեսական տեղաշարժերի իրականացում, ինչպես նաև ապրանքի տեղափոխում մաքսատուն կամ մաքսային կետ, կամ ապրանքի ի պահ հանձնում:

Առաքումների և (կամ) տեղափոխումների իրականացման յուրաքանչյուր հասցեի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով առաքումների գրանցման գրքի կազմի վրա) համար (պատրաստի արտադրանքի կամ ապրանքի պահեստ, այլ մատակարարման վայրեր) վարվում է առանձին առաքումների գրանցման գիրք:

Դիտարկենք տեղափոխումների մի քանի տարբերակներ և տեսնենք թե որ դեպքում է անհրաժեշտ իրականացնել առաքման գրքի գրանցումը:

Օրինակ

«Անի» ՍՊ ընկերությունը զբաղվում է կոշիկի արտադրությամբ և վաճառքով: Կոշիկի արտադրության համար վարձակալել է երկու մասնաշենքից բաղկացած տարածք ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչար 11 հասցեում, այդ տարածքի I մասնաշենքը ՍՊ ընկերությունը օգտագործում է որպես պահեստ, իսկ II մասնաշենքը՝ որպես արտադրամաս: Բացի այդ պահեստային տարածքից կատարում է մեծածախ վաճառք: Ինչպես նաև տվյալ կազմակերպությունը ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 11 հասցեում ունի ֆիրմային խանութ, որտեղից կատարում է իր կողմից արտադրված կոշիկների մանրածախ վաճառքը:

Կազմակերպությունը կատարում է հետևյալ գործարքները.

1. Կազմակերպությունը կոշիկի արտադրության համար ձեռք է բերում համապատասխան հումք և պահեստավորում է I մասնաշենքում առանձնացված տարածքում: Արտադրական գործընթացի ընթացքում պահանջագրով արտադրամասի պետը պահեստից ստանում է համապատասխան հումք, որը պետք է տեղափոխվի արտադրամաս՝ արտադրությունում օգտագործելու նպատակով: Քանի որ այս գործարքը հանդիսանում է պատրաստի ապրանք չհանդիսացող (հումքի) գույքի ներտնտեսական տեղափոխում (պահեստը և արտադրամասը գտնվում են նույն հասցեում), հետևաբար այս գործարքը առաքման գրքում չի գրանցվի:
2. Արտադրամասը համապատասխան հումքի ստացումից հետո թողարկում է պատրաստի արտադրանք և տեղափոխում է պահեստ՝ վաճառքի նպատակով, իսկ պահեստային տարածքից ստացված արտադրանքը տեղափոխվում է ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 11 հասցեում գտնվող ֆիրմային խանութ: Այս դեպքում, կազմակերպությունը պետք է վարի 2 առաքման գիրք (I և II մասնաշենքերի համար), որոնցում համապատասխանաբար պետք է գրանցվի ինչպես արտադրամասից պահեստ պատրաստի արտադրանքի տեղափոխությունը՝ արտադրամասի համար հաստատված առաքման գրքում, այնպես էլ պահեստից ֆիմային խանութ՝ պահեստի համար հաստատված պատրաստի արտադրանքի տեղափոխությունը:
3. Կազմակերպության արտադրամասում տեղակայված է պահարան, որը հանդիսանում է տվյալ կազմակերպության սեփականությունը, և պահանջվում է, որպեսզի տվյալ պահարանը արտադրամասից տեղափոխվի ֆիրմային խանութ: Այս դեպքում, քանի որ այդ պահարանը հանդիսանում է կազմակերպության հիմնական միջոցը, որը պետք է տեղափոխվի մի հասցեից մյուսը, գործարքը առաքման գրքում չի գրանցվի:

Տրանսպորտային միջոցներով առևտրի (առաքումների) կազմակերպման գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների առաքումների գրանցման գրքերը կնքվում և համարակալվում են սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի գրավոր թույլտվության հիման վրա:

Օրինակ

«ԱՆԻ» ՍՊ ընկերությունը ունի 2 վարձակալված տրանսպորտային միջոց, որոնց միջոցով իրականացնում է իր կողմից ներմուծված ապրանքների մեծածախ վաճառք: Այդ գործընթացը կատարվում է հետևյալ կարգով.

Ընկերությունը ներմուծում է ապրանքներ, որոնք պահեստավորում է ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյան 12 հասցեում: Նշված հասցեում կազմակերպության աշխատակիցները համապատասխան տրանսպորտային միջոցներով կատարում են ապրանքների առաքում գնորդներին: Տվյալ դեպքում կազմակերպությունը պետք է դիմի իր տարածքային հարկային տեսչություն և սահմանված կարգով ներկայացնի առաքման գրքերի հաստատման հայտ՝ համապատասխանաբար պահեստային տարածքի, և բեռնատար մեքենաների համար առանձին-առանձին: Պահեստից տրանսպորտային միջոցին ապրանքներ տրամադրելիս պահեստի համար հաստատված առաքման գրքում կկատարվի համապատասխան տեղափոխման գրառում՝ նշելով տեղափոխման հասցեն, իսկ տրանսպարտային միջոցից վաճառքի դեպքում դրա համար հաստատված գրքում կկատարվի համապատասխան առաքման գրառում՝ տես օրինակում:

Ապրանքների առաքումն իրականացվում է սահմանված կարգով լրացվող սկզբնական հաշվարկային փաստաթղթերի (ապրանքատրանսպորտային բեռնագիր, պահեստի ելքի անդորրագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն հիման վրա: Դուրս գրված հաշվարկային փաստաթղթերը հաշվառվում և պահվում են տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ հաշվապահական հաշվառման գործող կարգին համապատասխան:

Ապրանքների առաքման դեպքում առաքումների գրանցման գրքում ապրանքի բացթողման համար պատասխանատու համապատասխան անձի կողմից գրանցումներ կատարվում են նախապես՝ մինչև տնտեսավարող սուբյեկտի տարածքից ապրանքի դուրսբերումը (տեղափոխման սկիզբը) յուրաքանչյուր հաշիվ-ապրանքագրի համար առանձին-առանձին՝ ըստ առաքման կամ տեղափոխման համար հաշիվ-ապրանքագրերի լրացման հաջորդականության՝ գրանցման հերթական համարներով:

Առաքումների գրանցման գրքում առաքումն իրականացնող տնտեսավարող սուբյեկտի կողմից հերթական համարով գրանցվում է առաքվող ապրանքատեսակի խոշորացված խմբի անվանումը (օրինակ՝ սննդամթերք, շինանյութ և այլն), հաշիվ-ապրանքագրի տվյալները, տվյալ տարածքից տեղափոխման ձևը (տրանսպորտային միջոցի տեսակը, մակնիշը, պետհամարանիշը (համարը) կամ նշում առձեռն (առանց տրանսպորտային միջոցի) տեղափոխման մասին և ապրանքի հասցեագրման (տեղափոխման) վայրը:
Գրանցման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և անմիջապես հաջորդ տողում կատարվում ճիշտ գրառումը: Ձնջված տողի կողքին կատարվում է համապատասխան նշագրում՝ սխալ գրառման մասին:

Առաքումների գրանցման գրքում գրանցում կատարելուց հետո գնորդին (ստացողին) տրվող հաշիվ-ապրանքագրի վերևի աջ անկյունում կատարվում է «Առաքողի գրանցման գրքի N _____» գրառումը և գրառման մեջ համարի նախատեսված մասում լրացվում է առաքողի առաքումների գրանցման գրքի էջի՝ տվյալ հաշվարկային փաստաթղթի գրանցման տողի հերթական համարը՝ ըստ 1-ին սյունակի:
Առաքումների գրանցման գիրքը տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են աշխատանքի (առաքումների իրականացման) ընթացքում պահել ապրանքի անմիջական առաքման (բացթողման) կետում (շինությունում, վայրում):

Օրինակ՝

NN	Ապրանքատեսակի խմբի անվանումը	Հաշիվ-ապրանքագրի համարը, ամսաթիվը	Ընդհանուր գումարը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը (դրամով)	Առաքման (ապրանքը բաց թողնելու, տեղափոխելու սկզբի) օրը, ժամը	Տեղափոխման ձևը և վայրը (հասցեն)	Ապրանքն ուղեկցողի (ստացողի) անունը, ազգանունը, լիազորագրի համարը (անձնագրի տվյալները)	Գնորդի (ստացողի) անվանումը և ՀՎՀՀ-ն
1	2	3	4	5	6	7	8
1	Շինանյութ	ՀԱ N 1 31.01.2009	150.000				«Բ» ՍՊԸ 01500001
2	Շինանյութ	ՃՏԲ N 1 31.01.2009		31.01.2009 11:45	Ավտոտեղափոխություն ՀՀք. Երևան, Հ. Էմին 61	Մինասյան Ռազմիկ AA 012156 տրվ 003 կողմից 01.01.2007	

Նշված օրինակում 1 տողով ներկայացված է առաքման գործարքի գրանցումը, և 2-րդ տողով՝ տեղափոխման գործարքի գրանցումը: Լրացված են միայն պարտադիր լրացման սյունակները:

2. ՀԱՍՈՒՅԹԻ ԳԻՐՔ

Հայաստանի Հանրապետության տարածքում հասույթի գիրք վարում են Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) վաճառող (այդ թվում՝ կոմիսիոն հիմունքներով) կազմակերպությունները, այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստեղծված՝ առանձնացված ստորաբաժանումները և անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր:

Հասույթի գիրք չեն վարում՝

- Ավելացված արժեքի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող չհամարվող անձիք՝ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակահատվածում,
- Ոչ նյութական ակտիվներ վաճառող անձիք այդ գործունեության մասով,
- Անշարժ գույք վաճառող անձիք այդ գործունեության մասով,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հրատարակվող թերթեր վաճառող անձիք այդ գործունեության մասով:

ՕՐԻՆԱԿ

Դեպք 1: «Ալֆա» ՍՊԸ-ն 2009թ հունվարի 1-ից համարվում է ԱԱՀ չվճարող և զբաղվում է մանրածախ առևտրով: «Ալֆա» ՍՊԸ-ն իր գործունեությունը ծավալում է վաճառքի համար նախատեսած խանութ-սրահից:
Տվյալ պարագայում «Ալֆա» ՍՊԸ-ի համար նշված վաճառքի կետում հասույթի գրքի վարումը պարտադիր չէ:

Դեպք 2: Եթե «Ալֆա» ՍՊԸ-ն 2010 թվականին համաձայն ԱԱՀ օրենքի նախապայմանների այլևս համարվի ԱԱՀ վճարող կազմակերպություն, ապա վաճառքի համար նախատեսված սրահում ընկերությունը պարտավոր է վարել սահմանված ձևով հարկային տեսչության կողմից հաստատված հասույթի գիրք, որում պետք է մինչև վաճառքի հանելը գրանցվեն վաճառքի համար նախատեսված բոլոր ապրանքները:

Առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման յուրաքանչյուր վայրի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով գրանցման գրքի կազմի վրա) համար վարվում է առանձին հասույթի գիրք: Հասույթի գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են ձեռք բերված (սեփական արտադրության արտադրանքի դեպքում՝ վաճառքի իրականացման վայրում (կետերում) ընդունված) բոլոր ապրանքները՝ ստանալուց (ընդունելուց) անմիջապես հետո, մինչև վաճառքի հանելը (բայց ոչ ուշ, քան մինչև ապրանքներն ստանալու օրվա ավարտը)՝ անկախ առևտրի իրականացման ձևից (մեծածախ կամ մանրածախ):
Տնտեսավարող սուբյեկտներն աշխատանքի ընթացքում (վաճառք իրականացնելիս) պարտավոր են գրանցման գիրքը պահել առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրում (կետում):

ՕՐԻՆԱԿ

«Սիգմա» ՍՊԸ –ն զբաղվում է ապրանքների ներմուծմամբ և վաճառքով: Ապրանքների վաճառքը իրականացնում է ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 21 հասեում գտնվող խանութ սրահում և ՀՀ, ք. Երևան, Սայաթ- Նովա 12 հասցեում գտնվող վաճառքի կետի միջոցով: ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 21 հասեում գտնվող խանութի նկուղային հարկում գտնվում է «Սիգմա» ՍՊԸ-ի պահեստային տարածքը, որտեղ և պահեստավորվում են կազմակերպության կողմից ներմուծված ապրանքները: Կազմակերպությունը իրականացրել է հետևյալ գործարքները

1. Ներմուծել է 5.000.000 դրամի ապրանք (վաճառքի գներով արտահայտված), որը պահեստավորվել է պահեստում,
2. Վաճառքի նպատակով պահեստային տարածքից ք.Երևան, Մաշտոցի 21 հասցեի վաճառատեղի է տեղափոխել 2.000.000 դրամի ապրանք,
3. 1.500.000 դրամի ապրանք տեղափոխել է ՀՀ, ք. Երևան, Սայաթ- Նովա 12 հասցեում գտնվող վաճառքի կետ:

Վերը նշված գործարքների ձևակերպման համար «Սիգմա» ՍՊԸ-ը պարտավոր է Մաշտոցի 21 հասցեում գտնվող խանութ սրահի և ՀՀ, ք. Երևան, Սայաթ- Նովա 12 հասցեում գտնվող վաճառքի կետի համար վարել առանձին հասույթի գիրքեր, որոնցում մինչև ստացված ապրանքները վաճառքի հանելը, սակայն ոչ ուշ, քան տեղափոխման օրվա ավարտը պետք է սահմանված կարգով գրանցվեն ստացված ապրանքատեսակները, իսկ պահեստի համար հասույթի գրքի վարում չի պահանջվում, քանի որ տվյալ տարածքում ապրանքների անմիջական ցուցադրություն և վաճառքի վայր չի հատկացված:
Այսպիսով՝

- Մաշտոցի 21 հասցեում գտնվող խանութ սրահի համար հաստատված գրքում պետք է գրանցվի 2.000.000 դրամի ապրանքը
- ՀՀ, ք. Երևան, Սայաթ- Նովա 12 հասցեում գտնվող վաճառքի կետի համար հաստատված գրքում պետք է գրանցի 1.500.000 դրամի ապրանքը:

Հասույթի գրքում հերթական համարով նշվում են ապրանքի ստացման ամսաթիվը, մուտքի փաստաթղթի տվյալները (համարը, ամսաթիվը և ընդհանուր գումարը), ապրանքի անվանումը, չափի միավորը, քանակը, միավորի վաճառքի գինը (փոփոխությունները):

Գրանցման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և անմիջապես հաջորդ տողում կատարվում ճիշտ գրառումը: Ձնջված տողի կողքին կատարվում է համապատասխան նշագրում՝ սխալ գրառման մասին:

Տնտեսավարող սուբյեկտները մինչև ապրանքի վաճառքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնում և տեղադրում են գնապիտակներ:
Տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքների գների փոփոխման դեպքում լրացվում են գրանցման գրքի 9-11-րդ սյունակները: Նույն ապրանքների գների երկրորդ փոփոխության դեպքում լրացվում են գրանցման գրքի 12-14-րդ սյունակները: Ապրանքների գների երրորդ փոփոխության դեպքում գրանցման գրքում (ապրանքների (և դրանց գների) գրանցման մասի 1-ին, 2-րդ և 5-8-րդ սյունակներում) լրացվում է նոր տող՝ հերթական համարով, միաժամանակ փակագծում նշվում է այդ ապրանքի առաջին (նախորդ) գրանցման տողի հերթական համարը: Ընդ որում՝ 2-րդ սյունակում նշվում է նոր գնով վաճառքը սկսելու ամսաթիվը, 7-րդ սյունակում՝ ապրանքների մնացորդի քանակը, որը ենթակա է վաճառքի նոր գնով, իսկ 8-րդ սյունակում՝ նոր գինը՝ սույն կարգով սահմանված ընդհանուր կարգով (տես օրինակում):

Աշխատանքային օրվա վերջում տնտեսավարող սուբյեկտների կողմից ամեն օրվա արդյունքներով գրանցման գրքերում կատարվում է փաստացի կանխիկ հասույթների գրանցում՝ գրանցման գրքի վերջին վեց էջում «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» մեկ տարվա համար նախատեսված մասում, ըստ ամսաթվերի: Հասույթների գումարները գրանցվում (հաշվառվում) են հայկական դրամով՝ թվի ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ: Չաշխատելու (կամ կանխիկ հասույթներ չունենալու) դեպքում գրանցման գրքի (գումարը) սյունակում դրվում է գծիկ, իսկ «գումարը (տառերով)» սյունակում կատարվում է գրառում՝ «Հասույթ չի առաջացել»:

Օրական «հասույթների գրանցում (հաշվառում)» մասի լրացումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների պարտադիր կիրառմամբ դրամական հաշվարկներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար պարտադիր չէ:

Վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցումը ներառում է՝

ա) գրանցման գրքի՝ ապրանքների (և դրանց գների) գրանցման մասի էջի 5-7-րդ սյունակների լրացումը (համապատասխան քանակի ըստ էության գրանցումը).
բ) Տնտեսավարող սուբյեկտներն աշխատանքի ընթացքում (վաճառք իրականացնելիս) պարտավոր են գրանցման գիրքը պահել առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրում (կետում):
գ) գրանցման գրքի օրական հասույթների գրանցման մասի լրացումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են հսկիչ-դրամարկղային մեքենաներ:

Վաճառվող ապրանքների, ապրանքների գների գրանցումը ներառում է

Գրանցման գրքի ապրանքների (և դրանց գների) գրանցման մասի էջի 8-րդ սյունակի լրացումը (իսկ գների փոփոխության դեպքում՝ վերը նշված պահանջի կատարումը):

Վերը նշվածը ցույց տանք օրինակով

Օրինակ 1

«Ալֆա» ՍՊԸ-ն 2009 թ մայիսի 5-ին համաձայն Հ N 12, առ. 05.05.2009թ –ի (ստորև ներկայացված է համապատասխան Հաշիվը) ձեռք է բերել 3.477.120 ապրանքներ՝ վաճառելու նպատակով: Ապրանքների համար սահմանվել են վաճառքի գներ և մինչև վաճառքի հանելը գրանցվել հասույթի գրքում:

Մատակարար	**ՀԱՆԻՍՊԸ**	
Իրավ. հասցե	Երևան Աբովյան փող.11 շ. բն 37	**Հաշիվ N 12**
Գործ. հասցե	Երևան Աբովյան փող.11 շ.	**օր "05" մայիս 2009թ.**
Հ/Հ		
Բանկ		
ՀՎՀՀ	02555555	
Վճարող	**ՀԱՖԱՀՍՊԸ**	Պայմանագիր/պատվեր
Իրավ. հասցե	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 21	N
Գործ. հասցե	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 21	օր
Հ/Հ		
Բանկ		
ՀՎՀՀ	**01555555**	

Լրացում՝

NN	Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
1	էլ. պտուտակահան 10մմ, 18 Վ	15	հատ	11500	172,500.00
2	Կտրող և հղկող գործիք (բալգարկա) 115մմ 860 ՎՏ	20	հատ	6000	120,000.00
3	Հարթեցնող և փայլեցնող գործիք	30	հատ	6000	180,000.00
4	էլ. ևրբասղոց, 65մմ	36	հատ	5670	204,120.00
5	էլ. գայլիկոնիչ, (դռել) 10 մմ 1	50	հատ	5670	283,500.00
6	Փայտ կտրող էլ. Սղոց	60	հատ	25200	1,512,000.00
7	էլ. ռնդա , 82*2մմ	30	հատ	6300	189,000.00
8	Սեղանի ֆրեզային գործիք, 16 մմ	12	հատ	42000	504,000.00
9	Սկավառակային սղոց, 210մմ	24	հատ	13000	312,000.00

Ընդամենը՝ **3,477,120.00**

Գումարը բառերով՝ *երեք միլիոն չորս հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր քսան ՀՀ դրամ*

Կ. Տ. Կ. Տ.

Տնօրեն ,,,,,,,,,,,,,,,,,,,, Տնօրեն ,,,,,,,,,,,,,,,,,

Գլխավոր հաշվապահ ,,,,,,,,,,,,,,,,,,,, Գլխավոր հաշվապահ ,,,,,,,,,,,,,,,,,,,,

N N	Ապրանքների գրանցում						Վաճառքի գների գրանցում						
	ն	Մուտքի փաստաթղթի		Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի վաճառքի գինը (դրամով)	I փոփոխություն			II փոփոխություն		
		ա	ըթիվըննմա գցորդըընորր գինը)					ամսա-թիվը	մնա-ցորդը	նոր գինը	ամսա-թիվը	մնա-ցորդը	նոր գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	05.05.2009	ՀԱ N 12 05.05. 09	3.477.120	էլ. պտուտակա դարձիչ 10մմ, 18 Վ	հատ	15	15.000						
2				Կտրող և հղկող գործիք (բալգարկա) 115մմ 860 ՎՏ	հատ	20	8.000						
3				Հարթեցնող և փայլեցնող գործիք	հատ	30	8.000						
4				էլ. նրբասղոց, (լոբզիկ) 65մմ	հատ	36	7.500						
5				էլ. գայլիկոնիչ, (դռել) 10 մմ 1	հատ	50	7.500						
6				Փայտ կտրող էլ. սղոց	հատ	60	30.000	12.06.09	40	35.000*	01.08.09	20	32.000**
7				էլ. ռնդա , 82*2մմ	հատ	30	10.000						
8				Սեղանի ֆրեզային գործիք, 16 մմ	հատ	12	55.000	12.06.09	6	50.000*			
9				Սկավառակ այիհ սղոց, 210մմ	հատ	24	20.000						
10 (6)	05.09.09			Փայտ կտրող էլ. սղոց	հատ	12	40.000**						
~~11~~	~~12.09.09~~	~~Հանձնման-ընդունման ակտ~~		~~Կրտող սկավառակ~~	~~հատ~~	~~20~~	~~25.000~~						
11	12.09.09	Հանձնման-ընդունման ակտ		Կրտող սկավառակ	հատ	20	15.000						

2009թ հունսի 12-ին «Ալֆա» ՍՊԸ-ն կատարել է գնային փոփոխություններ, սահմանելով հետևյալը՝

- *Փայտ կտրող էլ. Սղոց՝ մնացորդը առ. 12.06.09 40 հատ --- 35.000 դրամ*
- *Սեղանի ֆրեզային գործիք, 16 մմ՝ մնացորդը առ. 12.06.09 6 հատ --- 50.000 դրամ*

***2009թ օգոստոսի 1-ի և 2009 թ սեպտեմբերի 5-ին կատարել է համապատասխան փոփոխություններ*

- *օգոստոսի 1-ից Փայտ կտրող էլ. Սղոցի գինը սահմանել (մնացորդը առ. 01.08.09 20 հատ) --- 32.000 դրամ*
- *սեպտեմբերի 5-ից Փայտ կտրող էլ. Սղոցի գինը սահմանել (մնացորդը առ. 05.09.09 12 հատ) --- 40.000 դրամ*

Օրինակ 2

«Ալֆա» ՍՊԸ-ն «Վան» ՍՊԸ-ի հետ կնքել է կոմիսիոն վաճառքի պայմանագիր և համաձայն այդ պայմանագրի 2009թ սեպտեմբերի 12-ին «Վան» ՍՊԸ-ից կոմիսիոն հիմունքներով ընդունել է 20 հատ կտրող սկավառակ, որը պետք է վաճառի 15.000 դրամով կոմիսիոն վճարը կազմում է յուրաքանչյուր ապրանքի դիմաց 5000 դրամ: Այդ ապրանքները «Ալֆա» ՍՊԸ սահմանված կարգին համապատասխան մինչև վաճառքի հանելը պետք է գրանցի հասույթի գրքում: Գրանցման ընթացքում կատարվել է սխալ գրառում, որը ուղղվել է սահմանված կարգին համապատասխան ձևով (տես օրնակի 11-րդ տողի գրանցումը):

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

28/4 հոդվածով սահմանված տեղեկությունների տրամադրման

Սույն հոդվածով սահմանվել են պատժամիջոցներ այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք խուսափում են գործարքների փաստաթղթավորում կատարելուց: Այսպես օրինակ, եթե մատակարարը ապրանք է մատակարարում և փաստաթուղթ չի տրամադրում, ապա նա կտուգանվի գործարքի արժեքի 20%-ի չափով, այդ չափով կտուգանվի նաև գնորդը: Սակայն սահմանվել են նաև բացառություններ օրինապահ հարկատուների համար, մասնավորապես այն դեպքերում, երբ մատակարարը դուրս է գրում հաշիվ, իսկ գնորդը հարաժարվում է կամ հակառակը՝ գնորդը պահանջում է փաստաթուղթ, իսկ մատակարարը հրաժարվում է այն տարամադրելուց: Օրենքով սահմանված են օրենքի տվյալ դրույթների այլ առանձնահատկություններ:

Օրինակ

Հոդված 28[4] ա կետի օրինակ

Դեպք 1: *«Ա» ՍՊԸ-ն առանց հիմնավորող փաստաթղթի ձեռք է բերել 120 հազ. դրամի ապրանք: Այս տեպքում նրա նկատմամբ տուգանք չի կիրառվի, քանի որ միանվագ ձեռքբերման գումարը փոքր է 150 հազ դրամից (120.000 < 150.000)*

Դեպք 2: *«Ա» ՍՊԸ-ն առանց հիմնավորող փաստաթղթի ձեռք է բերել*

ա) հունվարի 15-ին 85.000 դրամի ապրանք

բ) հունվարի 20-ին 250.000 դրամի ապրանք և սահմանված ձևով հարկային տեսչություն համապատասխան տեղեկություն չի ներկայացրել

Այս դեպքում

ա) ձեռքբերման նկատմամբ տուգանք չի կիրառվի

բ) ձեռքբերման համար կկիրառվի տուգանք՝ 250.000x20%= 50.000 դրամ

Դեպք 3: *«Ա» ՍՊԸ-ն մատակարել է «Բ» ՍՊԸ-ին 1.000.000 դրամի ապրանք և համապատասխան փաստաթղթավորում չի կատարվել (հաշիվ ապրանքագիր դուրս չի գրվել): Այս դեպքում թե «Ա» ՍՊԸ-ն և թե «Բ» ՍՊԸ-ն տուգանվելու են յուրաքանչյուրը իր հերթին 1.000.000 X 20%= 200.000 -ական դրամ:*

Դեպք 4: *«Ա» ՍՊԸ-ն 2009թ մարտ ամսվա ընթացքում առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռք է բերել 2.000.000 դրամի ապրանք, սակայն յուրաքանչյուր ձեռքբերման արժեքը չի գերազանցել 150.000 դրամը: Վերջին ձեռքբերումները, որոնց արդյունքում ամսվա ընթացքում ձեռքբերումների գումարը գերազանցել է 1.500.000 դրամը, կազմել են՝ 140.000 դր, 130.000 դր, 50.000 դր, 120.000 դր, 110.000 դր: Այս դեպքում, քանի որ 2.000.000 > 1.500.000-ից, ապա «Ա» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի տուգանք 20 %-ի չափով այն գումարների չափով, որոնց հետևանքով ընդհանուր ձեռքբերումների գումարը գերազանցել է 1.500.000 դրամը: Այսինքն՝*

(140.000+130.000+50.000+120.000+110.000)X20 %= 530.000X 20%=106.000 դր:

Օրինակ

Հոդված 28[4] բ կետի օրինակ

«Ա» ՍՊԸ-ն «Բ» ՍՊԸ-ից ձեռք է բերել ապրանքներ և ստացել է կրճատ հաշիվ-ապրանքագիր: Այս դեպքում ոչ «Ա» ՍՊԸ-ի, ոչ «Բ» ՍՊԸ-ի նկատմամբ տուգանք չի կիրառվի:

Կրճատ հաշիվ-ապրանքագրում պետք է ներառվեն հետևյալ վավերապայմանները՝

ա) հաշվարկային փաստաթղթի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը.

բ) ակտիվներ օտարող կամ ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) հարկ վճարողի՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ) ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ ՀՎՀՀ,

- իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), ինչպես նաև կնիքը (դրոշմակնիքը) (Հայաստանում հաշվառված հարկ վճարողի համար՝ կնիքի (դրոշմակնիքի) վրա ՀՎՀՀ-ի պարտադիր նշմամբ) և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը,

- ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (զինվորական գրքույկի, սոցիալական քարտի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև ,անհատ ձեռնարկատեր նշումը և պետական գրանցման վկայականի համարը.

գ) ակտիվների անվանացանկն ու քանակը և (կամ) ծառայությունների տեսակն ու ծավալը,

դ) ակտիվների միավորի գինը՝ դրա առանձնացումը հնարավոր լինելու դեպքում և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինն ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը:

ե) ակտիվներ ձեռք բերող կամ ծառայություններ ստացող (աշխատանքներ ընդունող)՝ հարկ վճարող իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը և փաստացի գործունեության վայրը (հասցեն) կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի (զինվորական գրքույկի, սոցիալական քարտի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև ,անհատ ձեռնարկատեր նշումը և պետական գրանցման վկայականի համարը:

Օրինակ

Հոդված 28[4] դ կետի օրինակ

Դեպք 1: «Անի» ՍՊԸ-ն ԱՋ Ա. Մանուկյանին ապրանք է մատակարարել 500.000 դրամ արժեքով և սահմանված կարգով դուրս է գրել հաշվարկային փաստաթուղթ: ԱՋ Ա. Մանուկյանը հրաժարվել է ստանալ հաշիվ-ապրանքագիրը: «Անի» ՍՊԸ-ն հաշիվ-ապրանքագրում նշում է կատարում գնորդի հրաժարման մասին, այս դեպքում տուգանք չի կիրառվում «Անի» ՍՊԸ-ի նկատմամբ:

Օրինակ

Հոդված 28[4] ե կետի օրինակ

Դեպք 1: «Սիգմա» ՍՊԸ 2009թ. մայիսի 10-ին «Մերի» ՍՊԸ-ից ձեռք է բերել 2.503.800 դրամի ապրանք, որի դիմաց «Մերի» ՍՊԸ-ն դուրս չի գրել սահմանված կարգով հաշիվ-ապրանքագիր: Որպեսզի «Սիգմա» ՍՊԸ-ն կարողանա հիմնավորել իր ձեռքբերումները և տուգանք չվճարի, ապա նա պետք է կատարի հետևյալ քայլերը՝

«Սիգմա» ՍՊԸ-ն համապատասխան իր ձեռքբերումների պետք է կազմի միակողմանի հաշվարկային փաստաթուղթ, որում պետք է ներառվի

1. «Մերի» ՍՊԸ-ի գործարքի կատարման վայրում «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով փակցված հայտարարության տվյալները՝
   - ✓ կազմակերպության լրիվ անվանումը
   - ✓ հարկ վճարողի հաշվառման համարը
   - ✓ գործարքի կատարման (ձեռքբերման) վայրի հասցեն
   - ✓ գործարքի կատարման հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները),
2. գործարքի կատարման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը,
3. գործարքի վերաբերյալ կազմված միակողմանի փաստաթղթերի հերթական համարը,
4. ձեռքբերում կատարած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը,
5. ապրանքների անվանումները (անվանացանկը),
6. ապրանքների տեսակային և քանակը,
7. ապրանքի միավորի գինը, ընդհանուր արժեքը,
8. գործարքի լրիվ արժեքով հատուցման ընդհանուր գումարը:

Կազմված փաստաթուղթը պետք է «Սիգմա» ՍՊԸ-ի կողմից կնքվի և ստորագրվի: Այս փաստաթղթի պատճենը ՀՀ կառավարության կողմից սահմանված ձևի տեղեկության հետ միասին մինչև 2009թ. մայիսի 15-ը (5 աշխատանքային օրվա ընթացքում) պետք է ներկայացնի իրենց հաշվառման հարկային մարմին (կից ներկայացված է տեղեկության լրացված օրինակը):

Տեղեկություններ ներկայացնող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) տվյալները		Փաստաթղթի հերթական համարը N____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	(1)	0 0 0 0 0 0 0 0
Կազմակերպության անվանումը	(2)	«Սիգմա» ՍՊԸ
Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	(3)	
Գտնվելու (հաշվառման) վայրը	(4)	ՀՀ, ք. Երևան, Աբովյան 11
Հեռախոսահամարը	(5)	
Տեղեկությունների դիմային էջին կցվող էջերի քանակը (տառերով)		
Տեղեկություններին կցվող փաստաթղթերի պատճենների էջերի քանակը (տառերով)		
Տեղեկություններ ներկայացնելու ամսաթիվը	(6)	12.05.09

1-ին տողում նշվում է հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն, 2-րդ տողում՝ կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը, իսկ 3-րդ տողում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը. 4-րդ տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, 5-րդ տողում՝ աշխատանքային (տան) հեռախոսահամարը, իսկ 6-րդ տողում՝ հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու ամսաթիվը.

Տեղեկություններ երկկողմանի հաշվարկային փաստաթղթեր չտրամադրած կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) վերաբերյալ									
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	(7)	2	1	1	1	1	1	1	1
Կազմակերպության լրիվ անվանումը	(8)	«Մերի» ՍՊԸ							
Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	(9)								
Գործարքի կատարման (ձեռքբերման) վայրի հասցեն	(10)	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 11							
Գործունեության տեսակը (տեսակները)	(11)	Առևտուր							

7-րդ տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-ն, 8-րդ տողում՝ կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը, 9-րդ տողում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը, 10-րդ տողում՝ գործարքի կատարման (ձեռքբերման) վայրի հասցեն, իսկ 11-րդ տողում՝ գործարքի կատարման (ձեռքբերման) վայրում կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից իրականացվող գործունեության տեսակը (տեսակները).

Նշումներ երկկողմանի հաշվարկային փաստաթղթեր չտրամադրած կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հետ գործարքի կատարման (ձեռքբերման) վայրում հայտարարության (ցուցանակի) մասին	

Լրացվում են տեղեկություններ հայտարարության (ցուցանակի) առկայության կամ բացակայության, հայտարարության (ցուցանակի) առկայության դեպքում՝ որոշ տվյալների բացակայության կամ անընթեռնելի լինելու մասին.

Տվյալներ առանց երկկողմանի հաշվարկային փաստաթղթի կատարված գործարքի վերաբերյալ	
Գործարքի կատարման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը (12)	10.05.09
Միակողմանի գնման ակտի հերթական համարը (13)	1
Ձեռքբերում կատարած անձի պաշտոնը, անունը, ազգանունը (14)	Ա.Ավագյան

12-րդ տողում նշվում է գործարքի կատարման ամսաթիվը, ամիսը և տարեթիվը, 13-րդ տողում՝ գործարքի վերաբերյալ կազմված միակողմանի գնման ակտի հերթական համարը, 14-րդ տողում՝ գործարքը կատարած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը.
(տեղեկությունների արժեքային ցուցանիշները լրացվում են դրամներով)

N/N ը/կ	Ապրանքների անվանումները (անվանացանկը)՝ ըստ տեսականու, ծառայությունների և աշխատանքների տեսակները (15)	Ապրանքների քանակը, ծառայության կամ աշխատանքի ծավալը (16)	Ապրանքի միավորի գինը, ծառայության կամ աշխատանքի սակագինը (17)	Ապրանքի, ծառայության, աշխատանքի ընդհանուր արժեքը (18)
1.	Համակարգչային տուփ (քեյս) 6901	20	12600	252,000.00
2.	Համակարգչային տուփ (քեյս) 6805	15	11400	171,000.00
3.	Համակարգչային տուփ (քեյս) 6802	3	13200	39,600.00
4.	Համակարգչային տուփ (քեյս) 6801	9	12000	108,000.00
5.	Համակարգչային տուփ (քեյս) 6605	9	10800	97,200.00
6.	Համակարգչային տուփ (քեյս) 6502	52	11400	592,800.00
7.	Համակարգչային տուփ (քեյս) 5520	20	9600	192,000.00
8.	Համակարգչային տուփ (քեյս) 5590	29	9600	278,400.00
9.	Ստեղնաշար (քեյբորդ) K 204	200	1800	360,000.00
10.	DVD_R դիսկ	700	108	75,600.00
11.	Օպտիկական մկնիկ M111 PS2	90	1800	162,000.00
12.	Օպտիկական մկնիկ M115 PS3	70	1920	134,400.00
13.	Օպտիկական մկնիկ M125 PS4	20	2040	40,800.00
14.				
15.				
	Ընդամենը (19)			**2,503,800.00**

15-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են (նշվում են) ապրանքների անվանումները (անվանացանկը), ծառայությունների կամ աշխատանքների տեսակները (ապրանքների անվանումները լրացվում են ըստ տեսականու՝ մոդելների, չափերի, գույների կամ այլ հատկանիշների), 16-րդ սյունակում՝ ապրանքների քանակը, ստացված ծառայությունների և

աշխատանքների ծավալները, 17-րդ սյունակում՝ ապրանքի միավորի գինը, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի սակագինը (դրանց առանձնացումը հնարավոր լինելու դեպքում), 18-րդ սյունակում՝ ապրանքի, ծառայության և աշխատանքի ընդհանուր արժեքը, իսկ 19-րդ տողում՝ գործարքի լրիվ արժեքով հատուցման ընդհանուր գումարը (18-րդ սյունակի տողերի հանրագումարը).

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____ ____Ա___Ավագյան_____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Գլխ. հաշվապահ _____ Մ. Մուրադյան_____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Վերը նշված տեղեկության ներկայացումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինները կկատարեն «Սիգմա» ՍՊԸ–ի կողմից ներկայացված տեղեկատվության ճշգրտության ստուգումը և «Մերի» ՍՊԸ-ում կկատարեն հսկիչ գնում, որի արդյունքի մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կտեղեկացնեն «Սիգմա» ՍՊԸ-ին: Հարկային մարմինների կողմից դրական տեղեկատվության ներկայացումից հետո, «Սիգմա» ՍՊԸ-ն կարող է իր կողմից կազմված միակողմանի հաշվարկային փաստաթուղթը համարել հիմնավորված, ազատվել 20% տուգանքի նշանակումից, 11% եկամտահարկից և ծախսագրել ձեռքբերումը սահմանված կարգին համապատասխան:

Դեպք 2: «Սիգմա» ՍՊԸ 2009 թ մայիսի 10-ին «Մերի» ՍՊԸ-ից ձեռք է բերել 2.500.000 դրամի ապրանք, որի դիմաց «Մերի» ՍՊԸ-ն դուրս է գրել սահմանված կարգով հաշիվ-ապրանքագիր, սակայան հաշիվ ապրանքագրում ներառված տվյալները էականորեն տարբերվում են փաստացի կատարված ձեռքբերումների տվյալներից: «Մերի» ՍՊԸ-ի դուրս գրված հաշիվ ապրանքագրում (ՀԱ N 215, առ. 10.05.09) հատուցման գումարը կազմում է 1.500.000 դրամ, և, որպես հետևանք, ապրանքագրում ներկայացված միավորի գները իրական գներից տարբերվում են 60%-ով: Որպեսզի «Սիգմա» ՍՊԸ-ն կարողանա հիմնավորել և ծախսագրել իր ձեռքբերումների ամբողջ արժեքի չափով՝ 2.500.000 դր, նա ձեռքբերման ամսաթվից հետո 5 շխատանքային օրվա ընթացում պետք է իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնի ՀՀ կառավարության կողմից հաստատված ձևի տեղեկանք (կից ներկայացված է տեղեկության լրացված տարբերակը):

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՄ ՆՇՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԷԱԿԱՆՈՐԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկություններ ներկայացնող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) տվյալները		Փաստաթղթի հերթական համարը N_____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	(1)	0 0 0 0 0 0 0 0
Կազմակերպության անվանումը	(2)	«Սիգմա» ՍՊԸ
Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	(3)	
Գտնվելու (հաշվառման) վայրը	(4)	ՀՀ, ք. Երևան, Աբովյան 11
Հեռախոսահամարը	(5)	
Տեղեկությունների դիմային էջին կցվող էջերի քանակը (տառերով)		
Տեղեկություններին կցվող փաստաթղթերի պատճենների էջերի քանակը (տառերով)		
Տեղեկություններ ներկայացնելու ամսաթիվը	(6)	13.05.09

1-ին տողում նշվում է հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն, 2-րդ տողում՝ կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը, իսկ 3-րդ տողում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը.
4-րդ տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, 5-րդ տողում՝ աշխատանքային (տան) հեռախոսահամարը, իսկ 6-րդ տողում՝ հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու ամսաթիվը.

Տեղեկություններ հաշվարկային փաստաթղթում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով հաշվարկային փաստաթղթեր տրամադրած կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) վերաբերյալ									
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	(7)	2	1	1	1	1	1	1	1
Կազմակերպության լրիվ անվանումը	(8)	«Մերի» ՍՊԸ							
Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	(9)								
Գործարքի կատարման (ձեռքբերման) վայրի հասցեն	(10)	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 11							
Գործունեության տեսակը (տեսակները)	(11)	Արևտուր							
Գործարքը կատարած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը	(12)	Ա. Ավագյան							

7-րդ տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-ն, 8-րդ տողում՝ կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը, 9-րդ տողում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը, 10-րդ տողում՝ գործարքի կատարման (ձեռքբերման) վայրի հասցեն, 11-րդ տողում՝ գործարքի կատարման (ձեռքբերման) վայրում կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից իրականացվող գործունեության տեսակը (տեսակները), իսկ 12-րդ
տողում՝ գործարքը կատարած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը.

NN ը/կ	Ապրանքների անվանումները (անվանացանկը)՝ ըստ տեսականու, ծառայությունների և աշխատանքների տեսակները		Ապրանքների տեսականին		Ապրանքների քանակը, ծառայության կամ աշխատանքի ծավալը		Ապրանքի միավորի գինը, ծառայության կամ աշխատանքի սակագինը		Ապրանքի, ծառայության, աշխատանքի ընդհանուր արժեքը	
	դուրս գրված փաստա-թղթով (17)	փաս-տացի (18)	դուրս գրված փաստա-թղթով (19)	փաս-տացի (20)	դուրս գրված փաստա-թղթով (21)	փաս-տացի (22)	դուրս գրված փաստա-թղթով (23)	փաս-տացի (24)	դուրս գրված փաստա-թղթով (25)	փաս-տացի (26)
1.	Համակարգչային տուփ (քեյս) 6901	Համակարգչային տուփ (քեյս) 6901			20	20	8000	12800	160000	256000
2.	Համակարգչային տուփ (քեյս) 6805	Համակարգչային տուփ (քեյս) 6805			15	15	6000	9400	90000	141000
3.	Համակարգչային տուփ (քեյս) 6802	Համակարգչային տուփ (քեյս) 6802			3	3	6900	12000	20700	36000
4.	Համակարգչային տուփ (քեյս) 6801	Համակարգչային տուփ (քեյս) 6801			9	9	8000	13000	72000	117000
5.	Համակարգչային տուփ (քեյս) 6605	Համակարգչային տուփ (քեյս) 6605			9	9	7900	12800	71100	115200
6.	Համակարգչային տուփ (քեյս) 6502	Համակարգչային տուփ (քեյս) 6502			52	52	6100	10000	317200	520000
7.	Համակարգչային տուփ (քեյս) 5520	Համակարգչային տուփ (քեյս) 5520			20	20	5000	8000	100000	160000
8.	Համակարգչային տուփ (քեյս) 5590	Համակարգչային տուփ (քեյս) 5590			29	29	5000	8000	145000	232000
9.	Ստեղնաշար (քեյբորդ) K 204	Ստեղնաշար (քեյբորդ) K 204			200	200	1200	2000	240000	400000
10.	DVD_R դիսկ	DVD_R դիսկ			700	700	100	200	70000	140000
11.	Օպտիկական մկնիկ M111 PS2	Օպտիկական մկնիկ M111 PS2			90	90	1000	1600	90000	144000
12.	Օպտիկական մկնիկ M115 PS3	Օպտիկական մկնիկ M115 PS3			70	70	1200	2400	84000	168000
13.	Օպտիկական մկնիկ M125 PS4	Օպտիկական մկնիկ M125 PS4			20	20	2000	3540	40000	70800
14.										
15.										
….										
Ընդամենը (27)									**1,500,000**	**2,500,000**

17-րդ և 18-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են ապրանքների անվանումները (անվանացանկը), ծառայությունների կամ աշխատանքների տեսակները, 19-րդ և 20-րդ սյունակներում՝ ապրանքների տեսականին՝ ըստ մոդելների, չափերի, գույների կամ այլ հատկանիշների, 21-րդ և 22-րդ սյունակներում՝ ապրանքների քանակը, ստացված ծառայությունների և աշխատանքների ծավալները, 23-րդ և 24-րդ սյունակներում՝ ապրանքի միավորի գինը, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի սակագինը (դրանց առանձնացումը հնարավոր լինելու դեպքում), 25-րդ և 26-րդ սյունակներում՝ ապրանքի, ծառայության և աշխատանքի ընդհանուր արժեքը, իսկ 25-րդ և 26-րդ սյունակների 27-րդ տողին համապատասխանող վանդակներում՝ գործարքի լրիվ արժեքով հատուցման ընդհանուր գումարները (25-րդ և 26-րդ սյունակների տողերի հանրագումարները).

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Գլխ. հաշվապահ _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Տեղեկություններում ապրանքների անվանումները չտեղավորվելու դեպքում կազմվում են տեղեկությունների դարձերեսներ: Տեղեկությունների դիմային էջին կցվող յուրաքանչյուր դարձերես համարակալվում է, կնքվում ու ստորագրվում: Տեղեկությունները հարկային մարմին ներկայացվում են երկու օրինակից: Տեղեկություններն առձեռն հարկային մարմին ներկայացվելու դեպքում հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է կազմակերպությանը (անհատ ձեռնարկատիրոջը):

Նշված տեղեկատվությունը հարկային մարմինների կողմից սահմանված կարգով հիմնավորվելուց հետո հինք է հանդիսանում «Սիգմա» ՍՊԸ-ի համար փաստացի ձեռքբերված ապրանքների հատուցման գումարի չափով համարել հաշվարկային փաստաթուղթ:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ

Ի տարբերություն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը սահմանում է առանձին հարկատեսակի՝ ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) առաջացման, հաշվարկման, հաշվետվությունների ներկայացման և վճարումների կատարման ընթացակարգերը: Ինչպես հայտնի է, օրենքով սահմանված է ԱԱՀ չվճարող տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց համար ԱԱՀ-ի շեմ, որը հիմնականում ներառում է փոքր և միջին հարկ վճարողների: Նշված պատճառով առավել մանրամասն կներկայացվեն ԱԱՀ չվճարող դառնալու առանձնահատկությունները:

Ի՞նչ է Ավելացված Արժեքի հարկը /ԱԱՀ/

❖ Ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Ովքե՞ր են համարվում ԱԱՀ վճարողներ

❖ *ԱԱՀ վճարող են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և ստորև նշված գործարքներն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները,*

1. *ապրանքների մատակարարում,*
2. *ծառայությունների մատուցում,*
3. *անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառում,*
4. *ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծում)*

իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները,

❖ *Անձինք, որոնց կողմից նախորդ օրացույցային տարում իրականացրած վերը նշված գործարքների մասով հարկվող շրջանառությունը գերազանցում է 58.35 մլն դրամը, ԱԱՀ վճարող են համարվում 58.35 մլն (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար:*

Ովքե՞ր են համարվում ԱԱՀ չվճարող անձիք

1. Անձիք, որոնք օրենքով սահմանված կարգով գործում են ԱԱՀ փոխարինող հարկատեսակով՝ հաստատագրված վճարներով,
2. Այն անձիք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, ինչպես նաև անհատույց կամ մասնակի հատուցմամբ գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար: 58,35 միլիոն դրամ շրջանառության չափի որոշման նպատակով հաշվի է առնվում նաև ԱԱՀ-ին փոխարինող հաստատագրված վճարներով հարկվող օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացումից ստացման ենթակա հասույթը:

/«Ա» ՍՊԸ-ի 2008թ-ի իրացման շրջանառությունը կազմել է 58,36 միլիոն դրամ:
2009թ-ից «Ա» ՍՊԸ-ն կհամարվի ԱԱՀ վճարող կազմակերպություն 58,35 միլիոն դրամ սահմանային շեմը գերազանցելու պատճառով/:

/«Բ» ՍՊԸ զբաղվում է մանրածախ առևտրով, վարսավիրական ծառայության մատուցմամբ, ինչպես նաև տրամադրում է իրեն սեփականության իրավունքով պատկանող մարդատար ավտոմեքենան վարձակալության՝ 5 տարի ժամկետով: «Բ» ՍՊԸ-ի 2008թ-ի իրացման շրջանառությունը կազմել է 58,3 միլիոն դրամ՝ բոլոր գործունեության մասերով: 2009թ-ին «Բ» ՍՊԸ-ն չի համարվի ԱԱՀ վճարող, քանի որ նրա իրացման շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամ սահմանային շեմը (եթե համարենք որ ԱԱՀ վճարող չհամարվելու մնացած բոլոր պայմանները նույնպես բավարարված են): 2009թ-ի հուլիսի 31-ին պարզ է դառնում, որ հաշվետու տարվա ընթացքում կազմակերպության կողմից մատակարարված ապրանքներից առաջացած հասույթը կազմում է 25,36 միլիոն դրամ, վարսավիրական ծառայությունների մատուցումից առաջացած հասույթը կազմում է 27,3 միլիոն դրամ, վարձակալական ծառայությունից առաջացած հասույթը 6,3 միլիոն դրամ: Ակնհայտ է, որ կազմակերպությունը գերազանցել է 58.35 միլիոն դրամ սահմանային շեմը, քանի որ նրա ընդհանուր իրացման շրջանառությունը կազմել է 58.96: «Բ» ՍՊԸ-ն հուլիսի 31-ից կհամարվի ԱԱՀ վճարող 58.96-58.35=0.61 միլիոն դրամ հարկվող շրջանառության մասով/:

Որո՞նք են ԱԱՀ-վճարող համարվելու պայմանները անկախ իրացման շրջանառության ծավալից

ա) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները կամ ներմուծողները.

/«Բ» ՍՊԸ-ն զբաղվում է գինու և կոնյակի արտադրությամբ, 2008թ-ին նրա իրացման շրջանառությունը կազմել է 27,1 միլիոն դրամ, 2009թ-ին «Բ» ՍՊԸ-ն կհամարվի ԱԱՀ վճարող, քանի որ զբաղվում է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրությամբ և իրացմամբ/: Անգամ եթե 2008թ. «Բ» ՍՊԸ-ն դադարեցրած լինի իր գործունեությունը սակայն տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ունենա լիցենզիա՝ ապա նա միևնույն է կհամարվի 2009թ. ԱԱՀ վճարող: Ակցիզային հարկով հարկվող ապրանք ներմուծած կամ արտադրած անձը համարվում է ԱԱՀ վճարող մինչև տվյալ տարվա ավարտը անգամ եթե նա դադարեցրել է իրականացնել տվյալ գործունեությունը:

բ) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնողները կամ լիցենզիա ունեցողները, որոնց գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 100 հազար դրամ կամ ավելի.

«Բ» ՍՊԸ-ն զբաղվում է այնպիսի գործունեությամբ, որի համար սահմանված լիցենզիայի տուրքի գումարը կազմում է տարեկան 100.000 դրամ: Անկախ 2008թ-ի իրացման շրջանառության ծավալից կազմակերպությունը 2009թ-ից կհամարվի ԱԱՀ վճարող: Եթե ընկերությունը միաժամանակ զբաղվի մի քանի այնպիսի գործունեության տեսակներով, որոնց լիացենզիայի տուրքերի հանրագումարը գերազանցեր 100.000 դրամը, իսկ մեկ լիցենզիայի տուրքը լիներ պակաս քան 100.000՝ ընկերությունը կհամարվի ԱԱՀ չվճարող: Ըսդ որում ընթացիկ տարում 100.000 դրամ և ավել պետական տուրքով լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու կամ լիցենզիա ստացանալու դեպքում ընկերությունը կհամարվի ԱԱՀ վճարող մինչև այդ տարվա ավարտը:

գ) այն կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց պատկանում է այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին).

/2008թ-ին «Բ» ՍՊԸ-ն ձեռք է բերում «Գ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 21%-ը, 2009թ-ից «Բ» ՍՊԸ-ն պետք է համարվի ԱԱՀ վճարող/,
/Ա/Ձ Պետրոս Պետրոսյանին պատկանում է «Ա» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 21%-ը, Ա/Ձ Պետրոս Պետրոսյանը 2009թ-ից կհամարվի ԱԱՀ վճարող/:

դ) այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի.

/2008թ-ին «Բ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 21%-ը ձեռք է բերել «Գ» ՍՊԸ-ն, 2009թ-ից «Բ» ՍՊԸ-ն պետք է համարվի ԱԱՀ վճարող/,
/2008թ-ին «Բ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 21%-ը ձեռք է բերել Ա/Ձ Պետրոս Պետրոսյանը 2009թ-ից «Բ» ՍՊԸ-ն պետք է համարվի ԱԱՀ վճարող/:

ե) այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին), ընդ որում, այս դեպքում կազմակերպություններից ոչ մեկի նկատմամբ ԱԱՀ -ի չեմը չի կարող տարածվել.

/Քաղաքացի Պետրոս Պետրոսյանը 2008թ-ին ձեռք է բերել «Ա» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 21%-ը, «Բ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 21%-ը, «Գ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 19%-ը, 2009թ-ից «Ա» և «Բ» ՍՊԸ-ները կհամարվեն ԱԱՀ վճարող, իսկ «Գ» ՍՊԸ-ն ոչ (եթե համարենք, որ ԱԱՀ վճարող չլինելու մյուս պայմանները բավարարված են)/:

գ/, դ/, ե/ կետերի մասով ուշադրության է արժանի, որ կանոնադրական կապիտալում տոկոս ընդունվում է տվյալ տարվա հունվարի մեկի դրությամբ հաշվարկված տոկոսը: Ընթացիկ տարվա ընթացքում կանոնադրական կապիտալում տոկոսը սահմանված չափից նվազելու կամ դադարելու դեպքում՝ անձը միևնույն է համարվում է ԱԱՀ վճարող՝ մինչեւ ընթացիկ տարվա ավարտը, օրենքով սահմանված չափը գերազանցելու դեպքում կամ ե/ կետում նշված պայման առաջանալու դեպքում՝ անձը համարվում է ԱԱՀ վճարող՝ գերազանցման պահից մինչեւ ընթացիկ տարվա ավարտը: Անհատ Ձեռնարկատիրոջ մասնակցության իմաստով հաշվի չեն առնվում այնպիսի հանգամանքներ, որ անձը ընկերության մասնակից դառնալու պահին հանդես չի եկել (չի ներկայացել) որպես Ա/Ձ, կամ անձը դարձել է Ա/Ձ ավելի ուշ, քան ձեռք է բերել ընկերության կապիտալի համապատասխան տոկոսը:

զ) այն առևտրային կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում առևտրական գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերվող ապրանքների մատակարարումից կամ ծառայությունների մատուցումից (բացառությամբ գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման և տոկոսների ստացման) հաշվարկված եկամուտների առնվազն 80 տոկոսը վերաբերում է մեկ հարկ վճարողից ստացման ենթակա եկամուտներին, և (կամ) որի կողմից նախորդ օրացուցային տարում առևտրական գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերվող ապրանքների ձեռքբերման (բացառությամբ ներմուծման) համար կատարման ենթակա ծախսերի առնվազն 80 տոկոսը վերաբերում է մեկ հարկ վճարողի.

Նշված կետի մեկնաբանման առումով ուշադրության են արժանի.

- *ասելով "հարկ վճարող" հասկանում ենք ցանկացած կազմակերպություն կամ ֆիզիկական անձ,*
- *Նախորդ օրացուցային տարում ստացած եկամուտների 80% պայմանը չի տարածվում այն կազմակերպությունների վրա, որոնց եկամուտների 80% և ավելի ստացվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքին համապատասխան մատակարարված ապրանքներից եւ մատուցված ծառայություններից,*
- *Նախորդ տարում ստացված եկամուտները հաշվելիս հաշվի են առնվում՝ ապրանքների մատակարարումից եւ ծառայությունների մատուցումից հաշվարկված բոլոր եկամուտները, այդ թվում՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքին համապատասխան եկամուտները, այն գործարքներից եկամուտները, որոնց վրա չի տարածվում օրենքի գործողությունը, ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից, ՀՂՄ կիրառմամբ ապրանքների մանրածախ վաճառքից եւ ծառայությունների մատուցումից եկամուտները: Ընդ որում՝ ՀՂՄ միջոցով արծանագրված եկամուտները դիտվում են որպես ՀՂՄ-ների տրամադրված կտրոնների թվին համապատասխանող թվով հարկ վճարողներից ստացված եկամուտներ,*
- *հարկ վճարողից ստացման ենթակա եկամուտները կամ կատարման ենթակա ծախսերը հաշվարկելիս ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի գումարները հաշվի չեն առնվում: Կատարման ենթակա ծախս են համարվում առեւտրական գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերված (այդ թվում՝ ներմուծված) ապրանքների ընդհանուր արժեքը,*
- *նախորդ օրացուցային տարում կատարման ենթակա ծախսերի մեջ մեկ հարկ վճարողին բաժին ընկնող մասը հաշվարկելիս հաշվի են առնվում բոլոր ձեռքբերումները (այդ թվում՝ ներմուծումները): Ընդ որում՝ եթե առեւտրական գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերվող ապրանքների ձեռքբերման համար կատարման ենթակա ծախսերի 80 եւ ավելի տոկոսը բաժին է ընկնում ներմուծումներին, ապա հարկ վճարողը վերը ներկայացվաշ ընդհանուր կարգով է որոշում անցել է 80% շեմը թե ոչ:*

է) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, որոնք մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի, որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարում են կատարել: Եվ տվյալ դեպքում շված անձի համար հարկվող է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Ընդ որում նման գործարքների մասով հարկվող շրջանառության չափը սահմանվում է ապրանքի մատակարարում համարվող գործարքների համար որոշվող հարկվող շրջանառության մասով:

2009թ-ին քաղաքացի Պետրոս Պետրոսյանը ձեռք է բերել 3 սենյականոց բնակարան, ավտոտնակ և մարդատար ավտոմեքենա, որոնցից 2009 թ-ին իրացրել է ավտոտնակը և մարդատար ավտոմեքենան, նշված գործարքների մասով Պետրոս Պետրոսյանը չի համարվի ԱԱՀ վճարող, իսկ եթե նա 2009թ-ի ընթացքում կրկին անգամ ձեռք բերեր ավտոտնակ և այն իրացներ նույն տարվա ընթացքում, ապա 2-րդ ավտոտնակի իրացումը կդիտվի որպես ապրանքների մատակարարում և կհարկվի ԱԱՀ-ով: Ընդ որում նշված դեպքում 58.35 միլիոն չհարկվող շեմը չի գործում:
Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ եթե քաղաքացին երկրորդ անգամ ոչ թե վաճառեր այլ նվիրեր գույքը, այսինքն առանց հատուցման օտարեր, ապա այս դեպքում ԱԱՀ վճարող չեր համարվի:

Ը) Անձինք, որոնք, օրենքի համաձայն, չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին գրավոր հայտարարություն են ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ, հայտարարությունում նշված օրվանից, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, համարվում են ԱԱՀ վճարողներ:

Վերը նշված դրույթից պարզ է դառնում, որ եթե ԱԱՀ վճարող համարվելու հայտարարությունը հարկային մարմնին ներկայացնեք օրինակ 2009թ-ի մարտի 24-ին, ապա 2009թ-ի առաջին եռամսյակից կհամարվենք ԱԱՀ վճարող, այսինքն ԱԱՀ վճարող համարվելու համար հայտարարությունը հարկային մարմնին անհրաժեշտ է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում որևէ օր:

Ը) Օրենքով սահմանված կարգով որպես բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող և (կամ) սեփականատեր հանդիսացող (այսուհետ հոդվածում՝ կառուցապատող)՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների, անհատական բնակելի տների օտարումը (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) համարվում է ապրանքի մատակարարում, բացառությամբ՝

1) բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների ընդհանուր մակերեսի մինչև տասը տոկոսի, սակայն ոչ ավելի, քան 500 քառակուսի մետր մակերեսի օտարումը.

2) բնակելի թաղամասերում կամ համալիրներում մինչև 4 անհատական բնակելի տների օտարումը:

ՀՀ քաղաքացին, 2009թ-ի փետրվար ամսին ավարտում է 2700քմ մակերոսով բազմաբնակարան շենքի շինարարությունը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողատարածքում: Ընդ որում բնակարանների կադաստրային արժեքը 200.000 դրամ մեկ ք.մ. դիմաց:
2009թ. մայիս ամսին քաղաքացին վաճառում է իր կողմից կառուցապատած շենքից 2000 ք.մ քմ 300.000 դրամ արժեքով, իսկ հունիս ամսին նվիրում է ընտանիքի անդամներին մնացած 700 ք.մ.: Նշենք նաև, որ վաճառքից հասույթը կազմում է (2.000 x 300.000) 600.000.000 դրամ:
քաղաքացու հարկային պարտավորությունը տվյալ գործարքների գծով կհաշվարկվի.
Վաճառված մակերեսները կնվազեցվեն 270ք.մ մակերեսով, քանի որ կառուցապատման տաս տոկոսը կազմում է 270 ք.մ. (2.700x10%), այնուհետև ստացված մակերեսը կհամարվի հարկվող շրջանառություն՝ 2.000 - 270 = 1.730 ք.մ.: Համապատասխանաբար և կնվազեցվի իրացումից ստացված հասույթը՝ 1.730 x 300.000 = 519.000.000՝ ներառյալ ԱԱՀ:
Նվիրաբերված 700 ք.մ. նկատմամբ կկիրառվի կադաստրային արժեքով հարկվող շրջանառության հաշվարկման մոտեցումը՝ 700 x 200.000 = 140.000.000՝ առանց ԱԱՀ:
Այսպիսով, ԱԱՀ կկազմի՝ 519.000.000 x 16.67% + 140.000.000 x 20% = 114.517.300 դրամ:

Ինչպե՞ս է որոշվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը

1) ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում (բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի) ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ ներառյալ արդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումներ ՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում:
Եթե առքուվաճառքի առարկան ներառում է շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա, ապա այդ տարայի արժեքը չի ներառվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ, բացառությամբ ապրանքների արտահանման դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ տարան իրացնում է անմիջական արտադրողը կամ ներմուծողը.

«Բ» ՍՊԸ-ն իրացրել է իր կողմից պատրաստված ապակյա տարաներով պահածոներ 2500 հատ 5,5 միլիոն դրամ արժեքով, ընդ որում յուրաքանչյուր տարայի համար կազմակերպությունը վճարել էր 150 դրամ, ինչպես նաև իրացրել է 100 հատ սեղան յուրաքանչյուրը՝ 25.000 դրամով: Նշված գործարքների մասով հարկվող շրջանառությունը կհաշվարկվի՝

- *իրացված պահածոների մասով հարկվող շրջանառությունը կկազմի՝ 5.500.000-(2500*150) = 5.125.000 դրամ,*
- *սեղանների վաճառքի մասով՝ 100 x 25.000 = 2.500.000 դրամ:*

2) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը.

*«Բ» ՍՊԸ-ն ներմուծել է ապրանքներ, որոնց մաքսային արժեքը կազմում է 5,5 միլիոն դրամ, որոնք հարկվում են ինչպես մաքսատուրքով, այնպես էլ ակցիզային հարկով: Ակցիզային հարկի գումարը կազմում է 500.000 դրամ: ԱԱՀ-ի հարկվող շրջանառությունը կլինի՝ 5.500.000+5.500.000*10%+500.000 = 6.550.000 դրամ:*

3) ԱԱՀ վճարող անձանց կողմից մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման կամ նորոգման նպատակով Հայաստանի Հանրապետության ներքին տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց վերամշակման կամ նորոգման արժեքը, որը որպես հատուցում պետք է վճարվի օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին կամ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրյա ֆիզիկական անձանց), իսկ այդ արժեքի որոշման անհնարինության դեպքում՝ ապրանքների վերամշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը.

«Բ» ՍՊԸ-ն, որը համարվում է ԱԱՀ վճարող, 2009թ-ի հունվար ամսին ՀՀ-ից արտահանում է առամանդ 250.000 միլիոն դրամ արժեքով Ռուսաստանի Դաշնություն վերամշակման նպատակով: Վերամշակման աշխատանքների արժեքը կազմում է 15.000 ԱՄՆ դոլար: Վերամշակումից հետո, երբ ապրանքը ներմուծվում է ՀՀ, ԱԱՀ-ի հարկվող շրջանառությունը վերամշակման արժեքն է: Տվյալ դեպքում 15000 ԱՄՆ դոլար արտահայտած ՀՀ դրամով:/

*«Բ» ՍՊԸ-ն, որը համարվում է ԱԱՀ վճարող, 2009թ-ի հունվար ամսին ՀՀ-ից արտահանում է առամանդ 250.000 միլիոն դրամ արժեքով և 290.000 միլիոն դրամ մաքսային արժեքով Ռուսաստանի Դաշնություն վերամշակման նպատակով: Ենթադրենք վերամշակման աշխատանքների արժեքը անհնարին է որոշել: Աշխատանքների կատարումից հետո, առամանդը ՀՀ ներմուծելիս մաքսային արժեքը գնահատվում է 320.000 միլիոն դրամ: ԱԱՀ-ի հարկվող շրջանառությունը տվյալ դեպքում կկազմի 320.000-290.000=**30.000 միլիոն դրամ**:*

4) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելիս (ներառյալ այդ անձանց սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծելիս) պայմանագրային հարաբերությունների կողմ (ներառյալ կոնտրագենտ) հանդիսացող Հայաստանի Հանրապետության անձինք (այդ թվում քաղաքացիները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, տեղական ինքնակառավարման և պետական մարմինները) այդ գործարքների գծով օտարերկրյա անձանց փոխարեն կրում են հարկային պարտավորություն.

*«Բ» ՍՊԸ-ն, 2009թ-ի մարտ ամսին Ռուսաստանի Դաշնության «Ա» կազմակերպությունից ստացել է նախագծման աշխատանքների գծով ծառայություն, որի արժեքը 02.03.09թ-ին դուրս գրված հաշիվ ապրանքագրի համաձայն կազմում է 30.000 USD: 02.03.09թ-ին ՀՀ ԿԲ-ի կողից USD-ի փոխարժեքը սահմանված է 1 USD = 370 դրամ: Քանի որ Ռուսաստանի Դաշնության «Ա» կազմակերպությունը չունի ՀՀ-ում պետական գրանցում, ուստի պայմանագրի կողմ հանդիսացող «Բ» ՍՊԸ-ն պարտավոր է Ռուսաստանի Դաշնության «Ա» կազմակերպության փոխարեն սահմանված ընդհանուր կարգով կրել ԱԱՀ-ի մասով հարկային պարտավորություն 30.000*370*16.67% արժեքի չափով:*

5) Հանձնարարության, կոմիսիայի և գործակալության հիմունքներով ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում հարկվող շրջանառություն է համարվում միջնորդավճարը (գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր)՝ առանց ԱԱՀ-ի, եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ.

«Բ» ՍՊԸ-ն, որը համարվում է ԱԱՀ վճարող, 2009թ-ի ապրիլ ամսին «Գ» ՍՊԸ-ին կոմիսիոն պայմանագրով տրամադրում է 7.0 միլիոն դրամի ապրանք՝ վաճառելու, որի համար պայմանագրով սահմանված կարգով պարտավորվում է՝ վճարել ապրանքների արժեքի 10%-ը : Մայիսին «Գ» ՍՊԸ-ն իրացնում է ողջ ապրանքը և 31.05.09թ-ին «Բ» ՍՊԸ-ին ներկայացնում հարկային հաշիվ 0.7 միլիոն դրամ գումարած 0.14 միլիոն դրամ ԱԱՀ, քանի որ 0.7 միլիոն դրամը համարվում է ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն:

6) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են իրական արժեքից էականորեն ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ սույն օրենքին համապատասխան որոշվող մեծությունը (գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը), իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը (գործարքի իրական արժեքը).

«Ա» ՍՊԸ-ն, (որը համարվում է ԱԱՀ վճարող), «Բ» ՍՊԸ-ին անհատույց հանձնում է 10 համակարգիչ: Ընդ որում «Ա» ՍՊԸ-ն իրականացնում է համակարգիչների մանրածախ առևտուր և իր խանութից նշված տիպի համակարգիչները վաճառում է մեկ հատը առանց ԱԱՀ 150.000 դրամ արժեքով: Տվյալ դեպքում «Ա» ՍՊ ընկերության հարկվող շրջանառությունը հավասար կլինի 150.000 x 10 = 1.500.000 դրամ:

7) փոխանակման գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը որոշվում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար սույն օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով այդ ապրանքների մատակարարման ու ծառայությունների մատուցման պահին դրանց սովորաբար կիրառվող գինը՝ առանց ԱԱՀ-ի.

«Ա» ՍՊԸ-ն (որը համարվում է ԱԱՀ վճարող) «Բ» ՍՊԸ-ին փոխանակման կարգով տրամադրում է համակարգիչ, ստանալով դիմացը 2 տպող սարք: Համակարգչի սովորաբար կիրառվող գինը շուկայում այդ պահին կազմում է 150.000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի, իսկ տպող սարքինը՝ 75.000 դրամ:

Տվյալ դեպքում գործարքի երկու կողմերի մոտ կառաջանա 150.000 դրամի չափով հարկվող շրջանառություն:

Ուշադրության է արժանի որ նույն գործարքից երկու կողմերն էլ կզրկվեն ԱԱՀ-ի հաշվանցում կատարելու իրավունքից:

8) ակցիզային հարկով հարկվող ապրանքների մատակարարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ ներառվում է նաև ակցիզային հարկի գումարը:

9) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքի:
Գերակա հանրային շահերով հասարակության և պետության կարիքների համար օտարվող (օտարված) սեփականության դիմաց սեփականատիրոջը՝ կառուցված բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքի բնակարաններով կամ այլ տարածքներով, իսկ բնակելի թաղամասերում կամ համալիրներում՝ բնակելի տներով հատուցելու դեպքում, ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում ,Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով որոշվող արժեքը:
Շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործարքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով, բայց ոչ պակաս գույքահարկով հարկման նպատակով՝ օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի բաժնեմասին համապատասխանող արժեքի հինգ տոկոսից՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ մեծությունը, ըստ ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանների, բաշխվում է հավասարաչափ:

1. 2009թ-ին ՀՀ քաղաքացին ձեռք է բերել 3 սենյականոց բնակարան, ավտոտնակ և մարդատար ավտոմեքենա, որոնցից 2009թ-ին իրացրել է ավտոտնակը և մարդատար ավտոմեքենան, նշված գործարքների մասով քաղաքացին չի հասարվի ԱԱՀ վճարող: 2009թ-ի ընթացքում քաղաքացին կրկին անգամ ձեռք է բերում 1.500.000 դրամ արժեքով ավտոտնակ և այն նվիրում եղբորը նույն տարվա ընթացքում: 2-րդ ավտոտնակի օտարումը դիտարկվում է, որպես ապրանքների մատակարարում և հարկվում է ԱԱՀ-ով: Ի դեպ ԱԱՀ –ով հարկվող շրջանառությունը հավասար է ավտոտնակի՝ օտարման պահի դրությամբ կադաստրային արժեքին:
2. 2009թ-ի հունվար ամսից ՀՀ քաղաքացին «Բ» ՍՊԸ-ին անհատույց վարձակալության է տրամադրում վարչական նշանակության շենք, որի կադաստրային արժեքը 1.500,0 միլիոն դրամ է:
Տվյալ օրինակում քաղաքացին պարտավոր է գրանցվել իր բնակության վայրը սպասարկող հարկային տեսչություն և ներկայացնել եռամսյակային ԱԱՀ –ի հաշվարկներ հետևյալ սկզբունքով.
Հարկվող շրջանառությունը տարեկան կհաշվարկվի՝ 1.500.000.000 x 5% = 75.000.000 դրամ,
Ամսեկան հարկվող շրջանառությունը կկազմի՝ 6.250.000 դրամ,
Առաջին ինը ամիսներին քաղաքացին չի համարվի ԱԱՀ վճարող քանի որ նրա ստացված եկամուտը չի գերազանցի 58.35 միլիոն դրամը:
Չորրորդ եռամսյակի համար քաղաքացու հարկվող շրջանառությունը կկազմի՝ (75.000.000-58.350.000) 16.650.000 դրամ, որի նկատմամբ կկիրառվի 20% դրույքաչափով ԱԱՀ:

Որքա՞ն է ԱԱՀ-Ի դրույքաչափը.

1) ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:
Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով:

*«Ա» ՍՊԸ-ն, (որը համարվում է ԱԱՀ վճարող) 2009թ-ի հունվար ամսին «Բ» ՍՊԸ-ին մատակարարել է ապրանք (համակարգիչ)՝ 200.000 դրամ արժեքով՝ առանց ԱԱՀ-ի: ԱԱՀ-ի գումարը որոշվում է հետևյալ կերպ՝ 200.000*20%=40.000 դրամ:*
*«Ա» ՍՊԸ-ն, (որը համարվում է ԱԱՀ վճարող) 2009թ-ի հունվար ամսին «Գ» ՍՊԸ-ին մատակարարել է ապրանք (համակարգիչ), որի դիմաց որպես հատուցում ստացել է 300.000 դրամ: Այս դեպքում ԱԱՀ-ի գումարը որոշվում է հետևյալ կերպ՝ 300.000*16.67%=50.010 դրամ:/*

2) ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկումը՝ օրենքով սահմանված որոշակի գործարքների իրացման շրջանառության (այսուհետ՝ հարկվող շրջանառություն) նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառումն է:

Որո՞նք են ԱԱՀ-ից ազատված գործարքները.

համապատասխանող արժեքի հինգ տոկոսից՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ մեծությունը, ըստ ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանների, բաշխվում է հավասարաչափ:

ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:

ԱԱՀ-ից ազատվում են հետևյալ գործարքները և գործառնությունները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատությունները, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնները, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունները, մարզադպրոցները, պրոֆտեխնիկական ուսումնարանները, որակավորման և վերաորակավորման միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ուսման վարձի մասով.

2) դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների իրացումը, բուհերի մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների իրացումը.

3) գիտահետազոտական և հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման աշխատանքները.

4) գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունում օգտագործվող թունաքիմիկատների, պարարտանյութերի, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին.

5) նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատների, մանկատների, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատությունների, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունները, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը.

6) թերթերի և ամսագրերի իրացումը.

7) թաղման բյուրոների, գերեզմանատների, ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների իրացումը.

8) կրոնական ծիսակատարությունները, կրոնական կազմակերպություններին մատակարարվող կրոնական պարագաների, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների իրացումը.

9) ապահովագրական և վերաապահովագրական գործառնությունները, ներառյալ՝ դրանց հետ կապված ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից մատուցվող ծառայությունները.

10) կենսաթոշակային ապահովման գործառնությունները ներառյալ դրանց հետ կապված միջնորդների և գործակալների կողմից մատուցվող ծառայությունները.

11) և այլն

Ո՞ր դեպքում ենք դուրս գրում հարկային հաշիվ.

ԱԱՀ վճարողներն ավելացված արժեքի հարկով հարկվող ապրանքներ մատակարարելու և ծառայություններ մատուցելու դեպքում պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվներ: Հարկային հաշիվ է համարվում ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող սահմանված կարգի հաշվարկային փաստաթուղթը՝ լրացված ներքոհիշյալ պայմանների բավարարմամբ՝

- Հարկային հաշվի մեջ պարտադիր նշվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջներին համապատասխան հաշվարկային փաստաթղթում լրացման ենթակա տվյալներն ու վավերապայմանները,
- Առանձին տողով ԱԱՀ-ի դրույքաչափը և գումարը,
- ԱԱՀ վճարողի հաշվառման համարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այդպիսի կարգ սահմանված լինելու դեպքում:

Հարկային հաշվում առանձին տվյալների և վավերապայմանների բացակայության (բացառությամբ ԱԱՀ-ի գումարի) կամ սխալ լրացման դեպքում հարկային հաշիվը համարվում է սահմանված կարգի խախտումով լրացված հարկային հաշիվ: Հարկային հաշվում օրենքով սահմանված չափից ավելի ԱԱՀ-ի գումար առանձնացված լինելու դեպքում պետական բյուջեի օգտին հաշվեգրման, իսկ հարկային հաշիվ ստացած անձի կողմից հաշվանցման ենթակա է օրենքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարը:

/«Ա» ՍՊԸ-ն, (որը համարվում է ԱԱՀ վճարող) 2009թ-ի հունվար ամսին «Բ» ՍՊԸ-ին մատակարարել է ապրանք (համակարգիչ)՝ 200.000 դրամ արժեքով առանց ԱԱՀ-ի, որի համար դուրս է գրել հարկային հաշիվ՝ առանձին տողով առանձնացնելով 20% ԱԱՀ-ն, որը պետք է կազմեր 40.000 դրամ, սակայն սխալմամբ նշվել է 45.000 դրամ: «Ա» ՍՊԸ-ն պարտավոր է պետական բյուջե վճարել հարկային հաշվում առանձին տողով նշված ԱԱՀ-ի գումարը՝ 45.000 դրամ, իսկ «Բ» ՍՊԸ-ն իրավուն չունի հաշվանցել հարկային հաշվում առանձին տողով ներկայացված 45.000 դրամ ԱԱՀ-ն քանի որ 200.000 դրամ հարկվող շրջանառության նկատմամբ կիրառելով 20% դրույքաչափ կստանանք 40.000 դրամ, ինչն էլ կարող է հաշվանցել «Բ» ՍՊԸ-ն (եթե համարենք որ հաշվանցում կատարելու մնացած պայմանները բավարարված են): /

Ո՞ր դեպքում հարկային հաշիվ դուրս չեն գրում.

.

1) ԱԱՀ վճարող չհանդիսացող անձանց կողմից.
2) այն ապրանքների և ծառայությունների համար, որոնք օրենքով ազատված են ԱԱՀ-ից.
3) հարկման օբյեկտ չհանդիսացող կամ զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) համար:

Վերը նշված դեպքերում հարկային հաշվի փոխարեն լրացվում (կազմվում) են ընդհանուր կարգով սահմանված այլ հաշվարկային (այդ թվում՝ բեռնաառաքման) և վճարային փաստաթղթեր:

Օրենքի պահանջները խախտելու և հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում անձինք պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը սահմանված ընդհանուր կարգով վճարել բյուջե:

Հաշվանցումներ կատարելու կարգը

ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են՝

1) արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (բացառությամբ որոշ դեպքերի), որոնց դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում: Հաշվանցվում է նաև

- Արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց կանխիկ դրամով վճարված գումարները օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հաշվանցվել նաև հարկային հաշիվներում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում և (կամ) կրճատ հաշիվ ապրանքագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով, եթե այդ գործարքների գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) յուրաքանչյուր միանվագ գործարքի համար չի գերազանցում 300 հազար դրամը, իսկ յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամը:
- Ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով ուշ ստացված հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ ստացվել է հարկային հաշիվը, բացառությամբ էլեկտրաէներգիայի գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների, որոնք կարող են հաշվանցվել նաև էլեկտրաէներգիայի ստացման հաշվետու ժամանակաշրջանում:

Ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է վճարումը:

- Արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումները մասնակիորեն կատարվելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումները կատարվում են վճարմանը համամասնորեն:
- Միանվագ գործարքի գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) 300 հազար դրամը գերազանցելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է միայն բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումներով վճարումների դեպքում, իսկ ամսվա ընթացքում 300 հազար դրամը չգերազանցող բոլոր միանվագ գործարքների ընդհանուր գումարը 3.0 միլիոն դրամը գերազանցելու դեպքում սահմանված կարգով հաշվանցման ենթակա է այն գործարքի ԱԱՀ-ի ամբողջ գումարը, որի արժեքի հանրագումարով չի գերազանցվել 3 միլիոն դրամի սահմանաչափը:
- Բացառապես 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած այն հարկ վճարողները, որոնց իրացումից հասույթը 2008 թվականի արդյունքում չի գերազանցել 50 միլիոն դրամը, 2008 թվականի հաշվետու ժամանակաշրջաններում առանց հարկային հաշիվների կարող են հաշվանցել վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների, ինչպես նաև 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա՝ նախկինում ԱԱՀ-ի գումարները չհաշվանցված և վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների մնացորդների մասով մատակարարներին կանխիկ կամ բանկային փոխանցումներով վճարված գումարների նկատմամբ ԱԱՀ-ի հաշվարկային դրույքաչափով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները, եթե առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ:

1) արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի), որոնց դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում

ԱԱՀ վճարող համարվող անձինք այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող են հաշվանցել ԱԱՀ վճարող դառնալու պահին առկա վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների ապրանքային մնացորդի մասով մատակարարների կողմից տրամադրված հաշվարկային փաստաթղթերում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված և նախկինում չհաշվանցված ԱԱՀ-ի գումարները:

ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող չհամարվելու օրացուցային տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը (առանց գերավճարի և գերավճարից տարբերվող գումարի) ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ու վերագրվում է արտադրության և շրջանառության ծախսերին:

ԱԱՀ վճարող անձանց կողմից արտադրական և այլ առևտրային նպատակներով ձեռք բերված ապրանքների կորստի դեպքում մատակարարներին (օրենքով սահմանված դեպքում՝ մաքսային սահմանին) վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման կամ վերադարձման, եթե այդ կորուստները շահութահարկով հարկման նպատակով չեն դիտվում որպես համախառն եկամտից նվազեցում:

«Ա» ՍՊԸ-ն 2007թ-ին աշխատել է պարզեցված հարկով և ունեցել է 49.000.000 դրամի շրջանառություն: Օրենքի փոփոխության հետևանքով 2008թ.-ից դարձել է ԱԱՀ վճարող: 2008թ.-ի հունվար ամսին ունեցել է 12.000.000 դրամի ապրանքային մնացորդ, որոնց մի մասի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ, իսկ մյուսինը՝ բանկային փոխանցմամբ, ընդ որում այդ մնացորդի համար ընկերությունում առկա են հարկային հաշիվներ:

2008թ.-ի հունվար ամսին կատարվել են հետևյալ գործարքները.

իրացվել է 5.000.000 դրամի ապրանք առանց ԱԱՀ

հունվարի 25-ին ձեռք է բերվել համակարգիչ 240.000 դրամ աժեքով ներառյալ ԱԱՀ, որի գծով մատակարարից ստացվել է հարկային հաշիվ: Համակարգչի դիմաց վճարումը կատարվել է բանկային փոխանցմամբ հունվարի 31-ին:

փետրվարի 3-ին ստացվել է հունվար ամսվա էլեկտրաէներգիայի հարկային հաշիվը 400.000 դրամ արժեքով ներառյալ ԱԱՀ, որի վճարումը կատարվել էր նախապես բանկային փոխանցմամբ հունվարի 10-ին 500.000 դրամի չափով:

հունվարի 13-ին ձեռք է բերվել 2.000.000 դրամ արժեքով (ներառյալ ԱԱՀ) հաստոց, ստանալով հարկային հաշիվ, որի դիմաց վճարումը կատարվել էր հունվարի 8-ին բանկային փոխանցումով՝ 1.500.000 դրամ:

հունվար ամսվա ընթացքում տասներկու անգամ ձեռք են բերվել գրասենյակային պարագաներ՝ յուրաքանչյուրը 260.000 դրամ ներառյալ ԱԱՀ, որոնց համար կատարվել են կանխիկ վճարումներ՝ ՀՀՄ կտրոններով՝ առանձնացված ԱԱՀ-ի տողով:

հունվարի 9-ին ներմուծվել է 10.000.000 դրամ արժեքով ապրանք, որի համար ՀՀ մաքսային մարմիններին վճարվել է 2.000.000 դրամ ԱԱՀ: Հունվարի 13-ին պարզ է դարձել, որ ներմուծված 10.000.000 դրամ արժեքով ապրանքից կորել է 1.000.000-ի ապրանք և շահութահարկի հարկման նպատակով այդ կորուստը համախառն եկամտից չի նվազեցվելու: Ներմուծված ապրանքից 2.000.000 դրամի ապրանք իրացրել է Իտալիայի դեսպանատանը. սույն գործարքի գծով ԱԱՀ-ի դրույքաչափը 0% է:

Որոշենք հունվար ամսվա բյուջե վճարվող կամ հաշվանցվող ԱԱՀ-ի չափը

- Քանի որ 2008թ-ի հունվար ամսին ապրանքային մնացորդը եղել է 12.000.000 դրամ և որի դիմաց առկա է վճարում, ուստի 12.000.000*16.67% = 2.000.400 դրամ ԱԱՀ իրավունք ունենք հաշվանցել,
- հունվար ամսվա 5.000.000 իրացումից կառաջանա 1.000.000 ԱԱՀ-ի պարտավորություն,
- հունվարի 25-ին ձեռք բերված համակարգչի 16.67%-ը՝ 240.000*16.67%=40.008 դրամ ԱԱՀ իրավունք ունենք հաշվանցել, քանի որ առկա են հաշվանցում կատարելու օրենքով պահանջվող բոլոր հիմքերը,
- չնայած որ էլեկտրաէներգիայի հարկային հաշիվը ստացվել է փետրվար ամսին, իրավունք ունենք հաշվանցելու 400.000*16.67%=66.680 դրամը,
- քանի որ վճարումը կատարվել է մասնակի, հունվարի 13-ին ձեռք բերված հաստոցի դիմաց ԱԱՀ պետք է հաշվանցենք վճարմանը համամասնորեն՝ 1.500.000*16.67%=250.050 դրամը,
- հունվար ամսին ունեցել ենք 12*260.000=3.120.000 դրամի ձեռք բերումներ, որոնց դիմաց վճարումը կատարվել էր կանխիկ: Ուստի կարող ենք հաշվանցել 11*260.000=2.860.000 դրամ-ի 16.67%-ը՝ 2.860.000*16.67%=476.762 դրամը,
- քանի որ հունվարի 13-ին պարզ է դարձել, որ 10.000.000 դրամ արժեքով ապրանքից կորել է 1.000.000 դրամինը, ուստի 1.000.000 համամասնորեն բաժին ընկնող ԱԱՀ-ի գումարը չենք կարող հաշվանցել՝200.000 դրամը: Ներմուծվող ապրանքի դիմաց հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը կկազմի՝1.800.000 դրամ: Քանի որ 2.000.000 դրամի իրացումը կատարվել է ԱԱՀ-ի 0% դրույքաչափով, ուստի ԱԱՀ-ի գծով պարտավորություն չի առաջանա, սակայն այդ ապրանքի համար ՀՀ մաքսային մարմիններին նախապես վճարված ԱԱՀ-ն իրավունք ունենք հաշվանցել:

Ո՞ր դեպքում ԱԱՀ-ի գումարները չենք կարող հաշվանցել

Մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները (այդ թվում նաև՝ ներմուծման պահին վճարման ժամկետը հետաձգված ԱԱՀ-ի գումարները) հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն՝

1) ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից.

2) Հարկվող օբյեկտ չհամարվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների (գործառնությունների) գծով, ինչպես նաև այն գործարքների գծով, որոնց վրա չի տարածվում ԱԱՀ մասին օրենքի գործողությունը: Սույն կետում նշված դեպքերում մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները միացվում են ապրանքները ձեռք բերելու գնին կամ արտադրության շրջանառության ծախքերին, բացառությամբ՝ հրապարակային պայմանագրերով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում իրացված ապրանքների իրացնողի կողմից անհատույց մատուցվող սպասարկման ծառայությունները, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց կոմպլեկտավորող տարրերի անհատույց փոխարինումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների արժեքում:

Ի՞նչ է շահութահարկը

Շահութահարկը կազմակերպությունների կողմից շահութահարկի մասին օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Ովքե՞ր են համարվում շահութահարկ վճարողները.

ՀՀ ռեզիդենտները (իրավաբանական անձ հանդիսացող առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ) և ոչ ռեզիդենտները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

- ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները, բացառությամբ ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ-ում առանձնացված ստորաբաժանումների.
- ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները:

Ինչի՞ց է գանձվում շահութահարկը.

1. Ռեզիդենտների համար (իրավաբանական անձ հանդիսացող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների) Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթից:

Շահութահարկ	=	Հարկվող շահույթ	X	20%

2.Ոչ ռեզիդենտների համար միայն հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթից:

Շահութահարկ	=	Հարկվող շահույթ	X	կամ 10% կամ 5%

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և շահութահարկի մասին օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Հարկվող շահույթ	=	Համախառն եկամուտ	-	Նվազեցումներ

Համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Համախառն եկամուտ	=	Հաշվետու տարվա (հունվարի1-ից դեկտեմբերի 31-ը) բոլոր եկամուտների հանրագումար

Կազմակերպությունների համար եկամուտ են համարվում.

հաշվետու տարվա (հունվարի1-ից դեկտեմբերի 31-ը) բոլոր եկամուտների գումար	=	1.ապրանքների, արտադրանքի վաճառքից հասույթ, 2.ծառայությունների մատուցումից հասույթ, 3. հիմնական միջոցների վաճառքից հասույթ, և այլն

- ապրանքների, արտադրանքի (այսուհետ՝ նաև ապրանքներ) վաճառքից ստացվող հասույթը.
- ծառայությունների մատուցումից ստացվող հասույթը.
- հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացվող հասույթը.
- փոխառության դիմաց ստացվող տոկոսները և այլ հատուցում (այսուհետ՝ տոկոսներ).
- վարձակալության դիմաց ստացվող վճարները և այլ հատուցում (այսուհետ՝ վարձավճարներ).
- գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի, կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (այսուհետ՝ ռոյալթի).
- շահաբաժինները.
- ապահովագրական հատուցումները.
- պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման, ֆակտորինգային այլ գործառնությունների իրականացումից ստացվող եկամուտները.
- ֆյուչերսների, օպցիոնների և նման այլ գործարքներից ստացվող եկամուտները.
- մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի, քարտերի և այլ գործիքների թողարկման, զեղչման, փոխանցման, զիջման կամ սպասարկման դիմաց ստացվող եկամուտները.

Կազմակերպությունների համար եկամուտ չեն համարվում.

- Կազմակերպության փայատերերի (բաժնետերերի, անդամների) կողմից կազմակերպության կանոնադրական կապիտալ կատարված ներդրումները,
  /«Ա» ՍՊԸ-ի հիմնադիրներից Պողոս Պողոսյանը կազմակերպությունում ավելացնում է իր բաժնեմասը՝ կատարելով ներդրում 200.000 դրամի: 200.000 դրամի ներդրումը «Ա» ՍՊԸ-ի համար չի համարվի եկամուտ:/
- կազմակերպության կողմից թողարկված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը,
  /«Ա» ԲԲԸ-ն 2008թ-ի հոկտեմբերի 9-ին թողարկում է 100 հատ բաժնետոմս, յուրաքանչյուրը 20.000 դրամ անվանական արժեքով: Թողարկված 100 հատ բաժնետոմսերից 50-ը վաճառվում են յուրաքանչյուրը 25.000 դրամով:«Ա» ԲԲԸ-ի համար վաճառված յուրաքանչյուր բաժնետոմսի վաճառքի գնի՝ 25.000դ-ի և անվանական արժեքի՝ 20.000 դրամի տարբերությունը՝ 5000 դրամը, կազմակերպության համար չի համարվի եկամուտ:/
- վերագնահատման արդյունքում կազմակերպության արտարժույթով արտահայտված ակտիվների կամ պարտավորությունների արժեքի աճը կամ նվազումը,
  */«Ա» ՍՊԸ-ն 2009թ.-ի փետրվարի 24-ին ներմուծել է ծաղիկներ 50.000 դոլար արժեքով հոլանդական «FLOWER» կազմակերպությունից: 2009թ.-ի փետրվարի 24-ին ԿԲ-ով դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ կազմել է 1$=400դրամ, այսինքն՝400*50.000=20.000.000դրամ: «Ա» ՍՊԸ-ն «FLOWER» կազմակերպության պարտքը վճարում է 2009թ.-ի դեկտեմբերի 20-ին: Քանի որ դեկտեմբերի 20-ին ԿԲ-ով դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ կազմում էր 1$=350 դրամ, ապա կատարելով պարտքի վերագնահատում «Ա» ՍՊԸ-ի պարտքը դրամով կկազմի՝ 50.000*350=19.000.000դրամ, այսինքն կառաջանա 1.000.000դրամի(20.000.000-19.000.000) փոխարժեքային տարբերություն, որը եկամուտ չհամարվող տարր է:/*
- հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը,
  /«Ա» ՍՊԸ-ն ունի հետևյալ ակտիվները.
  - *-մեքենա-2,5 մլն դրամ արժեքով,*
  - *-կահույք-1.7 մլն. դրամ արժեքով,*
  - *-համակարգիչ-0.25 մլն դրամ արժեքով:*

  Տարվա վերջում «Ա» ՍՊԸ-ի կողմից հրավիրված անկախ գնահատողների կողմից կատարվում է ակտիվների վերագնահատում, որի արդյունքում ակտիվների արժեքը կազմում է համապատասխանաբար
  - *-մեքենա-3,5 մլն դրամ*
  - *-կահույք-2.1 մլն. դրամ*
  - *-համակարգիչ-0.29 մլն դրամ:*


  Վերագնահատման արդյունքում ակտիվների արժեքը աճեց 1.44 մլն դրամով (3.5-2.5=1, 2.1-1.7=0.4, 0.29-0.25=0.04), որը կազմակերպության եկամուտների թվին չի պատկանի/
- Շահութահարկի մասին օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում օրենքով տրվող հարկային արտոնությունների գումարները
- Ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները:
  /ՄԱԿ 1 բնակչության հիմնադրամը 2009թ.-ի հուլիսի 20-ին բարեգործական նպատակով ստացել է 100.000 դրամի համարժեք հագուստ: 100.000 դրամին համարժեք հագուստը ՄԱԿ 1 բնակչության հիմնադրամի համար չի համարվում եկամուտ:/

Որո՞նք են համախառն եկամտի նվազեցումները.



Համախառն եկամտից թույլատրվում է կատարել հետևյալ նվազեցումները՝ **ծախսեր**, **կորուստներ** և **այլ նվազեցումներ**: Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

1.Ծախսերը



Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:
Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

Կազմակերպության ծախսերի թվին են դասվում `

- նյութական ծախսերը.
- աշխատավարձի գծով ծախսեր.
- պարտադիր սոցիալական ապահովության վճարները.
- ամորտիզացիոն մասհանումները.
- ապահովագրական վճարները.
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները,
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսները.
- երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային, ապահովագրական ու վարկային կազմակերպությունների այլ ծառայությունների համար վճարները.
- գովազդային ծախսերը.
- ներկայացուցչական ծախսերը.
- գործուղման ծախսերը.
- դատական ծախսերը.
- աշխատողների հավաքագրման ծախսերը.
- աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը.
- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը.
- հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը:

Ամորտիզացիոն մասհանումները

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով կախված հիմնական միջոցի տեսակից հետևյալ նվազագույն ժամկետներում՝

ա)շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար, բացառությամբ սույն կետի «բ» և «ե» ենթակետում նշվածների - 20 տարի ,

բ) հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների համար - 10 տարի.

գ) հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար - 3 տարի

դ) հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար - 1 տարի

ե) այլ հիմնական միջոցների, այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկիների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար - 5 տարի:

Աղետի գոտում գտնվող՝ սույն կետի ա և բ ենթակետերում նշված հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի: Սույն մասում նշված՝ աղետի գոտու տարածքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գյումրի քաղաքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար Գյումրի քաղաքում գտնվող շենքերի, շինությունների, փոխանցվող հարմարանքների, հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի և Գյումրի քաղաքում տեղակայված այլ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի Գյումրի քաղաքում գտնվելու (տեղակայվելու) ժամանակաշրջանում: Եթե Գյումրի քաղաքում գտնվող (տեղակայված) հիմնական միջոցների նկատմամբ կիրառվել են նշված ամորտիզացիոն նվազագույն ժամկետները, և այդ հիմնական միջոցները տեղափոխվել են Գյումրի քաղաքից դուրս (առանց այլ անձանց օտարման), ապա հարկատուն պետք է վճարի արագացված ամորտիզացիայից օգտված լինելու հետևանքով պակաս վճարված շահութահարկը և շահութահարկը (այդ թվում՝ կանխավճարները) ուշ վճարելու համար սահմանված տույժերը:

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է հարկատուն՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջինների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի, սակայն ոչ ավելի հարկատուի գործունեության ժամկետից:

Հարկատուն հիմնական միջոցի համար կարող է ընտրել ամորտիզացիոն մասհանումների այլ ժամկետ, որը պետք է պակաս չլինի վերը նշված նվազագույն ժամկետներից:

Ամորտիզացիոն մասհանումների տարեկան գումարը որոշվում է հետևյալ կերպ՝ հիմնական միջոցի սկզբնական արժեքը բաժանելով հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետի վրա:

/«Ա» ՍՊԸ-ն ունի 2 մլն դրամ արժեքով մարդատար ավտոմեքենա: «Ա» ՍՊԸ-ն սահմանել է ամորտիզացիոն մասհանումների նվազագույն ժամկետ համաձայն շահութահարկի մասին օրենքի: Նշենք որ մարդատար ավտոմեքենան ձեռք է բերվել հունվարին, սակայն շահագործման է հանձնվել փետրվարի 12-ին: Հաշվետու տարվա ամորտիզացիոն մասհանումների գումարը կկազմի՝ մարդատար ավտոմեքենայի համար-(2.000.000/(60))*10=333.3 հազար (2 մլն-ը հիմնական միջոցի արժեքն է, որը բաժանում ենք հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետի վրա՝ 60 ամիս, սակայն քանի որ տվյալ հիմնական միջոցը շահագործման է հանձնվել ոչ թե հունվարի 1-ին այլ փետրվար ամսին, այդ իսկ պատճառով նախ պետք է հաշվել 1 ամսվա ամորտիզացիոն մասհանման արժեքը և բազմապատկել այն հիմնական միջոցի շահագործման մեջ գտնվելու ամիսների վրա, այսինքն՝10, քանի որ շահագործման է հանձնվել փետրվարի 12-ին, ապա մաշվածության հաշվարկը կատարվում է մարտի 1-ից սկսած:/

Հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝
   - հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով.
   - վարձակալի մոտ՝ վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով.
   - հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերի չափով՝ օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարվող հարկատուների համար:
2. Հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող համարվող հարկատուների համար ավելացվում են այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա այդ ծախսերը կատարվել են, և՝

2.1. եթե այդ ծախսերը չեն գերազանցում հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են այն ժամկետում որում կամորտիզացվեին եթե հիմնական միջոցի վրա կապիտալ բնույթի ծախսեր չկատարվեին:

/«Ա» ՍՊԸ-ի հիմնական միջոցի (ռոբոտատեխնիկա) սկզբնական (ձեռքբերման) արժեքը կազմում է 6 մլն դրամ, 2009թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ամորտիզացիան կազմում է 4 մլն դրամ, իսկ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը՝ 2 մլն դրամ (6մլն-4մլն=2մլն): Հիմնական միջոցի (ռոբոտատեխնիկայի) ամորտիզացիոն ժամկետը շահութահարկի մասին օրենքի համաձայն սահմանված է 3 տարի (3 տարի=36 ամիս): 2009թ.-ի փետրվարի 1-ին կատարվել են կապիտալ բնույթի ծախսեր 1 մլն դրամ արժողությամբ:

Քանի որ կապիտալ բնույթի ծախսերը՝1մլն դրամը, չեն գերազանցում հիմնական միջոցի (ռոբոտատեխնիկայի) 2009թ.-ի հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը՝ 2մլն դրամը, ուստի այդ ծախսերը ավելացվում են հիմնական միջոցի փետրվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքին և ամորտիզացվում հիմնական միջոցի փետրվարի 1-ից հետո ընկած ամորտիզացիոն մնացորդային ժամկետում:

2009թ.-ի հունվար ամսվա համար հաշվարկված ամորտիզացիան կազմում է 0.16մլն դրամ(6մլն/36)*1: 2009թ.-ի փետրվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը կկազմի 1.84 մլն դրամ (2մլն-0.16մլն) մինչև կապիտալ բնույթի ծախսերը կատարելը, իսկ ամորտիզացիոն մնացորդային ժամկետը՝ 11 ամիս:

2009թ.-ի փետրվար-դեկտեմբեր ամիսների համար մաշվածության ամսական գումարը կազմելու է 0.26 մլն դրամ((1.84+1.0)/11), իսկ ընդամենը տարեկան մաշվածության գումարը կկազմի 3 մլն դրամ(0.16մլն+0.26մլն*11ամիս):/

2.2. եթե այդ ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են շահութահարկի մասին օրենքով սահմանված ամորտիզացիոն մասհանումների նվազագույն ժամկետով, բայց ոչ պակաս, քան հինգ տարվա ընթացքում: Եթե հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է հինգ տարուց պակաս, ապա այդ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացվում են այդ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետում:

/ «Ա» ՍՊԸ-ի հիմնական միջոցի (ռոբոտատեխնիկա) սկզբնական (ձեռքբերման) արժեքը կազմում է 6 մլն դրամ, 2009թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ամորտիզացիան կազմում է 4 մլն դրամ և հաշվեկշռային (մնացորդային) արժեքը ՝ 2 մլն դրամ (6մլն-4մլն): Հիմնական միջոցի (ռոբոտատեխնիկա) ամորտիզացիոն ժամկետը շահութահարկի մասին օրենքի համաձայն սահմանված է 3 տարի (3 տարի=36 ամիս): 2009թ.-ի փետրվարի 1-ին կատարվել են կապիտալ բնույթի ծախսեր 3 մլն դրամ արժողությամբ:
Քանի որ կապիտալ բնույթի ծախսերը՝ 3մլն դրամը, գերազանցում են հիմնական միջոցի (ռոբոտատեխնիկայի) 2009թ.-ի հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը՝2մլն դրամը, ուստի այդ ծախսերը ավելացվում են հիմնական միջոցի փետրվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքին և ամորտիզացվում հիմնական միջոցի փետրվարի 1-ից հետո ամորտիզացիոն նվազագույն ժամկետում: 2009թ.-ի հունվար ամսվա համար հաշվարկված ամորտիզացիան կազմում է 0.16մլն դրամ(6մլն/36): 2009թ.-ի փետրվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը կկազմի 1.84 մլն դրամ (2մլն-0.16մլն) մինչև կապիտալ բնույթի ծախսերը կատարելու, իսկ ամորտիզացիոն մնացորդային ժամկետը՝ 11 ամիս:
2009թ.-ի փետրվար-դեկտեմբեր ամիսների համար ամորտիզացիան ամսական կազմելու է 0.13 մլն դրամ ((1.84մլն+3.0)/36), իսկ ընդամենը տարեկան ամորտիզացիան կկազմի 1.64 մլն դրամ(0.16մլն+0.13մլն*11):
Այսպիսով՝ հիմնական միջոցը(ռոբոտատեխնիկա) լրիվ ամորտիզացվում է 5.1 տարում (մինչև կապիտալ բնույթի ծախսի կատարումը հաշվառված ամորտիզացիոն ժամկետի (2.1 տարի) և ամորտիզացիոն նվազագույն ժամկետի (3 տարի) հանրագումար):/

2.3. Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը վարձակալը ամորտիզացնում է շահութահարկի մասին օրենքով սահմանված ամորտիզացիոն մասհանումների նվազագույն ժամկետով: Վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չամորտիզացված մնացորդը չի նվազեցվում վարձակալի համախառն եկամտից:
/2009թ.-ի հունիսի 30-ին «Բ» ՍՊԸ-ն վարձակալության իրավունքով իրեն պատկանող շենքի վրա կատարում է կապիտալ բնույթի ծախսեր 20մլն դրամի չափով: Վարձակալության պայմանագիրը կնքված է 25 տարի ժամկետով: Այսպիսով, 2009թ.-ի դեկտեմբերի 31-ին «Բ» ՍՊԸ-ն կամորտիզացնի 20մլն դրամից՝ 500 հազար դրամ ((20.000.000/2400)*6, 20 տարի=240 ամիս): 2010թ.-ի հունիսի 30-ին վարձակալության պայմանագիրը լուծվում է: Այստեղից հետևում է, որ 2010թ.-ի հունիսի 30-ից հետո «Բ» ՍՊԸ-ն չամորտիզացված մնացորդը, որը կազմում է 19.0 մլն դրամ (20.000.000-500.000-500.000), չի նվազեցնի համախառն եկամտից:

2.4. Հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերի տարբերակումն ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հայտանիշների և (կամ) չափերի հիման վրա:

Համախառն եկամտից չնվազեցվող ծախսերը.

Վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող վճարները.

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գովազդի, մարքեթինգի (ապրանքային և ծառայությունների շուկայի ուսումնասիրություն, ապրանքային և ծառայությունների շուկայում առաջխաղացում), կադրերի պատրաստման և վերապատրաստման համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը.

հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին՝ օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը.

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման ծախսերի, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ օրապահիկի ծախսերի համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ներկայացուցչական ու հովանավորչական ծախսերը և այլն:

/«Ա» ՍՊԸ-ի, որը համարվում է ԱԱՀ վճարող, հաշվետու տարվա համախառն եկամուտը կազմում է 25 մլն դրամ, ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսերը 1.290.000 դրամ: «Ա» ՍՊԸ-ն իր համախառն եկամտից կարող է նվազեցնել միայն ՀՀ կառավարության կողմից սահմանված չափով գործուղման ծախսը. ըստ որի ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսերը համախառն եկամտից նվազեցնում են ոչ ավել համախառն եկամտի 5%-ից: Քանի որ համախառն եկամտի 5%-ը կազմում է 25.000.000*5%=1.250.000 դրամ, ուստի համախառն եկամտից կարող ենք նվազեցնել ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսերից՝1.290.000-ից միայն 1.250.000 դրամը:/

Վերը նշված ծախսերի, բացառությամբ օրապահիկի ու դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների, սահմանափակումները չեն գործում այն կազմակերպությունների համար որոնք չեն համարվում ԱԱՀ վճարող:

Փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը

Առանց հիմնավորող փաստաթղթերի համախառն եկամուտը նվազեցվում է՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափը չգերազանցող օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում՝ հատուցման գումարների չափով.
- 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողների համար, որոնց իրացումից հասույթը 2008 թվականի ընթացքում չի գերազանցել 50,0 մլն դրամ, 2008 թվականի ընթացքում ձեռք բերված ապրանքանյութական արժեքների, ինչպես նաև 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքանյութական արժեքների մնացորդների մասով կատարված ծախսերի չափով, եթե այդ ծախսերի մասով առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ (փաստաթղթեր):
- Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաթղթերով չհիմնավորված այն ծախսերի չափով (օրինակ «Ա» ՍՊԸ-ն ձեռք է բերել «Բ» ՍՊԸ-ից ապրանք և այդ ձեռք բերման դիմաց «Բ» ՍՊԸ-ն «Ա» ՍՊԸ-ն չի տրամադրել հաշիվ ապրանքագիր), որոնց համար հարկային մարմիններին սահմանված կարգով, ձևով և ժամկետներում ներկայացվել են տեղեկություններ և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է՝ դրա վերաբերյալ հարկային մարմիններից գրավոր տեղեկատվություն ստանալու հաշվետու ժամանակաշրջանում:*
- Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի չափով, որոնց մասով հաշվարկվել և վճարվել է եկամտահարկ՝ ,Եկամտահարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի ,աե ենթակետի համաձայն, եթե դրանց հանրագումարը չի գերազանցում ամսական 3.0 մլն. դրամը՝ միանվագ գործարքը 300,0 հազ. դրամը չգերազանցելու դեպքում: Սույն ենթակետով նշված սահմանափակումների գումարները ներառում են ,Եկամտահարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի ,աե ենթակետի համաձայն հաշվարկված և վճարված եկամտահարկի գումարները:ե

* **Հարգելի հարկատու, ուշադրություն : Սույն կետի գործողությունները մինչև 2012թ հունվարի 1-ը կասեցված են:**

Ծախս չեն համարվում

1.Կազմակերպության փայատերերի (բաժնետերերի, անդամների) ներդրումների դիմաց ստացված շահաբաժինները (եկամուտ).

/«Ա» ՍՊԸ-ն որոշում է բաշխել շահաբաժիններ իր հիմնադիրներին իրենց բաժնեմասին համապատասխան: Այսպիսով շահաբաժինների բաշխումը մասնակիցներին շահութահարկի մասին օրենքի համաձայն ծախս չի համարվի/:

2. այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները.

3. կազմակերպության կողմից թողարկված բաժնետոմսերի իրացման արժեքի և հետգնման գնի բացասական տարբերությունը,

/«Ա» ԲԲԸ-ն 2008թ-ի ընթացքում թողարկված և վաճառված բաժնետոմսերը, որոնց իրացման արժեքը կազմում էր 20.000 դրամ, հետ է գնում 25.000 դրամով: «Ա» ԲԲԸ-ի համար հետգնված բաժնետոմսի հետգնման գնի՝ 25.000դ-ի և իրացման արժեքի՝ 20.000 դրամի, տարբերությունը՝5000 դրամը, կազմակերպության համար չի համարվի ծախս:/

4.վերագնահատման արդյունքում կազմակերպության արտարժույթով արտահայտված ակտիվների նվազումը կամ պարտավորությունների աճը,

5. ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվների (այդ թվում՝ անդամավճարների) գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը:

2.Կորուստներ

ա) Բնական և այլ կորուստները

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գույքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված չափը չգերազանցող՝ փաստաթղթերով հիմնավորված բնական կամ փաստացի այլ կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ հայտնաբերվելու տարվա ընթացքում, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված է այդպիսի չափ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված բնական կամ փաստացի այլ կորուստների չափեր սահմանված չլինելու կամ դրանք գերազանցող կորստի դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է այդ կորստի չափով՝

- վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին հատուցելու դեպքում՝ կորստի ամբողջական կամ մաս-մաս հատուցման տարում, կամ՝
- վնաս պատճառած անձին չպարզելու հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ վերջինիս ընդունման տարում, կամ՝
- անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում՝ վերջինիս ուժի մեջ մտնելու տարում:

բ) Պատահական կորուստները

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գույքի պատահական կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ այն հայտնաբերվելու տարվա ընթացքում:
2. Սույն օրենքի իմաստով՝ պատահական կորուստ է համարվում հարկատուի գույքի փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստը, ոչնչացումը, վնասումը կամ որակական հատկանիշների անկումը, որը տեղի է ունենում հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների (ներառյալ օրենքով սահմանված ապահովագրական պատահարները) հետևանքով:

3.Այլ Նվազեցումներ

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

1. ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին, ինչպես նաև հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0,25 տոկոսի չափով.

/«Ա» ՍՊԸ-ն 2008թ.-ի ընթացքում ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել է 1.000.000 դրամի չափով դրամական օգնություն: 2008 թ «Ա» ՍՊԸ-ի համախառն եկամուտը կազմում է 50.000.000 դրամ: 2008թ «Ա» ՍՊԸ-ի հարկվող եկամուտը որոշելիս կազմակերպությունը կարող է նվազեցնում կատարել փոխանցված 1,000,000 դրամ օգնության գումարի միայն 125,000 դրամի չոփով՝(50.000.000x0.25%=125.000 դրամ)

Անհատույց ստացված ակտիվները (բացառությամբ դրամական միջոցների և հողամասերի) եկամուտ են համարվում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դրանք ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից:

/«Ա» ՍՊԸ-ին «Բ» ՍՊԸ-ն 2008թ.-ի մարտի 30-ին անհատույց տրամադրել է համակարգչային ծրագիր 100 հազար դոլար արժողությամբ: «Ա» ՍՊԸ-ն շահագործման է հանձնում ծրագիրը 2008թ.-ի հուլիսի 1-ին: Այստեղից հետևում է, որ անհատույց ստացված ծրագիրը եկամուտ կճանաչվի ոչ թե մարտի 30-ին, այլ հուլիսի 1-ին:/

Այն դեպքում, երբ պետության կողմից հարկ վճարողներին տրվում են ֆինանսական աջակցության նպատակային գումարներ կոնկրետ ակտիվների ձեռք բերման նպատակով, ապա այդ գումարները հարկային հաշվառմամբ որպես եկամուտ են ճանաչվում՝

ա) պետական շնորհները պետք է ճանաչվեն որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել են այդ շնորհները,

բ) ամորտիզացվող (մաշվող) ակտիվներին վերաբերող շնորհները սովորաբար ճանաչվում են որպես եկամուտ այն տարում և այն համամասնություններով, ըստ որոնց հաշվարկվում է այդ ակտիվների մաշվածությունը,

գ) պետական շնորհը, որը հատկացվում է կազմակերպությանը ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու պետք է ճանաչվի որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա գումար:

2. Հարկատուի մոտ նախորդ տարիներին առաջացած վնասների չափով, բացառությամբ կազմակերպությունների միացման (օրինակ «Ա» ՍՊԸ-ն, որը ունի հարկային վնաս 5,000,000 դրամի չափով 2008 թ հունվարին միացել է «Բ» ՍՊԸ-ին, որը նույնպես ունի հարկային վնաս՝ 2,000,000 դրամի չափով: Արդյունքում «Ա» ՍՊԸ-ի հարկային վնասը 2008 թ համախառն եկամտից չի նվազեցվի, իսկ «Բ» ՍՊԸ-ինը՝ 2,000,000 դրամի չափով կնվազեցվի 2008թ համախառն եկամտից), միաձուլման (օրինակ «Ա» ՍՊԸ-ն, որը ունի հարկային վնաս, և «Բ» ՍՊԸ-ն, որը նույնպես ունի հարկային վնաս միաձուլվել են և դարձել է «ԱԲ» ՍՊԸ: Արդյունքում «Ա» և «Բ» ՍՊԸ-ի հարկային վնասների հանրագումարը «ԱԲ»ՍՊԸ-ի համախառն եկամտից չի նվազեցվի) և վերակազմավորման ձևով վերակազմակերպման դեպքերի (օրինակ եթե «Ա» ՍՊԸ-ն վերակազմավորվի «Ա» ՓԲԸ-ի): Հարկատուի գործունեությունից վնասը սույն օրենքով սահմանված նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ:

Հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ (օրինակ «Ա» ՍՊԸ-ն 2007թ.-ին ունեցել է վնաս 2 մլն դրամի չափով: 2008թ.-ին «Ա» ՍՊԸ-ի համախառն եկամուտը կազմել էր 2 մլն դրամ, իսկ ծախսեր չի ունեցել: Արդյունքում 2008թ.-ի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը՝ 2մլն դրամը կնվազեցվի 2007թ.-ի վնասի չափով՝ 2 մլն դրամով):

3.Հարկատուի ստացած շահաբաժինների գումարի չափով: Սույն կետի իմաստով շահաբաժին է համարվում այլ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայաբաժնից) ստացված եկամուտը:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հաշվետու տարում հայտնաբերված՝ նախորդ երեք տարիներում ավել ցույց տրված եկամտի և (կամ) պակաս ցույց տրված նվազեցման չափով:

Համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումների իրականացումը

1. Արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի (նյութական, աշխատանքի վարձատրության, սոցիալական ապահովության և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և ծառայությունների իրացման համապատասխան:
/«Ա» ՍՊԸ-ն 2009թ.-ի հունիս ամսին արտադրել է 500 միավոր դիետիկ կետչուպ: Դիետիկ կետչուպ արտադրելու համար «Ա» ՍՊԸ-ն ծախսել է 100.000 դրամի լոլիկ, դիետիկ կետչուպ պատրաստող վարձու աշխատողներին հաշվարկել և վճարել է աշխատավարձ 50.000 դրամի չափով, արդյունքում 500 միավոր դիետիկ կետչուպի ինքնարժեքը կազմել է 150.000 դրամ, միավորի ինքնարժեքը կկազմի՝ 150,000/500=300 դրամ: 2009թ.-ի ընթացքում «Ա» ՍՊԸ-ն վաճառում է 200 միվոր դիետիկ կետչուպ, յուրաքանչյուրը 400 դրամ արժեքով : Արդյունքում «Ա» ՍՊԸ-ի համախառն եկամուտը կկազմի `400x300=120,000 դրամը, որից կնվազեցվի 200x300=60,000 դրամի չափով ինքնարժեքի գումարը՝ իրացմանը համապատասխան:
2. Առևտրական գործունեություն իրականացնող հարկատուների մոտ ապրանքների ձեռքբերման արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ապրանքների իրացման համապատասխան:
/«Ա» ՍՊԸ-ն 2009թ.-ի հունվարին ձեռք է բերել 10 հատ համակարգիչ յուրաքանչյուրը 150.000 դրամով: 2009թ.-ի մարտ ամսին վաճառել է 5 հատ համակարգիչ յուրաքանչյուրը 200.000 դրամի չափով: Արդյունքում «Ա» ՍՊԸ-ն համախառն եկամտի՝ 1 մլն դրամից (5*200.000) կնվազեցնի 750.000 (5*150.000)դրամի չափով:/
3. 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված ակտիվների (հիմնական միջոցների և այլ ակտիվների) մնացորդային արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են դրանց իրացման համապատասխան:
4. Հարկատուի գործունեության հետ կապված վարչական ծախսերի (կառավարման ապարատի (օրինակ տնօրեն) աշխատավարձ, սոցիալական ապահովություն, գործուղումներ, նյութական և տրանսպորտային սպասարկում, կառավարման տեխնիկական միջոցների և վարչական նշանակության հիմնական միջոցների պահպանում և շահագործում, ներկայացուցչական, դատական, աուդիտորական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, կադրերի պատրաստում և վերապատրաստում և այլն), արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի (փաթեթավորում, պահպանում, բեռնում, տեղափոխում, ուղեկցում, գովազդ, մարքեթինգ և այլն) և ոչ արտադրական այլ ծախսերի (գյուտարարական և ռացիոնալիզատորական, գիտահետազոտական, նախագծային և փորձակոնստրուկտորական աշխատանքներ և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են:
5. Հարկատուի ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (վարկերի և այլ փոխառությունների տոկոսներ, գույքի երկարատև վարձակալության դիմաց տոկոսներ և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են:
6. 4-րդ և 5-րդ կետերում նշված ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում:
Առանձին վճարողների, նրանց խմբերի, գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարներ:

Որո՞նք են շահութահարկի արտոնությունները

1. Շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:
/«Ա» ՍՊԸ-ն զբաղվում է ձկնաբուծությամբ, ինչպես նաև ծաղիկների ներմուծմամբ և մանրածախ վաճառքով: 2009թ.-ի ընթացքում ձկնաբուծությունից առաջացած եկամուտը կազմել է 10 մլն դրամ, իսկ ծաղիկների վաճառքից՝ 1մլն դրամ: «Ա» ՍՊԸ-ն ձկնաբուծությունից առաջացած եկամտից շահութահարկ չի վճարի, իսկ ծաղիկների վաճառքից առաջացած եկամտից շահութահարկ չի վճարի, քանի որ այն չի գերազանցում համախառն եկամտի 10%-ը ((10.000.000+1.000.000)*10%=1.100.000, 1.000.000<1.100.000)/:

Գյուղատնտեսական արտադրանք են համարվում.

- հացահատիկային և հացահատիկաոլոռային մշակաբույսերը.
- տեխնիկական մշակաբույսերը.
- պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը.
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը.
- կերարտադրության այլ արտադրանքը.
- պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը.
- ծառերի և թփերի սերմերի, պտուղներում եղած սերմերը.
- ծառերի և թփերի սածիլները.
- ծառերի և թփերի տնկիները.
- անասնաբուծության արտադրանքը.
- խոզաբուծության արտադրանքը.
- ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը.
- թռչնաբուծության արտադրանքը.
- ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը.
- եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանքը.
- ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը.
- ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:

Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային զուտ եկամտի տվյալների վրա:

2. Համահայկական բանկն ազատվում է շահութահարկի վճարումից:
3.Շահութահարկի վճարումից ազատվում են ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուները՝ իրենց կողմից ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի մասով:
4.Հասարակական, կրոնական և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունները
5.Հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 տոկոսի չափով:
*/«Ա» ՍՊԸ-ն ունի 10 վարձու աշխատող, որոնցից 2-ը հաշմանդամ են: Յուրաքանչյուր վարձու աշխատողի հաշվարկված աշխատավարձը կազմում է 100.000 դրամ: Այսպիսով, «Ա» ՍՊԸ-ն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը կնվազեցնի ոչ միայն հաշվարկած աշխատավարձի չափով՝ 1 մլն դրամ (100.000*10), այլ նաև հաշմանդամ աշխատողների հաշվարկված աշխատավարձի 150 տոկոսի չափով՝ 300.000 (2*100.000*150%) /*
6.Եթե օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների) կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը 1998 թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 500 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝

100 տոկոսով		**50 տոկոսով**
1998	1999 և 2000 թ.	2001-2008 թ. ներառյալ
1999	2000 և 2001 թ.	2002-2009 թ. ներառյալ
2000	2001 և 2002 թ.	2003-2008 թ. ներառյալ
2001	2002 և 2003 թ.	2004-2007 թ. ներառյալ
2002	2003 և 2004 թ.	2005-2006 թ. ներառյալ
2003	2004 և 2005 թ.	
2004	2005 և 2006 թ.	
2005	2006 և 2007 թ.	
2006	2007 և 2008 թ.	
2007	2008 և 2009 թ.	

/«Ա» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալ 2000թ.-ին կատարվել է օտարերկրյա ներդրում 500 մլն դրամի չափով: Այսպիսով, «Ա» ՍՊԸ-ն 2001, 2002թթ.-ի տարեկան շահութահարկի գումարը կնվազեցնի 100 %-ի չափով, իսկ 2003, 2004, 2005թթ.-ի տարեկան շահութահարկի գումարը 50 %-ի չափով:/
Օրենքով կարող են սահմանվել շահութահարկից ազատելու և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ արտոնություններ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով:

Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում հարկատուն եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է, համապատասխանաբար ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

/«Ա» ՍՊԸ-ն ձեռք է բերել գրենական պիտույքներ 2008թ.-ի մարտի 3-ին 100.000 դրամ արժեքով: Այդ ձեռք բերման դիմաց նրան տրամադրվել է հաշիվ ապրանքագիր: «Ա» ՍՊԸ-ն գրենական պիտույքների ձեռքբերման դիմաց կատարել է վճարում 2009թ.-ի հունվարի 15-ին: «Ա» ՍՊԸ-ն 100.000 դրամ ծախսը կհաշվառի 2008թ.-ի մարտի 3-ին, այլ ոչ թե 2009թ.-ի հունվարի 15-ին/:

Հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելիս հարկատուն հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝

1. շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օտարման դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի կատարման օրվա դրությամբ: Բացառությամբ բռնագրավման, նվիրատվության կամ այլ ձևով պետությանը օտարման դեպքերի, հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օտարումից եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն:
2. Հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով (բացառությամբ պետությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման դեպքերի) եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5 տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափով պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն:

ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հարկատուները շահութահարկի գումարները որոշում են յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ շահութահարկի մասին օրենքի համաձայն դրույքաչափերով:
Շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով ներկայացնում են շահութահարկի հաշվարկներ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ներկայացնելու ժամկետը տեղափոխվում է այդ օրվան հաջորդ առաջին աշխատանքային օրը:
ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունները այդ ժամկետում ներկայացնում են միայն սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված՝ շահութահարկի պարզեցված հաշվարկ:

Շահութահարկի հաշվարկ չեն լրացնում և չեն ներկայացնում՝
ա) գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ (հիմնականում) զբաղված հարկատուները, եթե հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը.
բ) ոչ առևտրային կազմակերպությունները, եթե ստացված միջոցները շահութահարկի մասին օրենքի համաձայն եկամուտ չեն համարվում.
գ) միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող հարկատուները:

Ռեզիդենտների շահութահարկի կանխավճարները

Տարվա ընթացքում կազմակերպությունները պետք է կատարեն շահութահարկի կանխավճարներ:
Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր ամիս, նախորդ տարվա շահութահարկի հաշվարկային մեծության մեկ տասնվեցերորդի չափով՝ տվյալ ամսվա քսանհինգից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ:

/«Ա» ՍՊԸ-ի 2008թ.-ի շահութահարկի գումարը կազմել էր 4.2 մլն դրամ: 2009թ.-ին յուրաքանչյուր ամսվա կանխավճարների չափը կկազմի՝ 262.5 հազար դրամ (4.2/16): Նշենք որ, օրինակ հունվար ամսվա կանխավճարի մուծումը կատարվում է մինչև հունվար ամսվա 25-ը ներառյալ:/

Սահմանված ժամկետներում կանխավճարային մուծումներ չկատարելու դեպքում հարկային տեսչության մարմիններն այդ կանխավճարային գումարների գծով հաշվարկում են տույժ պակաս մուծված կանխավճարի օրական 0.15 % չափով, բայց ոչ ավել քան 365 օր:

Նոր հիմնադրված հարկատուն կարող է շահութահարկի կանխավճարներ չկատարել մինչև հաջորդ տարվա ապրիլի 25-ը՝ այդ մասին նախօրոք հայտնելով հարկային տեսչության մարմնին:

Այն հարկատուն, որը նախորդ տարում հարկվող շահույթ չի ունեցել, կամ որի նախորդ տարվա շահութահարկի գումարը չի գերազանցել 500 հազար դրամը, կամ որը նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չի համարվել ԱԱՀ վճարող, կարող է շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարներ չկատարել:

Մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, հարկատուն շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում է նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով:

Նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարները հայտնի դառնալուց հետո շահութահարկի հաշվարկի ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարային մուծման ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացումը տվյալ տարվա ընթացքում կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ տարվա սկզբից աճող հանրագումարով:

/«Ա» ՍՊԸ-ն 2008թ.-ի յուրաքանչյուր ամսին կատարել է շահութահարկի կանխավճարային մուծումներ 2007թ.-ի տարեկան շահութահարկի 1/16-ի չափով՝ 150 հազար դրամի չափով: Քանի որ 2009թ.-ի հունվար ամսին հարկային տեսչության մարմիններին շահութահարկի հաշվարկ այն դեռևս չի ներկայացրել, ապա «Ա» ՍՊԸ-ն հունվար ամսվա շահութահարկի կանխավճարային մուծումը կատարել էր 150 հազար դրամի չափով: 2009թ.-ի փետրվարի 15-ին «Ա» ՍՊԸ-ն հարկային տեսչության մարմիններին ներկայացրել է շահութահարկի հաշվարկ, ըստ որի շահութահարկի տարեկան գումարը կազմել է 4.2 մլն դրամ, իսկ 2009թ.-ի շահութահարկի ամսական կանխավճարը՝ 262.5 հազար դրամ: Արդյունքում «Ա» ՍՊԸ-ն փետրվար ամսին շահութահարկի կանխավճար կկատարի 262.5 հազար դրամի չափով փետրվար ամսվա համար, ինչպես նաև 112.5 հազար դրամ (262.500-150.000) հունվար ամսին պակաս մուծելու պատճառով:/

Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում հարկատուն ամսական կանխավճարի մեծությունը որոշում է ինքնուրույն՝ շահութահարկի հաշվարկների ներկայացման ժամկետից ոչ ուշ՝ այդ մասին գրավոր հայտնելով հարկային տեսչության մարմիններին: Կանխավճարի տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի շահութահարկի 75 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ՝ փաստացի ստացված շահութահարկի մեկ տասնվեցերորդի և տվյալ ամսվա փաստացի կատարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ:
Հաշվետու տարվա ավարտից հետո հարկատուն, ելնելով հաշվարկված հարկվող շահույթից, հաշվարկում է շահութահարկի գումարը՝ դրան հաշվանցելով տվյալ հաշվետու տարվա համար կատարված կանխավճարների գումարները:

/«Ա» ՍՊԸ-ն 2008թ.-ի ընթացքում կատարել է շահութարակի կանխավճարներ, որոնց տարեկան գումարը կազմել է 10մլն դրամ: 2008թ.-ի ավարտից հետո «Ա» ՍՊԸ-ն հաշվարկում է 2008թ.-ի տարեկան շահութահարկը , որը կազմում է 8 մլն դրամ: Այսպիսով «Ա» ՍՊԸ-ն տարեկան շահութահարկի վճարում չի կատարի, քանի որ նրա կատարած շահութահարկի կանխավճարների գումարը գերազանցում է տարեկան շահութահարկի գումարը/:

Եթե հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարը պակաս է տվյալ տարվա համար կատարված կանխավճարների հանրագումարից, ապա դրանց տարբերությունը ենթակա է վերադարձման Հարկերի մասին ՀՀ օրենքի համաձայն:
Եթե կատարված կանխավճարների հանրագումարը պակաս է տվյալ հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարից, ապա վերահաշվարկ է կատարվում միայն շահութահարկի գծով, և հարկատուն պարտավոր է առաջացած տարբերությունը վճարել պետական բյուջե:
Տարեկան շահութահարկի գումարի վճարումն ուշացնելու համար տույժերի հաշվարկը սկսվում է ապրիլի 25-ից հետո՝ շահութահարկի գումարի չվճարված մասի նկատմամբ օրական 0.15 % չափով, բայց ոչ ավել քան 365 օր:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐԸ

/«Ա» ՍՊԸ-ն (ԱԱՀ վճարող), որը զբաղվում է վարձակալական գործունեությամբ, 2009թ.-ի հունվար ամսին ունեցել է 10 մլն դրամ եկամուտ վարձակալական գործունեությունից: Նրա հիմնական միջոցների հունվար ամսվա ամորտիզացիոն մասհանումների չափը կազմում է 2 մլն դրամ: Քանի որ հիմնական միջոցների հունվար ամսվա ամորտիզացիոն մասհանումների գումարը չի գերազանցում հունվար ամսվա եկամտի 50 տոկոսը, այդ իսկ պատճառով փետրվար ամսվա նվազագույն շահութահարկը կկազմի՝80 հազար դրամ ((10.000.000-2.000.000)*1%). համարենք որ նախորդ տարվա հաշվարկված շահութահարկի մեծության 1/16-ը ավելի փոքր է քան հաշվարկված նավազագույն շահութահարկն է:/

Եթե «Ա» ՍՊԸ-ի շահութահարկի կանխավճարի գումարը փոքր է նվազագույն շահութահարկի գումարից, ապա հարկատուն պարտավոր է վճարել նվազագույն շահութահարկը: Նվազագույն շահութահարկի մեծությունը հաշվարկվում է հետևյալ կերպ. հաշվետու ամսվա համար հաշվարկվում է դրա նախորդ ամսվա ապրանքների, արտադրանքի և ծառայությունների իրացումից (բացառությամբ հիմնական միջոցների, արժեթղթերի, ֆոնդային ապրանքների) ստացված հասույթից հանած նույն ժամանակահատվածի հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումները բազմապատկելով 1 %-ով (ի դեպ հ/մ-ների ամորտիզացիոն մասհանումների գումարը չպետք է գերազանցի այդ ժամանակահատվածում ստացված իրացումից հասույթի 50%-ը, հակառակ դեպքում հ/մ ների մաշվածությունը հաշվի չի առնվի, այսինքն նվազագույն շահութահարկը կհաշվարկվի ամսվա ստացված հասույթի 1%-ի չափով): /

ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպությունները ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում նվազագույն շահութահարկը հաշվարկում են ապրանքների, արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվարկված եկամտից 1% դրույքաչափով ՝ առանց հաշվի առնելու հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումները:

/«Ա» ՍՊԸ-ն (ԱԱՀ վճարող չհամարվող) զբաղվում է համակարգիչների մեծածախ վաճառքով: 2009թ.-ի հուլիս ամսին համակարգիչների վաճառքից ունեցել է 2մլն դրամ եկամուտ: «Ա» ՍՊԸ-ն ունի հիմնական միջոց, որի ամորտիզացիոն մասհանումների գումարը ամսական կազմում է 3մլն դրամ: Քանի որ «Ա» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չի համարվում, ապա հիմնական միջոցի ամորտիզացիոն մասհանումների գումարը նվազագույն շահութահարկի հաշվարկի ժամանակ հաշվի չի առնվի: Այսպիսով, օգոստոս ամսվա նվազագույն շահութահարկի գումարը կկազմի՝20 հազար դրամ (2.000.000*1%)/

Շահութահարկի արտոնություններից օգտվող կազմակերպությունների նվազագույն շահութահարկը նվազեցվում է արտոնության չափով՝ արտոնությունից օգտվելու ժամանակաշրջանում:
Նվազագույն շահութահարկի տարեկան հանրագումարի և հաշվետու տարվա փաստացի շահութահարկի դրական տարբերությունը նվազեցվում է հետագա տարիների շահութահարկից:

/«Ա» ՍՊԸ-ն 2008թ.-ի ընթացքում վճարել է 1 մլն դրամ նվազագույն շահութահարկ, սակայն նրա շահութահարկի տարեկան գումարը կազմել է 800 հազար դրամ: Այսպիսով, «Ա» ՍՊԸ-ի նվազագույն շահութահարկի և փաստացի շահութահարկի տարբերությունը՝ 200 հազար դրամը (1.000.000-800.000) կնվազեցվի 2009թ.-ի շահութահարկի գումարից, այն հետ չի վերադարձվում: /

Ե՞րբ է վճարվում շահութահարկի գումարը

Հարկատուն պարտավոր է շահութահարկի գումարը վճարել պետական բյուջե մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ:
/Օրինակ «Ա» ՍՊԸ-ն իր 2008թ-ի շահութահարկի պարտավորությունը պարտավոր է վճարել մինչև 2009թ-ի ապրիլի 25-ը ներառյալ:/

Ինչպե՞ս է կատարվում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված շահութահարկի գումարի հաշվանցումը

Եթե ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձը օտարերկրյա պետությունում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, որի արդյունքում ստացված եկամտից օտարերկրյա պետությունում վճարել է շահութահարկ, ապա ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձը կարող է ՀՀ-ում հաշվարկված շահութահարկից նվազեցնել օտարերկրյա պետությունում հաշվարկված և վճարած շահութահարկը: Նվազեցումների համար հինք է հանդիսանում հարկ վճարողի կողմից օտարերկրյա պետությունում վճարված հարկի գումարների վերաբերյալ համապատասխան տեղեկանքները, որոնք պետք է վավերացված լինեն այդ պետության հարկ գանձող համապատասխան մարմինների կողմից: Ի դեպ նվազեցվող շահութահարկի գումարը պետք է վերահաշվարկել ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
Եթե նվազեցման ենթակա գումարը գերազանցում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութահարկի պարտավորությունը, ապա գերազանցող գումարը նվազեցվում է հարկատուի հաջորդ տարիների շահութահարկի գումարից:

/«Ադամանդ» ՍՊԸ-ն (ռեզիդենտ) զբաղվում է ադամանդների մշակմամբ և վաճառքով ՀՀ-ում և ՌԴ-ում:
ՌԴ-ում ունեցել է իրացումից հասույթ՝ 100.000 դոլար՝ համարժեք ՝ 38.000.000 դրամի և ծախսեր՝ 70.000 դոլար՝ համարժեք 26.600.000 դրամ:
ՌԴ-ում «Ադամանդ» ՍՊԸ-ն 2009թ-ի վերջում վճարել է 9.000 դոլար համարժեք 3.420.000 դրամ շահութահարկ((100.000-70.000)$*30%, այսինքն՝ (38.000.000-26.600.000)*30%դրամ):
ՀՀ-ում 2009թ.-ի ընթացքում ունեցել է ադամանդների իրացումից հասույթ 12.500.000 դրամ, ինչպես նաև ադամանդների մշակման հետ անմիջականորեն կապված ծախսեր՝ 7.000.000 դրամ:
Այսպիսով 2009թ-ի «Ադամանդ» ՍՊԸ-ի շահութահարկի տարեկան գումարը կկազմի՝
(12.500.000+38.000.000-7.000.000-26.600.000)*20%=3.380.000, դրամ:
Քանի որ «Ադամանդ» ՍՊԸ-ն ՀՀ-ից դուրս վճարել է շահութահարկ, ապա այդ գումարը կարող ենք հաշվանցել ՀՀ-ում առաջացած շահութահարկի տարեկան գումարից , բայց ոչ ավել քան ՀՀ-ում գործող շահութահարկի հաշվարկման դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարից, այսինքն՝(38.000.000-26.600.000)*20%=2.280.000 դրամ, այստեղից հետևում է, որ «Ադամանդ» ՍՊԸ-ն իր շահութահարկի տարեկան գումարից՝3.380.000 դրամից, կհաշվանցի 2.280.000 դրամ, իսկ ՌԴ վճարված շահութահարկի մնացած մասը՝ **այսինքն**՝ 3.420.000-2.280.000=1.140.000 դրամ հաշվանցման ենթակա չէ/:

«Ա» ՍՊԸ-ն (հիմնադրված 2009թ.-ի հունվարի 8-ին) 2009թ.-ի ընթացքում ունեցել է հետևյալ եկամուտները՝

1. իրեն պատկանող շենքը վարձակալության տրամադրելով ստացել է 12 մլն դրամ եկամուտ,
2. հագուստի մանրածախ առևտրից ստացել է 20 մլն դրամ եկամուտ,
3. անհատույց ստացել է դրամական միջոցներ 4 մլն դրամ:

«Ա» ՍՊԸ-ն (հիմնադրված 2009թ.-ի հունվարի 8-ին) 2009թ.-ի ընթացքում ունեցել է հետևյալ ծախսերը՝

1. առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռք է բերել 150.000 դրամի արագամաշ առարկաներ (թուղթ A4 ֆորմատ, գրենական պիտույքներ և այլն), որոնք ամբողջությամբ հանձնել էր շահագործման
2. վաճառված հագուստի ինքնարժեքը կազմել է 10 մլն դրամ, որը շահութահարկի օրենքի համաձայն բավարարում է բոլոր պայմանները համախառն եկամտից նվազեցնելու համար,
3. տնօրենի աշխատավարձի գծով ծախսը կազմել է 2 մլն դրամ, սոց ապահովության գծով ծախսը 268 հազար դրամ, իրացման ոլորտի աշխատողների աշխատավարձը կազմել է 3 մլն դրամ, սոց ապահովության գծով ծախսը 690 հազար դրամ,
4. «Ա» ՍՊԸ-ն 2009թ.-ին վերցրել է վարկ, որի դիմաց 2009թ.-ի համար հաշվեգրված տոկոսները կազմել են 5 մլն դրամ,
5. վարձակալության տրամադրված շենքի ամորտիզացիոն մասհանումների տարեկան չափը կազմել է 2 մլն. դրամ:

Նշենք նաև, որ «Ա» ՍՊԸ-ն, լինելով նոր հիմնադրված կազմակերպություն, այդ իսկ պատճառով 2009թ.-ի ընթացքում ամսական կատարել է նվազագույն շահութահարկի կանխավճարներ իր ամսական եկամտի և հիմնական միջոցի ամորտիզացիոն մասհանումների տարբերության 1 տոկոսի չափով՝ ամսական 25 հազար դրամի չափով, տարվա կտրվածքով՝ 275 հազար դրամ:

Անհրաժեշտ է որոշել 2009թ.-ի տարեկան շահութահարկի գումարը, 2010թ.-ի շահութահարկի կանխավճարների ամսական գումարը, բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը:

Ինչպես գիտենք տարեկան շահութահարկը հավասար է հարկվող շահույթ x 20%
Հարկվող շահույթը հավասար է հաշվետու տարվա համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությանը:
Համախառն եկամուտը հավասար է բոլոր եկամուտների գումարին, այսինքն հավասար է 12.000.000+20.000.000+4.000.000=36.000.000 դրամ
Նվազեցումները հավասար են ծախսեր+կորուստ+այլ նվազեցում, այսինքն հավասար են
10.000.000+2.000.000+268.000+3.000.000+690.000+5.000.000+2.000.000=22.958.000, նկատենք որ արագամաշ առարկաների գծով ծախսը 150 հազար դրամը, չի ներառվել նվազեցումների մեջ, քանի որ այդ արագամաշ առարկաները ձեռք են բերվել առանց հիմնավորող փաստաթղթերի, որը չի բավարարում շահութահարկի մասին օրենքի համաձայն ծախսերին ներկայացվող պահանջները:
Արդյունքում հարկվող շահույթը հավասար կլինի 36.000.000-22.958.000=13.042.000, իսկ շահութահարկը՝13.042.000x 20%=2.608.400, իսկ ֆինանսական առումով հարկվող շահույթը հավասար է 36.000.000-22.958.000-150.000=12.892.000:
Շահութահարկի 2010թ.-ի կանխավճարների ամսական գումարը հավասար ՝ տարեկան շահութահարկի 1/16-ին, այսինքն՝ 2.608.400/16=163.025 դրամ:
Բյուջե կվճարվի 2.608.400-275.000=2.333.400 դրամ, քանի որ 2009թ.-ի ընթացքում կազմակերպությունը կատարել էր նվազագույն շահութահարկի վճարումներ:

Շենքի վարձակալության տրամադրելուց առաջացած եկամուտը կլրացվի 0107 (12 մլն) տողում որպես վարձավճար, հագուստի մանրածախ առևտրից եկամուտը(20 մլն)՝ 0101 տողում որպես ապրանքների իրացումից հասույթ, անհատույց ստացված դրամական միջոցները (4 մլն)՝ 0112 տողում:
0201 տողում լրացվում է վաճառված ապրանքների ինքնարժեքը(10 մլն), 0206 տողում լրացվում են վարչական ծախսերը, այսինքն՝ տնօրենի աշխատավարձի գծով ծախսը(2 մլն) և սոց. ապահովության գծով ծախսը(268 հազար), 0207 տողում լրացվում են իրացման ծախսերը, այսինքն՝ իրացման ոլորտի աշխատողների աշխատավարձը (3 մլն)և սոց. ապահովության գծով ծախսերը(690 հազար), վարձակալության տրամադրված շենքի ամորտիզացիոն մասհանումները (2 մլն):

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ («Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հավելված)									Փաստաթղթի համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի անվանումը «Ա» ՍՊԸ									2. Հարկ վճարողի հասցեն՝ ----------
3. ՀՎՀՀ									4. Հեռախոսի համարը
5. Հաշվետու տարի				2	0	0	9	թ	6. Ներկայացման ամսաթիվը

Ցուցանիշները	Տողը	Գումարը
1. Հաշվետու տարվա համախառն եկամուտը		
ա) ապրանքների իրացումից հասույթը	0101	20,000.0
բ) արտադրանքի իրացումից հասույթը	0102	
գ) ծառայությունների մատուցումից հասույթը	0103	
դ) հանձնարարության, կոմիսիայի և գործակալության հիմունքներով իրականացված գործարքներից հասույթը	0104	
ե) հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հումքի (նյութի) և այլ ակտիվների իրացումից հասույթը	0105	
զ) տոկոսները	0106	
է) վարձավճարները	0107	12,000.0
ը) ռոյալթիները	0108	
թ) ստացած շահաբաժինները	0109	
ժ) ապահովագրական հատուցումները	0110	
ժա) ապահովագրական պահուստներից հատուցման նպատակով վերադարձվող միջոցները	0111	
ժբ) անհատույց ստացված ակտիվները	0112	4,000.0
ժգ) պարտավորությունների զեղչումից (ներումից) ստացվող եկամուտները	0113	
ժդ) պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող եկամուտները	0114	
ժե) տույժերի, տուգանքների և գույքային այլ սանկցիաների տեսքով ստացվող եկամուտները	0115	
ժզ) գույքագրման արդյունքներով հայտնաբերված ակտիվների ավելցուկը	0116	
ժէ) դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները	0117	
ժը) նախկինում դուրս գրված (այդ թվում՝ մասնակի) դեբիտորական պարտքերի (վարկերի) հետ ձևակերպման (մարման, պահուստի ճգրտման) գումարները	0118	
ժթ) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան նախորդող 3 տարիներում պակաս (ավել) ցույց տրված եկամուտները (նվազեցումները)	0119	
ժժ) այլ եկամուտները	0120	
Ընդամենը համախառն եկամուտը՝ եկամուտների հանրագումարը (0101-ից 0120 տողերի հանրագումարը)	***0100***	36,000.0
-այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0100Ա	
2. Համախառն եկամտից նվազեցումները		
2.1. Համախառն եկամտից նվազեցվող ծախսերը		
ա) իրացված ապրանքների ձեռքբերման հետ անմիջականորեն կապված ծախսերը	0201	(10,000.0)

բ) իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերը	0202	
գ) իրացված ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքների հետ անմիջականորեն կապված ծախսերը	0203	
դ) իրացված հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հումքի (նյութի) և այլ ակտիվների մնացորդային արժեքը	0204	
Ընդամենը համախառն եկամտից իրացմանը համապատասխան նվազեցվող (ուղղակի) ծախսերը (տող0201+տող0202+տող 0204)	***0205***	(10,000.0)
ե) գործունեության հետ կապված վարչական ծախսերը	0206	**(2,268.0)**
զ) ապրանքների, սեփական արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների իրացման հետ կապված ծախսերը	0207	(5,690.0)
է) ոչ արտադրական այլ ծախսերը	0208	
ը) ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը	0209	(5,000.0)
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ժամանակաշրջանի ծախսերը (տող 0206+տող 0207+ տող0208+տող0209)	***0210***	(12,958.0)
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ծախսերը (տող0205+տող 0210)	***0220***	(22,958.0)
2.2. Համախառն եկամտից նվազեցվող կորուստները		
ա) պատահական կորուստները	0231	
բ) բնական կորուստները	0232	
գ) փաստացի այլ կորուստները	0233	
դ) բնական կամ փաստացի այլ կորուստների չափերը գերազանցող կորուստները («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 2-րդ մաս)	0234	
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող կորուստները (0231-ից 0234 տողերի հանրագումարը)	0230	-
2.3. Համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները		
ա) դուրս գրված (այդ թվում՝ մասնակի դուրս գրված) դեբիտորական պարտքերի (վարկերի) գումարները	0241	
բ) նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարներ	0242	
գ) հաշվետու տարում հայտնաբերվա(նաև ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում ավել (պակաս) ցույց տրված եկամուտը (նվազեցումը)	0243	
դ) բարեգործական հատկացումները («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, «ա» կետ)	0244	
ե) ստացված շահաբաժինները	0245	
զ) նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը	0246	
է) վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկվա աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը	0247	
ը) այլ նվազեցումները	0248	
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները (0241-ից 0248 տողերի հանրագումարը)	***0240***	-
Ընդամենը համախառն եկամտից նվազեցումները (տող0220+տող0230+տող0240)	***0200***	(22,958.0)
-այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	***0200Ա***	
3. Հարկվող շահույթը (հարկային վնասը)՝ հաշվի առած ստուգման արդյունքները ((տող 0100-տող0100Ա)+(տող0200-տող0200Ա))	**0300**	13,042.0

4. Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները	**0400**	
5. Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0300+տող0400)	**0500**	13,042.0
6. Հաշվետու տարվա շահութահարկի գումարը	**0600**	2,608.4
-այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարը	**0600Ա**	
7. Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունները		
Նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարը	0701	
Հաշվետու տարվանը վերաբերող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը	**0702**	
Հաշվետու տարում ստացված՝ նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարները	**0703**	
Շահութահարկի գումարը՝ հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը (տող0600+տող0702+տող0703)	***0700***	2,608.4
Հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը (տող0701+տող0702+տող0703)	0700Ա	-
8. Օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարը		
Նախորդ տարիների շահութահարկի գումարից օտարերկրյա պետություններում վճարված հարկի չնվազեցված գումարը	0801	
Հաշվետու տարում օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարի նվազեցվող մասը	0802	
Օտարերկրյա պետություններում վճարված հարկի հաշվետու տարվա շահութահարկից նվազեցվող գումարը	***0800***	
Օտարերկրյա պետություններում վճարված հարկի հաջորդ տարիներ փոխանցվող գումարը (տող0801+տող0802-տող0800)	0800Ա	-
9. Չեղչ սակագնով (անվճար) ծառայություններից չստացված եկամուտը		
Նախորդ տարիների շահութահարկի գումարից մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների չնվազեցված գումարը	0901	
Հաշվետու տարում մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտները	0902	
Մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների հաշվետու տարվա շահութահարկից նվազեցվող գումարը	***0900***	
Մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների հաջորդ տարիներ փոխանցվող գումարը (տող0901+տող0902+տող0900)	0900Ա	-
10. Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց հետո *(տող0700+տող0800+տող0900)*	***1000***	2,608.4
11. Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները	1100	
12. Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց և արտոնությունները կիրառելուց հետո (տող1000+տող1100)	***1200***	2,608.4
13. ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը		
Շահութահարկի գումարը՝ արտոնությունները կիրառելուց հետո (տող0700+տող1100, եթե ռեզիդենտը չի օգտվում 100% արտոնությունից, կամ 0)	1301	2,608.4
Հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարը	1302	275.0
Նվազագույն շահութահարկի տարեկան գումարը գերազանցող շահութահարկի գումարը (տող1302-տող1301), եթե (տող1302-տող1301)>0, կամ 0)	1303	
ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը (տող1200+տող1303)	***1300***	2,608.4
14. Նվազագույն շահութահարկի վճարումները		

Նախորդ տարիներում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարը	1401	
Հաշվետու տարում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները	1402	
Հաջորդ տարիներ փոխանցվող՝ չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարը (տող 1401+տող1402)	***1400***	-
15. Հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների ամսական գումարը		
Շահութահարկի կանխավճարների ամսական գումարի հաշվարկման բազա (տող0700+տող0800)	1501	2,608.4
Հաշվետու տարվա հաստատագրված վճարի գումարների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված) մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարը	1502	
Հաջորդ տարվա շահութահարկի ամսեկան կանխավճարներին վերաբերող արտոնության գումարը	1503	
Հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների ամսական գումարը ((տող1501+տող1502):16 + տող1503), եթե տող 0500>0 և (տող1501+տող 1502)>500.0 կամ 0)	***1500***	163.0

Հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն շահութահարկի գումարները՝ ըստ ամիսների

Աղյուսակ 1

Ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	**Ընդամենը**
Գումար		25.0	25.0	25.0	25.0	25.0	25.0	25.0	25.0	25.0	25.0	25.0	275.0

*ի դեպ նվազագույն շահութահարկը աղյուսակ 1-ում լրացվում է ըստ փաստացի վճարման

«Ա» ՍՊԸ-ն , հիմնադրվել է 2009թ հուվարի 8-ին , համարվում է ԱԱՀ չվճարող, 2009թ.-ի ընթացքում ունեցել է հետևյալ եկամուտները՝

1. իրեն պատկանող շենքը վարձակալության տրամադրելով ստացել է 2 մլն դրամ եկամուտ,
2. հագուստի մանրածախ առևտրից ստացել է 10 մլն դրամ եկամուտ

«Ա» ՍՊԸ-ն 2009թ.-ի ընթացքում ունեցել է հետևյալ ծախսերը՝

1. վաճառված հագուստի ինքնարժեքը կազմել է 6 մլն դրամ, որը շահութահարկի օրենքի համաձայն բավարարում է բոլոր պայմանները համախառն եկամտից նվազեցնելու համար,
2. տնօրենի աշխատավարձի գծով ծախսը կազմել է 960 հազ դրամ, սոց ապահովագրության գծով ծախսը 192 հազար դրամ, իրացման ոլորտի աշխատողների աշխատավարձը կազմել է 1.5 մլն դրամ, սոց ապահովագրության գծով ծախսը 345 հազար դրամ,
3. Ձեռք է բերել 200.000 դրամի գրենական պիտույքներ
4. «Ա» ՍՊԸ-ն 2009թ.-ին վերցրել է վարկ, որի դիմաց 2009թ.-ի համար հաշվեգրված տոկոսները կազմել են 300 հազար դրամ,
5. վարձակալության տրամադրված շենքի ամորտիզացիոն մասհանումների տարեկան չափը կազմել է 1 մլն. դրամ:

Նշենք նաև, որ «Ա» ՍՊԸ-ն, լինելով նոր հիմնադրված կազմակերպություն, այդ իսկ պատճառով 2009թ.-ի ընթացքում ամսական կատարել է նվազագույն շահութահարկի կանխավճարներ իր ամսական եկամտի 1 տոկոսի չափով՝ ամսական 10 հազար դրամի չափով, տարվա կտրվածքով՝ 110 հազար դրամ:

Անհրաժեշտ է որոշել 2009թ.-ի տարեկան շահութահարկի գումարը և լրացնել շահութահարկի պարզեցված հաշվարկը:

Ինչպես գիտենք տարեկան շահութահարկը հավասար է հարկվող շահույթ x 20%
Հարկվող շահույթը հավասար է հաշվետու տարվա համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությանը:
Համախառն եկամուտը հավասար է բոլոր եկամուտների գումարին, այսինքն հավասար է 2.000.000+10.000.000=12.000.000 դրամ:
Նվազեցումները հավասար են ծախսեր+կորուստ+այլ նվազեցում, այսինքն հավասարեն
6.000.000+960.000+192.000+345.000+300.000+1.000.000+1.500.000+200.000 =10.497.000,
Արդյունքում հարկվող շահույթը հավասար կլինի 12.000.000-10.497.000=1.503.000, իսկ շահութահարկը՝1.503.000x 20%=300.600

Շենքի վարձակալության տրամադրելուց առաջացած եկամուտի և հագուստի մանրածախ առևտրից եկամուտի հանրագումարը (12 մլն) կլրացվի 0101 տողում:
0201 տողում լրացվում է վաճառված ապրանքների ինքնարժեքի (6 մլն) և իրացման ոլորտի աշխատողների աշխատավարձի (1.5 մլն) և սոց. ապահովության գծով ծախսերի (345 հազար), վարձակալության տրամադրված շենքի ամորտիզացիոն մասհանումները (1 մլն) հանրագումարը, 0202 տողում լրացվում են ՝ տնօրենի աշխատավարձի գծով ծախսի (960հազ), սոց. ապահովության գծով ծախսի (192 հազար), վարկի դիմաց հաշվեգրված տոկոսների (300 հազար) և գրենական պիտույքների ձեռքբերման (200 հազար) գումարների հանրագումարը:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ («Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հավելված)									Փաստաթղթի համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի անվանումը «Ա» ՍՊԸ									2. Հարկ վճարողի հասցեն՝ ----------
3. ՀՎՀՀ									4. Հեռախոսի համարը
5. Հաշվետու տարի				2	0	0	9	թ	6. Ներկայացման ամսաթիվը

Ցուցանիշները	Տողը	Գումարը
1. Հաշվետու տարվա համախառն եկամուտը		
ա) ապրանքների (արտադրանքի) իրացումից և այլ ակտիվների օտարումից, ծառայությունների մատուցումից հասույթը, տոկոսները և վարձավճարները	0101	12.000.0
բ) հաշվետու տարում հայտնաբերված (նաև ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում պակաս (ավել) ցույց տրված եկամուտները (նվազեցումները)	0102	
գ) այլ եկամուտները	0103	
Ընդամենը համախառն եկամուտը՝ եկամուտների հաշրագումարը (0101-ից 0120 տողերի (բացառությամբ՝ 0119Ա տողի) հաշրագումարը)	***0100***	12.000.0
-այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0100Ա	
2. Համախառն եկամտից նվազեցումները		
2.1. Համախառն եկամտից նվազեցվող ուղղակի ծախսերը	0201	(8.845.0)
2.2. Համախառն եկամտից նվոզեցվող ժամանակաշրջանի ծախսերը	0202	(1.652.0)
2.3 Համախառն եկամտից նվազեցվող կորուստներ	0203	
2.4. Համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումներ, այդ թվում՝	0204	
ա)) հաշվետու տարում հայտնաբերված (նաև ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում ավել (պակաս) ցույց տրված եկամուտը (նվազեցումը)	0204 Ա	
բ) նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը	0204 Բ	
գ) վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը	0204 Գ	
2. Ընդամենը համախառն եկամտից նվազեցումները (տող0201+տող0202+տող 0204)	***0200***	(10.497.0)
- այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0200 Ա	
3. Հարկվող շահույթը (հարկային վնասը)՝ հաշվի առած ստուգման արդյունքները ((տող 0100-տող0100Ա)+(տող0200-տող0200Ա))	**0300**	1.503.0
4. Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները	**0400**	
5. Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0300+տող0400)	**0500**	1.503.0
6. Հաշվետու տարվա շահութահարկի գումարը	**0600**	300.6
-այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարը	**0600Ա**	
7. Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունները		
Նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարը	0701	
Հաշվետու տարվանը վերաբերող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը	**0702**	
Հաշվետու տարում ստացված՝ նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարները	**0703**	
Շահութահարկի գումարը՝ հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը (տող0600+տող0702+տող0703)	***0700***	300.6
Հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը (տող0701+տող0702+տող0703)	0700Ա	
8. Օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարը		

4. Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները	**0400**	
5. Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0300+տող0400)	**0500**	13,042.0
6. Հաշվետու տարվա շահութահարկի գումարը	**0600**	2,608.4
-այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարը	**0600Ա**	
7. Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունները		
Նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարը	0701	
Հաշվետու տարվանը վերաբերող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը	**0702**	
Հաշվետու տարում ստացված՝ նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարները	**0703**	
Շահութահարկի գումարը՝ հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը (տող0600+տող0702+տող0703)	***0700***	2,608.4
Հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը (տող0701+տող0702+տող0703)	0700Ա	-
8. Օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարը		
Նախորդ տարիների շահութահարկի գումարից օտարերկրյա պետություններում վճարված հարկի չնվազեցված գումարը	0801	
Հաշվետու տարում օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարի նվազեցվող մասը	0802	
Օտարերկրյա պետություններում վճարված հարկի հաշվետու տարվա շահութահարկից նվազեցվող գումարը	***0800***	
Օտարերկրյա պետություններում վճարված հարկի հաջորդ տարիներ փոխանցվող գումարը (տող0801+տող0802-տող0800)	0800Ա	-
9. Չեղչ սակագնով (անվճար) ծառայություններից չստացված եկամուտը		
Նախորդ տարիների շահութահարկի գումարից մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների չնվազեցված գումարը	0901	
Հաշվետու տարում մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտները	0902	
Մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների հաշվետու տարվա շահութահարկից նվազեցվող գումարը	***0900***	
Մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների հաջորդ տարիներ փոխանցվող գումարը (տող0901+տող0902+տող0900)	0900Ա	-
10. Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց հետո *(տող0700+տող0800+տող0900)*	***1000***	2,608.4
11. Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները	1100	
12. Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց և արտոնությունները կիրառելուց հետո (տող1000+տող1100)	***1200***	2,608.4
13. ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը		
Շահութահարկի գումարը՝ արտոնությունները կիրառելուց հետո (տող0700+տող1100, եթե ռեզիդենտը չի օգտվում 100% արտոնությունից, կամ 0)	1301	2,608.4
Հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարը	1302	275.0
Նվազագույն շահութահարկի տարեկան գումարը գերազանցող շահութահարկի գումարը (տող1302-տող1301), եթե (տող1302-տող1301)>0, կամ 0)	1303	
ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը (տող1200+տող1303)	***1300***	2,608.4
14. Նվազագույն շահութահարկի վճարումները		

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ակնհայտ է, որ ցանկացած անձ իր գոյությունը կարող է պահպանել եկամտի որևէ աղբյուրի հաշվին: Բայց հաճախ, եկամտի աղբյուրի առաջացումը հանգեցնում է նաև հարկային պարտավորության առաջացման՝ մասնավորապես եկամտահարկի: Ուստի ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը, պետք է ճշտեն, հանդիսանում են արդյոք իրենք եկամտահարկ վճարող:


Ի՞նչ է եկամտահարկը.

Եկամտահարկը հարկ վճարողների կողմից (օրենքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտահարկի մասին օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Հարկման նպատակով օրենքում տարանջատվում են ֆիզիկական անձանց տարբեր խմբեր (ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, ռեզիդենտներ, ոչ ռեզիդենտներ և այլն), որոնք իրարից տարբերվում են հարկման բազաներով, հարկի դրույքաչափերով և այլ չափանիշներով:

Նշենք նաև, որ եկամուտներ ստացող անձանց համար հարկային գործակալ կարող են հանդիսանալ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք այլ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս հարկային գործակալ չեն հանդիսանում:

Ո՞Վ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԵԿԱՄՏԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ




2.Ոչ Ռեզիդենտ Ֆիզիկական անձը

- Եթե անձը եկամտահարկի առումով ՀՀ ռեզիդենտ է, ապա եկամտահարկը պետք է վճարի և Հայաստանում, և Հայաստանից դուրս իր ստացված հարկվող եկամուտներից:
- Եթե անձը ՀՀ-ում ռեզիդենտ չէ, ապա նրա մոտ եկամտահարկ վճարելու պարտավորությունը առաջանում է միայն Հայաստանում ստացված եկամուտներից:

Հաճախ «ՀՀ ռեզիդենտ» հասկացությունը նույնացվում է «ՀՀ քաղաքացի» հասկացության հետ, մինչդեռ եկամտահարկի գծով ռեզիդենտ կարող են հանդիսանալ նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, քանի որ վերը նշված երեք չափանիշներից որևէ մեկի առկայությունը հնարավորություն է տալիս ճանաչել անձին որպես ՀՀ ռեզիդենտ և հակառակը՝ ՀՀ քաղաքացին կարող է լինել ոչ ռեզիդենտ:

ԵԿԱՄՏԻ ՍՏԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ



ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ

Եկամտահարկով հարկվող օբյեկտ է համարվում հարկվող եկամուտը, որն իրենից ներկայացնում է հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունը:

Ռեզիդենտի համար հարկվող եկամուտը հաշվարկվում է որպես Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող համախառն եկամտի, իսկ ոչ ռեզիդենտի համար՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող համախառն եկամտի և դրանից կատարվող նվազեցումների դրական տարբերություն:

Ռեզիդենտի համար հարկվող եկամուտը որոշվում է.

Ռեզիդենտի հարկվող եկամուտ	=	*ՀՀ–ում և ՀՀ տարածքից դուրս ստացված համախառն եկամուտ*	-	*Նվազեցումներ*

Ոչ ռեզիդենտի համար հարկվող եկամուտը որոշվում է.

Ոչ Ռեզիդենտի հարկվող եկամուտ	=	*ՀՀ–ում ստացված համախառն եկամուտ*	-	*Նվազեցումներ*

Համախառն եկամուտը և եկամուտ չհամարվող տարրերը

Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Համախառն եկամտի տեսակներից են.

- աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները,
- մրցույթների դրամական և իրային շահումները,
- նվիրատվության և օգնության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- ժառանգության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- վարձակալության դիմաց ստացվող վճարները (վարձավճարները),
- քաղաքացիաիրավական այլ պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները,
- տոկոսները, ռոյալթին,
- ձեռնարկատիրական գործունեության իրականացումից ստացված եկամուտները և այլն:

Հարկման նպատակով եկամուտ չեն համարվում և համախառն եկամտի մեջ չեն ներառվում.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարվող նպաստները (բացառությամբ՝ հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի և արձակման նպաստների), մասնավորապես՝ պետական նպաստները (ընտանեկան նպաստ, երեխայի խնամքի նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի ընտանիքի նպաստ), գործազրկության նպաստը, հղիության ու ծննդաբերության նպաստը, թաղման նպաստը.

բ)Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն վճարվող բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ կենսաթոշակների հավելումները), մասնավորապես՝ ապահովագրական կենսաթոշակները (տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և մասնակի կենսաթոշակներ), սոցիալական կենսաթոշակները (ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակներ), զինծառայողներին (օրենքով սահմանված դեպքերում նաև՝ զինծառայողներին հավասարեցված անձանց) տրվող պետական կենսաթոշակները (երկարամյա ծառայության և հաշմանդամության համար) և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին տրվող սոցիալական կենսաթոշակը (կերակրողին կորցնելու դեպքում).

գ) զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն տրվող միանվագ վճարները.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վճարվող ալիմենտները (ապրուստավճարները)՝ ստացողի մոտ.

ե) արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց ստացված գումարները

Ո՞Ր ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՉԻ ՎՃԱՐՎՈՒՄ ԵԿԱՄՏԱՀԱՐԿ

1. ԵԿԱՄՈՒՏ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐՐԵՐԻՑ

2. ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ

Այս եկամուտները սահմանված են եկամտահարկի մասին օրենքի 9, 10, 11 հոդվածներում, եթե Ձեր ստացված եկամուտը գտնեք այդ հոդվածներում, ապա Դուք այդ եկամուտներից հարկ հաշվարկող չեք և դրանց մասին հայտարարագիր չեք ներկայացնելու

Նշենք դրանցից մի քանիսը.

- Զինծառայողների զինծառայության հետ կապված եկամուտները, ներառյալ պարենային բավարարման արժեքը
- նորմաների սահմաններում փոխհատուցման վճարները, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների
- ՀՀ օրենսդրությանը համապատասխան ժառանգության և նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույ քը և դրամական միջոցները

և այլն

Եթե Ձեր ստացած եկամտի տեսակը նշված չէ եկամուտ չհամարվող տարրերում կամ նվազեցվող եկամուտներում, ապա Դուք ստացել եք հարկման ենթակա եկամուտներ և գտնվում եք հարկման դաշտում:

Բացի վերոնշյալներից, հարկվող եկամուտը որոշելիս գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից ստացված եկամուտների չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

<u>ՕՐԻՆԱԿ</u> : Ոսկեվազ գյուղի բնակիչ Հ. Հակոբյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողակտորի վրա 2008 թ. ընթացքում աճեցրել է 300կգ. լոլիկ և 500կգ. վարունգ ու հանձնել է Միգմա ՄՊԸ-ին, ինչի դիմաց ստացել է 100,0 հազ. դրամ եկամուտ: Նշված քաղաքացին նույն ժամանակահատվածում կատարել է նաև կոշիկի վերանորոգում (վարելով առանձին հաշվառում), որի համար ունի պետական գրանցում և ստացել է 10,0 հազ. դրամի եկամուտ:

Տվյալ դեպքում, քանի որ այլ գործունեությունից ստացված եկամուտը (10,0 հազ. դրամ) չի գերազանցում համախառն եկամտի (100,0+10,0=110,0 հազ. դրամ) 10%-ը, ապա ֆիզիկական անձի ստացած այդ եկամուտը եկամտահարկով հարկման ենթակա չէ:

Ֆիզիկական անձը եկամտահարկ վճարելու համար նվազեցնում է ոչ միայն նվազեցվող եկակամուտները, այլև «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մյուս նվազեցումները: Այդպիսի նվազեցումներ են համարվում.

- Հարկատուի հաշվին կատարվող կենսաթոշակային, զբաղվածության, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գումարը,
- Բարեգործական և այլ անհատույց հատկացումները

Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է թվարկված կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցած ծառայությունների արժեքի չափով, բայց սույն օրենքին համապատասխան հաշվարկված՝ հարկվող եկամտի հինգ տոկոսից ոչ ավելի.

ա) հասարակական և կրոնական կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցություններին.

բ) համատիրություններին, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այն կազմակերպություններին, որոնք կազմակերպվել և գործում են բացառապես կրոնական, բարեգործական, գիտական, հասարակական անվտանգության նպատակով փորձարկման, շրջակա միջավայրի պաշտպանության, գրականության, մշակույթի և կրթության զարգացման ու քարոզման, սպառողների իրավունքների պաշտպանության, սիրողական սպորտի խթանման և կազմակերպման, տղամարդու, կանանց, երեխաների և ծերերի իրավունքների պաշտպանության նպատակներով.

գ) գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին.

դ) հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին

*<u>Օրինակ</u>. Ա/Ձ Պետրոս Պետրոսյանի հաշվետու տարվա համախառն եկամուտը՝ 32 մլն դրամ, որի դիմաց փաստաթղթերով հիմնավորված ծախսերը կազմել են 10 մլն դրամ: Հաշվետու տարվա ընթացքում Ա/Ձ Պետրոս Պետրոսյանը համար 189 միջնակարգ դպրոցին օգնության կարգով տրամադրել էր 2 համակարգիչ՝ յուրաքանչյուրը 210,000 դրամ արժեքով, «Ձատիկ» մանկատանը 0,5 մլն. դրամ և 1,7 մլն դրամի մանկական հագուստ կրկին բարեգործական նպատակով: Ողջ բարեգործական հատկացումները կազմել են 2,62 մլն դրամ (210.000*2+500.000+1.700.000), սակայն ելնելով եկամտահարկի մասին օրենքի պահանջներից կարող ենք նվազեցնել առավելագույնը հարկվող եկամտի 5%-ը: Հարկվող եկամուտը կկազմի՝ 32.000.000-10.000.000-1.047.619=20.952.381 դրամ: Բարեգործական հատկացումների գծով նվազեցումը կկազմի՝ 20.952.381 x 5%= 1.047.619 դրամը*

- անձնական նվազեցումը

ԱՆՁՆԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հարկման դաշտում գտնվելը դեռևս չի նշանակում, որ անձի մոտ իր ստացված հարկման ենթակա եկամուտներից առաջացել է հարկային պարտավորություն, քանի որ եկամուտ ստացող յուրաքանչյուր անձ իրավունք ունի նաև կատարել իրեն հասանելիք չհարկվող մասը, որը կոչվում է անձնական նվազեցում:

Անձնական նվազեցման չափը սահմանված է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 30.000 դրամ գումարով, որը վերաբերվում է եկամուտ ստացող յուրաքանչյուր անձին, բացառությամբ միայն ռոյալթի, տոկոս կամ գույքը վարձակալության տալու դիմաց վարձակալական վճարներ ստացող անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, եթե վերջիններս չեն հանդիսանում եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնող:

Տարվա ընթացում անձնական նվազեցումը ՀՀ քաղաքացուն կարող է վերապահվել նրան եկամուտ վճարող հարկային գործակալ (կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ) կողմից: Եթե ֆիզիկական անձը եկամուտներ է ստացել տարբեր հարկային գործակալներից, ապա 30,0 հազ. դրամի չափով անձնական նվազեցումը իրականացվում է յուրաքանչյուր հարկային գործակալի կողմից:

ՕՐԻՆԱԿ: ՀՀ քաղաքացուն 2009 թ հունվար ամսին հաշվարկվել է աշխատավարձ «Ալֆա» ՍՊԸ-ում 30.000 դրամ գումարով և «Անի» ՍՊԸ-ում համատեղության կարգով աշխատանք կատարելու դիմաց աշխատավարձ՝ 20.000 դրամ գումարով: Տվյալ դեպքում հունվար ամսին այդ անձին հաշվարկված եկամուտներից եկամտահարկի պարտավորություն չի առաջանա, քանի որ նրա հարկվող եկամուտը որոշելու համար հարկային գործակալները իրականացնում են անձնական նվազեցում՝ յուրաքանչյուրը 30.000 դրամ գումարով:
Եթե վերը նշված քաղաքացին լիներ օտարերկրյա քաղաքացի, ապա կազմակերպություններից յուրաքանչյուրը որպես հարկային գործակալ առանց անձնական նվազեցման կհաշվարկեին համապատասխանաբար 30.000 դրամ գումարից և 20.000 դրամ գումարից եկամտահարկի պարտավորությունները:

Ո՞Վ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ

1. *Կազմակերպությունը*
2. *Անհատ ձեռնարկատերը*

Հարկային գործակալը ֆիզիկական անձին եկամուտ վճարող այն անձն է(կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր), ում վրա օրենքով դրված է պարտականություն այդ եկամուտներից հաշվարկել, պահել և բյուջե փոխանցել եկամտահարկ:

Հարկային գործակալը հարկի պահում չի իրականացնում, եթե՝

- վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) արդյունք են, և հարկային գործակալի հետ կնքվում է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), անձնագրի տվյալները և ՀՀ բնակության հասցեն, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացման պետական գրանցման վկայականի համարը,
- վճարվող եկամուտները խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտներ (շահումներ) են,
- վճարվող եկամուտները մրցույթների և մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային շահումներ (մրցանակներ) են

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. *Եկամտի վճարման աղբյուրում հարկվող եկամուտ վճարելիս (բացառությամբ ռոյալթիների, տոկոսների, գույքը վարձակալության հանձնելու դիմաց վճարվող վարձավճարների և ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտների), հարկային գործակալը ամսական հաշվարկման կարգով որոշված հարկվող եկամտից եկամտահարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով՝*

Ամսական հարկվող եկամտի չափը	*Հարկի գումարը*
Մինչև 80.000 դրամ	*Հարկվող եկամտի 10%*
80.000 դրամից ավելի	*8.000 դրամին գումարած 80.000 դրամը գերազանցող գումարի 20 %*

2. *Հարկային գործակալի միջոցով չհարկված եկամուտներից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը) (բացառությամբ ռոյալթիների, տոկոսների, գույքը վարձակալության հանձնելու դիմաց վճարվող վարձավճարների և ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտների) եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝*

Տարեկան հարկվող եկամտի չափը	*Հարկի գումարը*
Մինչև 960.000 դրամ	*Հարկվող եկամտի 10%*
960.000 դրամից ավելի	*96.000 դրամին գումարած 960.000 դրամը գերազանցող գումարի 20 %*

Հարկվող եկամտի տեսակ	*Հարկի գումարը*
Ռոյալթիների, գույքը վարձակալության տալու եկամուտներից, տոկոսների համար եկամտահարկը	*10% առանց հաշվի առնելու օրենքով սահմանված նվազեցումները*
ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտներից	*10 %*
Սահմանված կարգով ֆիզիկական անձանց հետ գրավոր երկկողմանի փաստաթուղթ չկազմելու դեպքում	*11 %*

Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հարկման առանձնահատկությունները

Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից հարկը պահվում (գանձվում) է ուղեցույցի 1-ին կետում նշված դրույքաչափերով:

Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց եկամուտներ վճարելիս հարկային գործակալները հարկը պահում (գանձում) են եկամտի վճարման աղբյուրի մոտ հետևյալ չափերով՝

Հարկվող եկամտի տեսակ	*Հարկի գումարը*
ապահովագրությունից ստացված ապահովագրական հատուցումներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	*5 %*
ռոյալթիներ, տոկոսներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտ, գույքի արժեքի հավելաճ և այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից). ինչպես նաև հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտներ	*10 %*

ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտահարկի պահումը (գանձումը) իրականացվում է յուրաքանչյուր վճարման դեպքում, իսկ յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկի պահումը (գանձումը) իրականացվում է հաշվարկված հարկվող եկամտից:

***ՕՐԻՆԱԿ**: ՀՀ քաղաքացու ամսական աշխատավարձը կազմում է 80 000 դրամ: Հարկվող եկամուտը հաշվարկելու և եկամտահարկի պահումը իրականացնելու համար հարկային գործակալը նախ պետք է իրականացնի օրենքով սահմանված նվազեցումները, որից հետո, հարկվող եկամտի մեծությունից կախված, կիրառի համապատասխան դրույքաչափ.*

Համախառն եկամուտ (հաշվարկված աշխատավարձ)	-	*80.000 դրամ*
Անձնական նվազեցում		*30.000 դրամ*
Աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճար		*80.000 x3%=2.400 դրամ*
Հարկվող եկամուտ		*80.000-30.000-2.400=47.600 դրամ*
Եկամտահարկ		*47.600x10%= 4.760 դրամ*
Աշխատողին վճարվելիք գումար		***80.000- 4.760 - 2.400= 72 .840 դրամ***

***ՕՐԻՆԱԿ:** Կազմակերպությունը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող ՀՀ քաղաքացուն 2009 թ մարտի 5-ին վճարում է փետրվար ամսվա հաշվարկված աշխատավարձը 150.000 դրամ գումարով: Հաշվենք աշխատավարձից պահվող եկամտահարկի գումարը:*

Համախառն եկամուտ (հաշվարկված աշխատավարձ)		*150.000 դրամ*
Անձնական նվազեցում		*30.000 դրամ*
Աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճար		*150.000 x3%=4.500 դրամ*
Հարկվող եկամուտ		*150.000-30.000-4.500=115.500դրամ*
Եկամտահարկ		*8.000+(115.500-80.000)x20%=15.100դրամ*
Աշխատողին վճարվելիք գումարը՝		***150.000- 4.500 - 15.100= 130 .400 դրամ***

Հաշվարկված 15.100 դրամի եկամտահարկի գումարը կազմակերպությունը պարտավորվում է վճարել մինչև 2009թ մարտի 20-ը ներառյալ:

ՕՐԻՆԱԿ. *Հայաստանյան կազմակերպությունում աշխատող օտարերկրյա քաղաքացու ամսական աշխատավարձը կազմում է 150 000 դրամ: Հարկային գործակալի կողմից եկամտահարկի պահումն իրականացնելու համար պետք է հաշվի առնել օրենքի այն դրույթը, ըստ որի հարկային գործակալը հարկվող եկամուտը որոշելիս անձնական նվազեցում չի կատարում: Քանի որ սոցիալական վճարները կարգավորող օրենսդրությամբ օտարերկրյա քաղաքացիների աշխատավարձից սոցիալական վճարներ չեն պահվում, ապա նրանց համար համախառն եկամուտը հանդիսանում է նաև հարկվող եկամուտ:*
Տվյալ դեպքում եկամտահարկի գումարը կկազմի՝
8.000 +(150.000-80.000)x 20% = 22.000 դրամ
Աշխատողին կվճարվի՝
150.000 – 22.000 = 128.000 դրամ

ՕՐԻՆԱԿ: *Պողոս Պողոսյանի 2009թ հունվար ամսվա աշխատավարձը կազմում է 90.000 դրամ, որը նրան է վճարվել հունվարի 31-ին՝ նախապես պահելով օրենքով սահմանված հարկերը և պարտադիր վճարները: Աշխատավարձից հաշվարկված եկամտահարկը կկազմի՝ (90.000-90.000*3%-30.000)*10%=5.730 դրամ:*
2009թ Փետրվար ամսվա 5-ին տնօրենի հրամանի համաձայն Պողոս Պողոսյանը ստանում է 50.000 դրամի պարգևատրում 2009թ հունվար ամսին ցուցաբերած աշխատանքային բարձր առաջադիմության պատճառով:
Մինչև պարգևատրման վճարելը անհրաժեշտ է կատարել եկամտահարկի ամողական հարկում

Համախառն եկամուտ	*90.000+50.000= 140.000 դրամ*
Անձնական նվազեցում	*30.000 դրամ*
Պարտադիր սոցիալական ապահովագրության վճար	*140.000 x 3 %= 4.200 դրամ*
Հարկվող եկամուտ	*140.000-30.000-4.200=105.800 դրամ*
Եկամտահարկ	*8.000+ (105.800-80.000)x20%= 13.160*

Հաշվանցելով աշխատավարձից հաշվարկված եկամտահարկի գումարը՝ 5730 դրամ, որոշվում է պարգևատրման գումարից պահվող եկամտահարկի գումարը՝
13.160-5.730= 7.430 դրամ

Օրինակ. *Կազմակերպությունը 2009 թ. փետրվարի 15-ին շուկայում առանց հիմնավորող փաստաթղթի ձեռք է բերել ապրանք, որի դիմաց վճարել է 50,0 հազ. դրամ և չի ներկայացրել որևէ տեղեկություն հարկային մարմնին:*
Տվյալ դեպքում կազմակերպությունը հանդիսանում է հարկային գործակալ և պարտավոր է կատարել եկամտահարկի պահում գնված ապրանքի արժեքից 11% դրույքաչափով (50,0x11%=5,5 հազ. դրամ), որը ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2009թ. մարտի 20-ից ոչ ուշ:

ՕՐԻՆԱԿ *«Ա» ՍՊԸ-ն քաղաքացի Պողոս Պողոսյանից 2009թ փետրվարի 1-ին վարձակալել է մարդատար ավտոմեքենա՝ վարչական նպատակներով օգտագործելու համար: Ամսական վարձավճարը համաձայն պայմանագրի կազմում է 250.000 դրամ, որը «Ա» ՍՊԸ-ն պարտավորվում է վճարել յուրաքանչյուր ամսվա վերջին: Սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով «Ա» ՍՊԸ-ն չի կարողացել վճարել 2009թ փետրվար և մարտ ամիսների վարձավճարը սահմանված ժամկետներում: 2009թ ապրիլի 20-ին վճարել է 450.000 դրամ վարձավճար՝ որպես հարկային գործակալ կատարելով եկամտահարկի պահում 500.000x10%=50.000 դրամ գումարի չափով:*
Պահված հարկի գումարը կազմակերպությունը պարտավորվում է վճարել պետական բյուջե մինչև 2009թ մայիսի 20-ը ներառյալ:

ՕՐԻՆԱԿ: *ՀՀ քաղաքացին հայաստանյան կազմակերպության հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով ամսվա ընթացքում կազմակերպությանը մատուցել է ծառայություններ, որի արդյունքում կազմված ծառայությունների հանձնման-ընդունման ակտով կողմերը փաստել են 150.000 դրամի մատուցված ծառայություններ: Եկամտահարկը հաշվարկելու համար պետք է հաշվի առնել, որ սոցիալական վճարները կարգավորող իրավական ակտերի համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերով կատարված աշխատանքների և ծառայությունների գծով ստացված եկամուտներից սոցիալական վճարներ չեն պահվում (սոցիալական վճարները հաշվարկվում են միայն գործատուի հաշվին.*

Հարկվող եկամուտը կկազմի՝
150.000-30.000=120.000 դրամ
*Եկամտահարկը՝ 8.000+(120.000-80.000)*20%=16.000 դրամ*

ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Համաձայն «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» 169-րդ հոդվածի՝ ամենամյա արձակուրդի համար գործատուն աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով.

Արձակուրդային գումարից եկամտահարկի հաշվարկման առանձնահատկությունն այն է, որ անհրաժեշտ է ըստ ամիսների (եթե արձակուրդի տևողությունը, հետևաբար նաև արձակուրդի գումարը, բաշխվում է մեկից ավելի ամիսների վրա) առանձնացնել յուրաքանչյուր ամսին վերաբերող եկամուտները և դրանցից ելնելով՝ կատարել համապատասխան հաշվարկներ:

ՕՐԻՆԱԿ: *Կազամակերպության աշխատողին, որի ամսական աշխատավարձի մեծությունը 180. 000 դրամ է, 2009 թվականի մարտի 13-ից տրվել է ամենամյա արձակուրդ՝ 28 օրացուցային օր տևողությամբ: Աշխատողն արձակուրդից վերադարձել է սահմանված ժամկետում և ապրիլ ամսվա մնացած օրերին աշխատել է ընդհանուր սահմանված աշխատանքային ռեժիմով: Աշխատողին արձակուրդային գումարը և մարտին հասանելիք աշխատավարձը վճարվել է մարտի 10-ին, իսկ ապրիլ ամսվա աշխատավարձը աշխատած օրերի դիմաց վճարվել է մայիսի 5-ին: Հաշվարկվաշ միջին աշխատավարձը կազմում է 150.000 դրամ:*

Արձակուրդային գումարը= միջին օրական աշխատավարձ x արձակուրդի օրերի թիվ

Միջին օրական աշխատավարձ= միջին աշխատավարձ / 30.4

Միջին օրական աշխատավարձ = 150.000/30.4=4934 դրամ

Արձակուրդային գումարը= 4934 x 28= 138.152 դրամ

Արձակուրդի գնալիս վարձու աշխատողի արձակուրդային գումարները 2009թ մարտ ամսվա եկամտահարկը հաշվելիս հաշվի են առնվում հետևյալ ձևով՝

- *2009թ մարտ ամսվա աշխատած օրերի աշխատավարձ+ մարտ ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումար*

մարտ ամսվա աշխատած օրերի աշխատավարձը կկազմի (մարտի 1-ից մարտի 12-ը ներառյալ)

180.000/31 x 12 = 69,677 դրամ

Մարտ ամսին բաժին ընկնող արձակուրդային գումարը կկազմի

4934x 19= 93.746

Աշխատողի համար մարտ ամսվա համախառն եկամուտը կազմում է 69.677+93.746=163.423 դրամ

Համախառն եկամուտ	*163.423 դրամ*
Անձնական նվազեցում	*30.000 դրամ*
Պարտադիր սոցիալական ապահովության վճար	*4.903 դրամ*
Հարկվող եկամուտ	*163.423 -30.000-4.903 = 128.520 դրամ*
Եկամտահարկ	*(128.520-80.000)x 20%+8.000= 17.704դրամ*

Ստացված եկամտահարկի գումարը կազմակերպությունը պարտավորվում է վճարել մինչև 2009թ ապրիլի 20-ը ներառյալ:

	2009թ ապրիլ ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումարից կատարում ենք համապատասխան նվազեցումներ և հաշվարկում եկամտահարկ *4.934x9=44.406 դրամ* *եկամուտ 44.406 դրամ* *Անձնական նվազեցում 30.000 դրամ* *Պարտադիր սոցիալական ապահովության վճար 1.332 դրամ* *Հարկվող եկամուտ 44.406-30.000-1.332=13.074 դրամ* *Եկամտահարկ 13.074x 10% =1.307,4 դրամ* *Վարձու աշխատողի արձակուրդից վերադառնալուց հետո 2009թ ապրիլ ամսվա համար աշխատավարձը հաշվարկելիս կատարվում է աճողական կարգով 2009թ ապրիլ ամսվա հարկվող եկամտի և եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով այդ ամսվա համար հաշվարկված արձակուրդայինի և աշխատավարձի գումարներից:* *2009թ ապրիլ ամսվա աշխատավարձը (ապրիլի 10-ից 30–ը ժամանակահատվածի համար՝21 օր) կկազմի* *180.000/30*21=126.000 դրամ* *Ապրիլ ամսվա համախառն եկամուտը կկազմի՝ 126.000+44.406=170.406 դրամ* *Անձնական նվազեցում 30.000 դրամ* *Պարտադիր սոցիալական ապահովության վճար 5.112 դրամ* *Հարկվող եկամուտ 170.406 -30.000-5.112 = 135.294 դրամ* *Եկամտահարկ (135.294 -80.000)x 20%+8.000= 19.059դրամ* *2009թ ապրիլ ամսվա եկամտահարկի գումարը կազմում է 19.059 դրամ, որը մինչև 2009թ մայիսի 20-ը (ներառյալ) ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե:* *2009թ ապրիլ ամսվա աշխատավարձից պահվող եկամտահարկի գումարը կկազմի՝* *19059-1307.4 = 17.751,6 դրամ*	

ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

1. *Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին ներկայացնել սահմանված ձևով ամփոփ հաշվարկ՝ ֆիզիկական անձանց վճարված (աշխատանքի վարձատրության և դրա հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկված) եկամուտների և պահված հարկի գումարների մասին հաշվարկի (ձևը ներկայացված է հավելված 1-ում):*

2. *Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են տարին մեկ՝ հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ, իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին ներկայացնել օրենսդրությամբ սահմանված ձևով և կարգով անվանական տեղեկություններ՝ անցած տարում իրենց կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների, այդ եկամուտների պահված և բյուջե փոխանցված եկաուտների մասին: Նշված տեղեկությունը չեն ներկայացնում, եթե ֆիզիկական անձանց վճարված եկամուտները չեն գերազանցում 360.000 դրամը (12 ամիս x 30.000):*
   Տեղեկության ձևը ներկայացված է հավելված 2-ում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ, ՆՈՏԱՐԻ) ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎՃԱՐՎԱԾ (ՀԱՇՎԱՐԿՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ՊԱՀՎԱԾ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

ՕՐԻՆԱԿ: *2009թ առաջին եռամսյակի ընթացքում «Անի» ՍՊԸ-ն իր աշխատակիցներին հաշվարկել է աշխատավարձ և եկամտահարկը հետևյալ կերպ `հաշվարկները ներկայացված են աղյուսակային տեսքով*

«ԱՆԻ» ՍՊԸ-ի աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների ամփոփ հաշվարկ
2009թ հունվար ամիս

N	Անվանում	Առձեռն	Հաստիք	Պարգևատրում	Ընդամենը հատկացված է	Անհատական սոցապ	Եկամտահարկ	Ընդամենը պահված է
1	Մարգարյան Մարգար	95,920	120,000	50,000	170,000	5,100	18,980	24,080
2	Բաղդասարյան Սուրեն	46,650	50,000		50,000	1,500	1,850	3,350
3	Մարտիրոսյան Արամ	114,880	130,000		130,000	3,900	11,220	15,120
4	Նիկողոսյան Մարիներ	195,760	240,000	20,000	260,000	7,800	36,440	44,240
5	Գրիգորյան Գրիգոր	81,570	90,000		90,000	2,700	5,730	8,430
6	Ալավերդյան Կարինե	51,570	60,000	30,000	90,000	2,700	5,730	8,430
	ԸՆԴԱՄԵՆԸ	**586,350**	**690,000**	**100,000**	**790,000**	**23,700**	**79,950**	**103,650**

«ԱՆԻ» ՍՊԸ-ի աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների ամփոփ հաշվարկ
2009թ փետրվար ամիս

N	Անվանում	Առձեռն	Հաստիք	Ընդամենը հատկացված է	Անհատական սոցապ	Եկամտահարկ	Ընդամենը պահված է
1	Մարգարյան Մարգար	107120	120000	120000	3600	9280	12880
2	Բաղդասարյան Սուրեն	46650	50000	50000	1500	1850	3350
3	Մարտիրոսյան Արամ	114880	130000	130000	3900	11220	15120
4	Նիկողոսյան Մարիներ	200240	240000	240000	7200	32560	39760
5	Գրիգորյան Գրիգոր	81570	90000	90000	2700	5730	8430
6	Ալավերդյան Կարինե	55380	60000	60000	1800	2820	4620
7	Լուկինա Մարինա (օտարերկրյա քաղաքացի)	72000	80000	80000	0	8000	8000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**677840**	**770000**	**770000**	**20700**	**71460**	**92160**

2009 թ «ԱՆԻ» ՍՊԸ-ի աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների ամփոփ հաշվարկ
2009թ մարտ ամիս

N	Անվանում	Առձեռն	Հաստիք	Ընդամենը հատկացված է	Անհատական սոցապ	Եկամտահարկ	Ընդամենը պահված է
1	Մարգարյան Մարգար	107120	120000	120000	3600	9280	12880
2	Մարտիրոսյան Արամ	114880	130000	130000	3900	11220	15120
3	Նիկողոսյան Մարիներ	200240	240000	240000	7200	32560	39760
4	Գրիգորյան Գրիգոր	81570	90000	90000	2700	5730	8430
5	Ալավերդյան Կարինե	55380	60000	60000	1800	2820	4620
6	Լուկինա Մարինա (օտարերկրյա քաղաքացի)	72000	80000	80000	0	8000	8000
		631190	**720000**	**720000**	**19200**	**69610**	**88810**

Բացի վերը նշվածից 2009թ փետրվար ամսվա ընթացքում առանց հիմնավորված փաստաթղթերի ձեռք է բերել 100.000 դրամի գրենական պիտույքներ, որի դիմաց հաշվարկել է եկամտահարկ՝ 100.000 x 11 %= 11.000 դրամ ինչպես նաև 2009թ փետրվարի 1-ին քաղաքացի Կարեն Կարապետյանի հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում 2009թ մարտի 5-ին վճարել է 150.000 դրամ (150.000 դրամը հաշվարկային մեծություն է):

Այժմ վերը նշված օրինակի հիման վրա կազմենք «Անի» ՍՊԸ-ի 2009թ առաջին եռամսյակի եկամտահարկի հաշվետվությունը:

- *Հաշվետվության 7-րդ և 8-րդ սյունակներում լրացվում են հաշվետու եռամսյակի համապատասխան ամիսներին հաշվարկած աշխատավարձերի և դրանցից հաշվարկված եկամտահարկի հաշվարկային տվյալները ըստ աշխատավարձի մեծության:*
- *Քանի որ կազմակերպությունը 2009թ փետրվար և մարտ ամիսների ունեցել է օտարերկրյա քաղաքացի աշխատակից , ապա նրա հաշվարկված աշխատավարձը և դրանից պահված եկամտահարկի գումարները համապատասխանաբար կարտացոլվեն 26-րդ և 27-րդ սյունակներում:*
- *2009թ փետրվար ամսվա ընթացքում առանց հիմնավորված փաստաթղթերի ձեռքբերումը կարտացոլվի հաշվարկի 22 տողում:*
- *քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում կատարված վճարումը կարտացոլվի հաշվարկի 10-րդ տողի համապատասխան սյունակում:*

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված (հաշվարկված) եկամուտների, պահված եկամտահարկի	Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)

ՀԱՇՎԱՐԿ	(2009թ._I__եռամսյակ)	Ճշտված	

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	[1]	0	0	0	0	0	0	0	0	
Կազմակերպության անվանումը	[2]	«ԱՆԻ» ՍՊԸ								
Անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) անունը, ազգանունը	[3]									
Գտնվելու (բնակության) վայրը	[4]	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 20								
Հեռախոսը	[5]									
Հաշվարկի ներկայացման ամսաթիվը	[6]	15 ապրիլ 2009թ								

Չափի միավոր	Հազար դրամ

- [1] տողում նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- [2] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպական-իրավական ձևը
- [3] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը և ազգանունը
- [4] տողում նշվում է կազմակերպության գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) բնակության վայրը
- [5] տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) աշխատանքային հեռախոսահամարը
- [6] տողում նշվում է հարկային մարմին հաշվարկի ներկայացման ամսաթիվը

ՀՀ քաղաքացիներին վճարված (հաշվարկված) եկամուտների տեսակը		Եկամուտների գումարը ըստ ամիսների [7]			Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [8]		
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	[9]	790.0	690.0	640.0	79.9	63.5	61.7
30.900 դրամից ոչ ավելի	[9ա]						
աշխատողների թվաքանակ	*[9ա-1]*				*x*	*x*	*x*
113.400 դրամից ոչ ավելի	[9բ]	230.0	200.0	150.0	13.3	10.4	8.6
աշխատողների թվաքանակ	*[9բ-1]*	3	3	2	*x*	*x*	*x*
113.400 դրամից ավելի	[9գ]	560	490.0	490.0	66.6	53.1	53.1
աշխատողների թվաքանակ	*[9գ-1]*	3	3	3	*x*	*X*	*x*
Այլ աշխատանքի վարձատրություն	10]			150.0			16.0
աշխատողների թվաքանակ	*[10-1]*			1	*x*	*x*	*x*
Ռոյալթի	[11]						
Տոկոս	[12]						
Շահաբաժին	[13]				x	x	x
Խաղատներում, շահումներով խաղերում շահում	[14]				x	x	x
Մրցույթների, մրցությունների մրցանակ	[15]						
Վիճակախաղերի շահում	[16]				x	x	x
Նվիրատվություն, օգնություն	[17]						
Ապահովագրական հատուցում	[18]				x	x	x
Գույքն օտարելու դիմաց վճարված եկամուտ	[19]						
Վարձակալական վճար	[20]						
Ապահովագրավճար	[21]						
Առանց հիմնավորող փաստաթղթերի վճարում	[22]		100.0			11.0	
Անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտ	[23]				x	x	x
Այլ եկամուտներ	[24]						
Ընդամենը	*[25]*	790.0	790.0	790.0	79.9	74.5	77.7

● [7] սյունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված (աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում՝ հաշվեգրված) եկամուտների հաշվարկային մեծությունը

● [8] սյունակներում նշվում են [7] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի գումարը

● [9] տողում նշվում է [9ա], [9բ] և [9գ] տողերի հանրագումարը

● [9ա], [9բ], [9գ] տողերում նշվում են տվյալ ամսում վարձու աշխատողներին հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ վճարված նյութական օգնության և ապահովագրական նպաստների /բացառությամբ՝ հղիության ու ծննդաբերության նպաստների/ գումարների, ինչպես նաև մինչև 01.01.2009 թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, որոնք վճարվել են 2009 թ. հունվարի 1-ից հետո) ու դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, իսկ [9ա-1], [9բ-1], [9գ-1] տողերում՝ տվյալ ամսում այդ եկամուտներին համապատասխանող վարձու աշխատողների փաստացի թվաքանակը (այլ ոչ թե՝ հաշվարկների կամ վճարումների թիվը)

● [10] տողում նշվում է տվյալ ամսում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, իսկ [10-1] տողում՝ տվյալ ամսում այդ եկամուտները ստացած ֆիզիկական անձանց փաստացի թվաքանակը (եթե ֆիզիկական անձը ստանում է [9] և [10] տողերում նշված եկամուտներ, ապա [10-1] տողը չի լրացվում /չի գումարվում/)

● [11]-[24] տողերում նշվում են տվյալ ամսում ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարը, ընդ որում՝ [17] տողը վերաբերում է վարձու աշխատող չհանդիսացող ֆիզիկական անձանց տրված նվիրատվության և օգնության գումարներին, [21] տողում չեն նշվում պարտադիր սոցիալական ապահովության վճարները, [22] տողում նշվում են ,Եկամտահարկի մասինե ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի ,աե ենթակետի համաձայն վճարված եկամուտների և դրանցից հաշվարկված եկամտահարկի գումարները

● [25] տողում նշվում է [9]-[24] տողերի հանրագումարը

● նվազեցվող եկամուտները (բացառությամբ՝ [13], [14], [16] և [18] տողերում նշվածների) հաշվարկում չեն արտացոլվում

Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հայաստանյան աղբյուրներից վճարված (հաստատված) եկամուտների տեսակը		Եկամուտների գումարը՝ ըստ ամիսների [26]			Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [27]		
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	[28]		**80.0**	**80.0**		**8.0**	**8.0**
30.900 դրամից ոչ ավելի	[28ա]						
աշխատողների թվաքանակ	[28ա-1]				x	x	x
113.400 դրամից ոչ ավելի	[28բ]		80.0	80.0		8.0	8.0
աշխատողների թվաքանակ	[28բ-1]		1	1	x	x	x
113.400 դրամից ավելի	[28գ]						
աշխատողների թվաքանակ	[28գ-1]				x	x	x
Այլ աշխատանքի վարձատրություն	[29]						
աշխատողների թվաքանակ	[29-1]				x	x	x
Անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտ	[30]				x	x	x
Պասիվ եկամուտներ՝							
- ռոյալթիներ	[31]						
- տոկոսներ	[32]						
- շահաբաժիններ	[33]				x	x	x
- խաղատներում, շահումներով խաղերում շահում	[34]						
- մրցույթների, մրցությունների մրցանակներ	[35]						
- վիճակախաղերի շահումներ	[36]						
- նվիրատվություն, օգնություն	[37]						
- ապահովագրական հատուցում	[38]						
- գույքն օտարելուց արժեքի հավելաճ	[39]						
- վարձակալական վճար	[40]						
- փոխադրման (ֆրախտի) դիմաց վճարված եկամուտ	[41]						
- ապահովագրավճար	[42]						
Այլ եկամուտներ	[43]						
Ընդամենը	*[44]*		**80.0**	**80.0**		**8.0**	**8.0**

● [26] սյունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված (աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում՝ հաշվեգրված) եկամուտների հաշվարկային մեծությունը

● [27] սյունակներում նշվում են [26] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) հարկի գումարը

● [28] տողում նշվում է [28ա], [28բ] և [28գ] տողերի հանրագումարը

● [28ա], [28բ], [28գ] տողերում նշվում է տվյալ ամսում վարձու աշխատողներին հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ նյութական օգնության և ապահովագրական նպաստների /բացառությամբ՝ հղիության ու ծննդաբերության նպաստների/ գումարների, ինչպես նաև մինչև 01.01.2009 թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, որոնք վճարվել են 2009 թ. հունվարի 1-ից հետո) ու դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարը, իսկ [28ա-1], [28բ-1], [28գ-1] տողերում՝տվյալ ամսում այդ եկամուտները ստացած վարձու աշխատողների փաստացի թվաքանակը (այլ ոչ թե՝ հաշվարկների կամ վճարումների թիվը)

● [29] տողում նշվում է տվյալ ամսում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ի ընդհանուր գումարները, իսկ [29-1] տողում՝ տվյալ ամսում այդ եկամուտները ստացած ֆիզիկական անձանց փաստացի թվաքանակը (եթե ֆիզիկական անձը ստանում է [28] և [29] տողերում նշված եկամուտներ, ապա [29-1] տողը չի լրացվում /չի գումարվում/)

● [30]-[43] տողերում նշվում են տվյալ ամսում ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, ընդ որում՝ [30] տողը վերաբերում է ՀՀ-ում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտներին, [37] տողը վերաբերում է վարձու աշխատող չհանդիսացող ֆիզիկական անձանց տրված նվիրատվության և օգնության գումարներին

● [44] տողում նշվում է [28]-[43] տողերի հանրագումարը

Մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ 01.01.2009 թ-ից հետո փաստացի վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	Վճարված եկամուտների գումարը՝ըստ ամիսների [45]			Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [46]		

● [45] սյունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված՝ մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկային մեծությունը (որը ներառված է նախորդ աղյուսակներում)

● [46] սյունակներում նշվում են [45] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի գումարը

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր, նոտար) _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Գլխ. հաշվապահ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Քաղաքացին իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից:

- ***Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույքը օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:***

Ձեռնարկատիրական գործունեությունից անհատ ձեռնարկատիրոջ հարկվող եկամտի որոշման ժամանակ կիրառվում է հաշվառման հաշվեգրման եղանակը, այսինքն՝ ելնելով նրա կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ ծախսի դիմաց վճարում կատարելու հանգամանքից:

Անհատ ձեռնարկատիրոջ հարկվող եկամուտը որոշելիս, համախառն եկամուտը նվազեցվում է (նվազեցվող եկամուտներից և անձնական նվազեցումներիկց բացի) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների գծով անհարժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով՝ իր կողմից ներկայացվող հայտարարագրի հիման վրա:

Ծախսերի թվին են դասվում՝

- նյութական ծախսերը.
- ամորտիզացիոն մասհանումները.
- վարձակալական վճարները.
- ապահովագրական վճարները.
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները.
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսները.
- երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային այլ ծառայությունների համար վճարները.
- գովազդային ծախսերը.
- ներկայացուցչական ծախսերը.
- դատական ծախսերը.
- գործուղման ծախսերը.
- պատճառած վնասի հատուցումը.
- տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գանձվող տույժերի, տուգանքների և գույքային այլ սանկցիաների.
- աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը.
- ֆակտորինգային, հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունների ծախսերը.
- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը:

Քաղաքացուն կվճարվի՝ 150.000-16.000=134.000 դրամ գումար

- Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաթղթերով չհիմնավորված այն ծախսերի չափով (այսինքն՝ երբ ձեռքբերման մասով առկա է միակողմանի գնման ակտ), որոնց համար հարկային մարմնին 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և ձևով ներկայացվել են տեղեկություններ (այդ թվում՝ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքների մասով) և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է՝ դրա վերաբերյալ հարկային մարմնից գրավոր տեղեկատվություն ստանալու հաշվետու ժամանակաշրջանում:*

* ենթակա է փոփոխման 2010 թվականից

➢ ***Ծախս չեն համարվում այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները***

- Ձեռնարկատիրական գործունեության իրականացման դեպքում ամորտիզացիոն մասհանումների և այլ ծախսերի հաշվարկման, համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի, ծախսատեսակների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նորմաների, համախառն եկամտից ծախսերի նվազեցման իրականացման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հաշվետու տարվա վնասների մասով կիրառվում են իրավաբանական անձանց համար «Շահութահարկի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված նորմերը:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

Տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ ստացող հարկատուն յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա եկամտահարկի փաստացի գումարի 1/6 չափով յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ կատարում է եկամտահարկի կանխավճարներ:

Կանխավճարներից ազատվում են հետևյալ հարկատուները.

- **որոնք նախորդ տարում ունեցել են վնաս,**
- **որոնց նախորդ տարվա եկամտահարկի գումարը չի գերազանցել 500.000 դրամը**
- **որոնք նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չեն համարվել ԱԱՀ վճարող, եկամտահարկի հաշվարկ ներկայացնելուց հետո կարող են կանխավճարներ չվճարել**

Մինչև նախորդ տարվա փաստացի եկամտահարկի գումարի հաշվարկումը հարկատուն եկամտահարկի կանխավճարները առաջին անգամ (մինչև մարտի 15-ը) կատարում է նախորդ տարվա վերջին՝ կանխավճարի չափից ոչ պակաս:


***ՕՐԻՆԱԿ**: Ա/Ձ Պողոս Պողոսյան-ի 2008թ.-ի ընթացքում յուրաքանչյուր եռամսյակ կատարել է եկամտահարկի կանխավճարային մուծումներ 2007թ.-ի տարեկան եկամտահարկի 1/6-ի չափով՝ 150 հազար դրամ: 2009թ.-ի ապրիլի 15-ին Ա/Ձ Պողոս Պողոսյանը հարկային տեսչության մարմիններին ներկայացրում է եկամտահարկի հաշվարկ, ըստ որի եկամտահարկի գումարը կազմում է 4.2 մլն դրամ, իսկ 2009թ.-ի եկամտահարկի ամսական կանխավճարը՝ 4.2 մլն/6=0.7մլն դրամ: Քանի որ 2008թ.-ի եկամտահարկի հաշվարկը ներկայացրել է ապրիլի 15-ին, ապա Ա/Ձ Պողոս Պողոսյանի առաջին եռամսյակի եկամտահարկի կանխավճարային մուծումը կկազմի 150 հազար դրամ: Արդյունքում Ա/Ձ Պողոս Պողոսյան-ի երկրորդ եռամսյակում եկամտահարկի կանխավճար կկատարի 700 հազար դրամի չափով երկրորդ եռամսյակի համար, ինչպես նաև 550 հազար դրամ (700.000-150.000) առաջին եռամսյակի համար պակաս վճարելու պատճառով:*

Կանխավճարների չափը որոշվում է երկու եղանակով.

- նախորդ տարվա փաստացի եկամտահարկի գումարի հիման վրա, որը հաշվարկվում է այն դեպքում,երբ ընթացիկ տարում չի սպասվում եկամուտների որևէ նվազեցում: Յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ ձեռնարկատերերը կատարում են կանխավճարների վճարում նախորդ տարվա փաստացի եկամտահարկի 1/6-ի չափով:
- նախատեսվող ընթացիկ տարվա հարկվող եկամտի չափի հիման վրա, որը կիրառվում է այն դեպքում,երբ ձեռնարկատերը ընթացիկ տարում սպասում է նախորդ տարվա համեմատ եկամտի նվազեցում: Սպասվող եկամուտներից ելնելով՝ ձեռնարկատերը ինքնուրույն որոշում է կանխավճարների չափը՝այդ մասին հարկային մարմիններին հայտնելով մինչև նախորդ տարվա եկամուտների հայտարարագրման օրը:Կանխավճարները հաշվարկելիս ձեռնարկատերը պետք է նկատի ունենա, որ տարեկան կանխավճարների հանրագումարը տվյալ տարվա փաստացի եկամտահարկի 2/3-ից պակաս լինելու դեպքում ենթարկվելու է տույժի:

Ձեռնարկատերը հաշվետու տարվա ավարտից հետո հաշվարկում է փաստացի եկամտահարկի գումարը, հաշվանցում է կանխավճարների գումարները և տարբերությունը վճարում բյուջե: Եկամտահարկի մնացորդի վճարման վերջին ժամկետը հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ն է:

Եթե կանխավճարների հանրագումարը գերազանցում է փաստացի եկամտահարկի գումարը, ապա ավել փոխանցված գումարը վերադարձվում է հարկատուին:


ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐԸ
ԱԱՀ ՎՃԱՐՈՂ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ
ԱԱՀ ՎՃԱՐՈՂ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ
Եկամտահարկի նվազագույն գումար վճարվում է եռամսյակային կտրվածքով՝ հաշվարկվելով ձեռնարկատիրոջ նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների, արտադրանքի իրացման և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի և նույն ժամանակաշրջանում այդ եկամտի 50%-ը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ՝ 1% դրույքաչափով:
ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում նվազագույն եկամատահարկը վճարվում է եռամսյակային կտրվածքով՝ հաշվարկվելով ձեռնարկատիրոջ նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների, արտադրանքի իրացման և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի 1% դրույքաչափով:
Եկամտահարկի կանխավճարներ կատարողներ չհանդիսացող հարկատուները վճարում են եկամտահարկի նվազագույն գումարը, իսկ այն հարկատուները, որոնք հանդիսանում են եկամտահարկի կանխավճար կատարողներ, վճարում են եկամտահարկի կանխավճարի և եկամտահարկի նվազագույն գումարի մեծություններից առավելագույնը: Նվազագույն եկամտահարկի տարեկան հանրագումարի և հաշվետու տարվա փաստացի եկամտահարկի դրական տարբերությունը նվազեցվում է հետագա տարիների եկամտահարկից:

Օրինակ: *ԱՁ հակոբ հակոբյանը (ԱԱՀ վճարող), որը զբաղվում է առևտրային գործունեությամբ, 2009թ.-ի երկրորդ եռամսյակում ունեցել է 10.000.000 դրամ եկամուտ: 2008թ արդյունքներով ԱՁ-ի տարեկան եկամտահարկի գումարը կազմել է 420.000 դրամ, իսկ 2009թ կատարվելիք կանխավճարի գումարը՝ 420.000/6=70.000 դրամ: ԱՁ-ի հիմնական միջոցների երկրորդ եռամսյակի ամորտիզացիոն մասհանումների չափը կազմում է 2.000.000 դրամ: Քանի որ հիմնական միջոցների երկրորդ եռամսյակի ամորտիզացիոն մասհանումների գումարը չի գերազանցում երկրորդ եռամսյակում եկամտի 50 տոկոսը՝ 2.000.000< 10.000.000x50%, այդ իսկ պատճառով երրորդ եռամսյակի նվազագույն եկամտահարկը կկազմի՝80 հազար դրամ ((10.000.000-2.000.000)*1%): Հետևաբար քանի որ ԱՁ-ի եկամտահարկի կանխավճարի հաշվարկային մեծությունը փոքր է քան հաշվարկված նավազագույն եկամտահարկն է՝ 70.000< 80.000, ապա անհատ ձեռներեցը պետք է պետական բյուջե փոխանցի հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարը՝ 80.000 դրամի չափով:*

- *Եթե ԱՁ հակոբ հակոբյանը համարվեր ԱԱՀ չվճարող, ապա հաշվի չէր առնի ամորտիզացին մասնահանումների գումարը և հաշվարկը կկատարեր հետևյալ կերպ՝*

կհաշվարկեր նվազագույն եկամտահարկի գումարը՝ 10.000.000x1%=100.000 դրամ, որը կհամեմատեր եկամտահարկի կանխավճարի գումարի հետ և պետ բյուջե կփոխանցեր այդ մեծություններից առավելագույնը՝ 100.000 դրամ(70.000< 100.000)

ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

Հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են իրենց բնակության (հաշվառման) վայրի հարկային մարմնին ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով իրենց տարեկան եկամուտների մասին հաշվարկ: Ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված հարկատուները ներկայացնում են եկամուտների պարզեցված հաշվարկ:

Հարկ վճարող ֆիզիկական անձինք իրենց հարկային տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնում են հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ (հաշվարկի ձևաթուղթը ներկայացված է հավելված 3-ում):
Հաշվարկ կարող են չներկայացնել այն հարկատուները, որոնք հարկային տարվա ընթացքում ստացել են՝

- Բացառապես եկամտահարկի մասին օրենքով սահմանված նվազեցվող եկամուտներ
- բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից հարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալի վրա՝ անկախ հարկային տարվա ընթացքում հարկվող եկամտի մեծությունից.
- հարկային տարվա ընթացքում 300,000 դրամը չգերազանցող համախառն եկամուտ, որից հարկային գործակալի կողմից հարկի պահում չի իրականացվել.
- ֆիզիկական անձինք, ովքեր հարկային տարվա ընթացքում զբաղվել են բացառապես եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարների ձևով հարկվող գործունեության տեսակներով և չեն ստացել այլ՝ սույն օրենքով սահմանված հաշվարկման ենթակա եկամուտներ:

Տարեկան հարկվող եկամուտը որոշելիս, անձը ինքնուրույնաբար կատարում է հայտարարագրվող համախառն եկամտից իրեն հասանելիք նվազեցումները՝ նվազեցվող եկամուտները, անձնական նվազեցումները, ծախսերը, ինչպես նաև հայտարարագրվող եկամուտներից կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

❖

ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ = ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ- ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐ

Նշված կարգով որոշված տարեկան հարկվող եկամտի գումարից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Տարեկան հարկվող եկամտի չափը	*Հարկի գումարը*
Մինչև 960.000 դրամ	*Հարկվող եկամտի 10%*
960.000 դրամից ավելի	*96.000 դրամին գումարած 960.000 դրամը գերազանցող գումարի 20 %*

***ՕՐԻՆԱԿ**: Անհատ Ձեռնարկատեր Պողոս Պետրոսյանը, որը համարվում է ԱԱՀ վարող, զբաղվում ապրանքների ներմուծմամբ և վաճառքով: 2009թ արդյունքներով տնտեսական գործունեությունը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.*

1. *Համախառն եկամուտը՝ 25.000.000 (առանց ԱԱՀ-ի)*
   այդ թվում՝
   - *Ձեռնարկատիրական գործունեությունից (ապրանքների իրացումից հասույթը)-22.000.000 դրամ*
   - *Քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամուտը- 3.000.000 դրամ*
2. *2009թ ընթացքում կատարվել են հետևյալ ծախսերը, այդ թվում*
   - *Վաճառված ապրանքների ինքնարժեք - 18.000.000*
   - *Տարաքի վարձակալության վճար- 1.000.000*
   - *Գովազդի ծախսեր- 2.000.000*
   - *ՀՀ տարածքում կատարված գործուղման ծախսեր- 500.000*
   - *Ներկայացուցչական ծախսեր 1000.000 դրամի , որից հիմնավորված փաստաթղթերով ծախսերը կազմում են 700.000 դրամը*

2009թ ընթացքում կատարել է կանխավճարներ 200.000 դրամի չափով:

Եկամտահարկը հաշվարկելու համար նախ և առաջ անհատ ձեռնարկատերը պետք է որոշի այն եկամուտը, որից հաշվարկում է եկամտահարկը: Այնուհետև օրենքով սահմանված դրույքաչափերով հաշվարկվում է եկամտահարկի գումարը:

Համախառն եկամուտ		Անձնական նվազեցումներ		Ծախսեր
22.000.000+3.000.000 = 25.000.000	-	12 x 0.000=360.000	-	18.000.000+1.000.000 +2.000.000

ԵԿԱՄՈՒՏ, ՈՐԻՑ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ԵԿԱՄՏԱՀԱՐԿ
2.440.000

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԸ= 96.000+(2.440.000-960.000)x20% =392.000 դրամ

Այսպիսով անհատ ձեռնարկատիրոջ կողմից հաշվարկված եկամտահարկի գումարը 2009թ համար կազմում է 392.000 դրամ, սակայն քանի որ նա 2009թ-ի ընթացքում կատարել է կանխավճարներ 200.000 դրամի չափով, ապա դրանց տարբերությունը՝ 392.000-200.000=192.000 դրամ, ենթակա է վճարման պետական բյուջե մինչև 2010թ մայիսի 1-ը ներառյալ:

Առանձին հարկ վճարողների 2008 և 2009 թվականների եկամտահարկը

2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա եկամտահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա եկամտահարկը չեն կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2 տոկոսից և ավելի՝ համախառն եկամտի 10 տոկոսից: Սույն հոդվածին համապատասխան վճարված գումարները համարվում են այդ տարիների համար եկամտահարկի վերջնական գումարներ:

<u>ՕՐԻՆԱԿ:</u> *ՍՁ հակոբ հակոբյանը օրենսդրության փոփոխության հետևանքով 2008թ-ից չի համարվում ԱԱՀ վճարող: 2009թ-ի արդյունքներով ՍՁ Պողոս Պողոսյանի համախառն եկամուտը կազմում է 15 մլն դրամ, կատարվող նվազեցումների ծավալը կազմում է 14 մլն դրամ: Այսինքն եկամտահարկով հարկվող օբյեկտը 1 մլն դրամն է /15մլն-14մլն/: Եկամտահարկը կկազմի (1.000.000-960.000)*20%+96.000=104.000: Սակայն ՍՁ Պողոս Պողոսյանի եկամտահարկի պարտավորությունը ոչ թե 104.000 դրամն է այլ նրա համախառն եկամտի 2%-ը (15.000.000*2%=300.000), քանի որ այն ավելի մեծ է քան 104.000 դրամը: Ամփոփելով նշենք, որ այն ՍՁ-ները, որոնք չեն համարվում ԱԱՀ-վճարող և հարկվում են ընդհանուր կարգով, նրանց եկամտահարկի պարտավորությունը չի կարող պակաս լինել համախառն եկամտի 2%-ից կամ ավել 10%-ից: Այսինքն հարկատուն պետք է հաշվարկի եկամտահարկի պարտավորություն օրենքով սահմանված կարգին համապատասխան, այնուհետև ստացված մեծությունը համեմատի համախառն եկամտի ինչպես 2%-ի, այնպես էլ 10%-ի հետ, եթե ստացված մեծությունը փոքր է համախառն եկամտի 2%-ից, ապա եկամտահարկի պարտավորություն կկազմի համախառն եկամտի 2%-ը, եթե մեծ է 10%-ից, ապա եկամտահարկի պարտավորություն կկազմի համախառն եկամտի 10%-ի չափով, իսկ եթե հաշվարկված եկամտահարկի մեծությունը գտնվի համախառն եկամտի 2 % - 10% միջակայքում, ապա եկամտահարկի պարտավորությունը կկազմը հենց ստացված մեծությունը:*

Հավելված 2
«Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգ ավելված 2

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին

Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ **(20____թ.)**

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) տվյալները

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	[1]	
Կազմակերպության անվանումը	[2]	
Անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) անունը,ազգանունը	[3]	
Գտնվելու (բնակության) վայրը	[4]	
Հեռախոսը	[5]	
Տեղեկության ներկայացման ամսաթիվը	[6]	

Չափի միավոր՝ հազար դրամ

- [1] տողում նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- [2] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը
- [3] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը և ազգանունը
- [4] տողում նշվում է կազմակերպության գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) բնակության վայրը
- [5] տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) աշխատանքային (տան) հեռախոսահամարը
- [6] տողում նշվում է հարկային մարմին տեղեկությունների ներկայացման ամսաթիվը

Տվյալներ եկամուտներ ստացած ֆիզիկական անձանց մասին

Աղյուսակ

N	Անունը, ազգանունը	Անձնագիր		Քաղաքացիությունը	Բնակության հասցեն		Սոցիալական քարտի համարը	Վճարված եկամուտների գումարը	Պահված հարկի գումարը	Սոցիալական վճարը	Փաստացի վճարված գումարը
		սերիան և համարը	տրված է		մշտական	ՀՀ-ում ժամանակավոր					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											
12											
13											
14											
15											
16											
17											
18											
19											
20											
...											

- [1] սյունակում նշվում է տեղեկության հերթական համարը
- [2] սյունակում նշվում են ֆիզիկական անձի ազգանունը և անունը (ամբողջությամբ)
- [3] սյունակում նշվում են ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը
- [4] սյունակում նշվում է լիազորված մարմնի անվանումը (կոդը) և նրա կողմից անձնագրի տրման ամսաթիվը
- [5] սյունակում նշվում է ֆիզիկական անձի քաղքացիությունը (ՀՀ քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ)
- [6] սյունակում նշվում է ֆիզիկական անձի անձնագրում գրանցված մշտական բնակության հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը)
- [7] սյունակում նշվում է ֆիզիկական անձի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր բնակության հասցեն
- [8] սյունակում նշվում է ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)
- [9] սյունակում նշվում է հաշվետու տարում ֆիզիկական անձին փաստացի վճարված բոլոր եկամուտների (բացառությամբ՝ նվազեցվող եկամուտների) հաշվարկային մեծությունը
- [10] սյունակում նշվում են [9] սյունակում նշված եկամուտներից պահված (գանձված) հարկի գումարները
- [11] սյունակում նշվում են [9] սյունակում նշված եկամուտներից պահված (գանձված) պարտադիր սոցիալական ապահովության վճարը (3%)
- [12] սյունակում նշվում են [9] սյունակում նշված եկամուտներից ֆիզիկական անձին փաստացի վճարված գումարները

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Գլխ.հաշվապահ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)»:

Հաշվարկ
ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին

Բաժին I. Քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտներ, աշխատանքի վարձատրություն, դրան հավասարեցված այլ վճարումներ

Քաղաքացիաիրավական պայմանագրերից եկամուտներ	[1]	
Քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով անհրաժեշտ ծախսեր՝		
- նյութական ծախսեր	[2]	
- վարձակալական վճարներ	[3]	
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ	[4]	
- բանկային ծառայությունների համար վճարներ	[5]	
- դատական ծախսեր	[6]	
- գործուղման ծախսեր	[7]	
- պատճառած վնասի հատուցում	[8]	
- տույժեր, տուգանքներ և գույքային այլ սանկցիաներ	[9]	
- աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական ծախսեր	[10]	
- այլ ծախսեր	[11]	
Ընդամենը ծախսեր	[12]	
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	[13]	
Այլ նվազեցումներ	[14]	
Քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով արդյունք	[15]	

- [1] տողում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերից (բացառությամբ II բաժնում նշված) եկամուտները, ընդ որում ռեզիդենտները հաշվի են առնում << տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, ոչ ռեզիդենտները հաշվի են առնում հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները, իսկ նվազեցվող եկամուտները հաշվի չեն առնվում
- [2]…[11] տողերում նշվում են քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով եկամուտներից նվազեցվող ծախսերը: Ընդ որում՝ [4] տողում չեն նշվում գույքահարկը և հողի հարկը, [9] տողում չեն նշվում << պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները
- [12] տողում նշվում է քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով կատարված ծախսերի հանրագումարը (տող[2]+…+տող[11])
- [13] տողում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերից աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները (այդ թվում նյութական օգնության գումարները), ընդ որում՝ ռեզիդենտները հաշվի են առնում << տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, ոչ ռեզիդենտները հաշվի են առնում հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները
- [14] տողում նշվում են աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված կենսաթոշակային, գբաղվածության, պարտադիր սոցիալական ապահովության վճարները
- [15] տողում նշվում է քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատանքի վարձատրության և դրան հավասարեց-ված այլ վճարումների գծով արդյունքը ((տող[1]-տող[12])+(տող[13]-տող[14])), որը տեղափոխվում է [50] տող (եթե արդյունքը բացասական է, ապա գումարը նշվում է փակագծերում)

Բաժին II. Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտներ

Եկամուտների տեսակը		Եկամտի գումարը [16]	Դրույքաչափը [17]	Եկամտահարկը [18]
Ռոյալթի	[19]			
Տոկոս	[20]			
Վարձակալության դիմաց վճար (վարձավճար)	[21]			
Գույքի օտարման դիմաց եկամուտ	[22]			
		Ընդամենը	[23]	

- [16] սյունակում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողներից՝ ռոյալթիները, տոկոսները, վարձավճարները և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կառուցապատողի կողմից անշարժ գույքի՝ օրենքով սահմանված չափը գերազանցող տարածքների օտարումից եկամուտը, ընդ որում՝ ռեզիդենտները հաշվի են առնում << տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, ոչ ռեզիդենտները հաշվի են առնում հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները
- [17] սյունակում նշվում են եկամտի այդ տեսակի համար հարկի սահմանված դրույքաչափերը

- [18] սյունակում նշվում են [19], [20], [21] և [22] տողերում նշված եկամտից հաշվարկված եկամտահարկի գումարները (սյունակ [16]xսյունակ[17])
- [23] տողում նշվում է ռոյալթիներից, տոկոսներից, վարձավճարներից և գույքի օտարման դիմած եկամտից հաշվարկ-ված եկամտահարկի հանրագումարը (տող[19]/սյունակ[18]+տող20/սյունակ[18]+տող21/սյունակ[18]+տող22/սյունակ [18])

Բաժին III Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ

Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ	[24]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսեր՝		
- նյութական ծախսեր	[25]	
- ամորտիզացիոն մասհանումներ	[26]	
- վարձակալական վճարներ	[27]	
- ապահովագրական և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	[28]	
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ	[29]	
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսներ	[30]	
- բանկային ծառայությունների համար վճարներ	[31]	
- գովազդային ծախսեր	[32]	
- ներկայացուցչական ծախսեր	[33]	
- դատական ծախսեր	[34]	
- գործուղման ծախսեր	[35]	
- պատճառած վնասի հատուցում	[36]	
- տույժեր, տուգանքներ և գույքային այլ սանկցիաներ	[37]	
- աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական ծախսեր	[38]	
- նախորդ 3 տարում պակաս ցույց տրված ծախսեր	[39]	
- այլ ծախսեր	[40]	
Ընդամենը ծախսեր	[41]	
Նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը	[42]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունք	[43]	

- [24] տողում նշվում են ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, ընդ որում՝ ռեզիդենտները հաշվի են առնում << տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, ոչ ռեզիդենտները հաշվի են առնում հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները
- [25]…[40] տողերում նշվում են ձեռնարկատիրական գործունեության գծով եկամուտներից նվազեցվող ծախսերը: Ընդ որում՝ [37] տողում չեն նշվում << պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները, իսկ [39] տողում նշվում են հաշվետու տարում հայտնաբերված դրան անմիջապես նախորդող 3 տարում պակաս ցույց տրված ծախսերը
- [41] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով նվազեցվող ծախսերի հանրագումարը (տող[25]+..+տող[40])
- [42] տողում նշվում է նախորդ տարվանից փոխանցված հարկային վնասը
- [43] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունքը (տող[24]-տող[41]-տող[42]), ընդ որում՝ եթե արդյունքը բացասական է, ապա [59] տողում գումարը նշվում է փակագծերի մեջ և կրած վնասը տեղափոխվում է հաջորդ տարի (սույն հայտարարագրի հետագա հաշվարկում հաշվի չի առնվում), իսկ եթե արդյունքը դրական է, ապա այն տեղափոխվում է տող[51]

Բաժին IV. Ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց եկամուտներ

Ամիս	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
[44]												
[45]												
[46]												
[47]												
[48]												
Ընդամենը										[49]		

- [44] տողում լրացվում են հարկային գործակալների հետ ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերից եկամուտների, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ նյութական օգնության), ինչպես նաև նվազեցվող եկամուտների գումարները (ըստ ամիսների)
- [45] տողում նշվում են եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար անձնական նվազեցումների ամսական մեծությունը (25000 դրամ)
- [46] տողում նշվում են եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկված նվազեցվող եկամուտները (ըստ ամիսների)
- [47] տողում նշվում են ըստ ամիսների հարկվող եկամտի գումարները (տող[44]-տող[45]-տող[46])

- [48] տողում նշվում են ամսական հարկվող եկամտից ([47] տողում նշված) հաշվարկված եկամտահարկը
- [49] տողում նշվում է [48] տողում ըստ ամիսների հաշվարկված հարկի հանրագումարը

Բաժին V. Տարեկան եկամտահարկի հաշվարկ

Քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով արդյունք	[50]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունք	[51]	
Տարեկան եկամուտների ստացման ամիսներ	[52]	
Անձնական նվազեցումների տարեկան մեծություն	[53]	
Հարկվող եկամուտ	[54]	
Բարեգործական և այլ անհատույց հատկացումներ	[55]	
Տարեկան հարկվող եկամուտ	[56]	
Տարեկան հարկվող եկամտից եկամտահարկ	[57]	
Տարվա համար հաշվարկված եկամտահարկ	[58]	
Նվազագույն եկամտահարկի տարեկան գումար	[59]	
Ընդամենը տարվա համար հաշվարկված եկամտահարկի գումար	[60]	
Եկամտահարկի գումարից չհաշվանցված նվազագույն եկամտահարկ	[61]	
Տարվա համար վճարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները	[62]	
Հարկային գործակալների կողմից պահված հարկի գումարը	[63]	
Այլ պետություններում պահված հարկի գումարը	[64]	
Այլ պետություններում պահված հարկի գումարի հաշվանցվող մասը	[65]	
Հարկային արտոնությունների գումարը	[66]	
Ընդամենը նվազեցման ենթակա տարեկան եկամտահարկի գումարը	[67]	
Ենթակա է վճարման կամ վերադարձման (հաշվանցման)	[68]	

- [50] տողում նշվում է քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով արդյունքը (բաժին I)
- [51] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքը (բաժին III)
- [52] տողում նշվում է տարվա ամիսների թիվը, որոնց վերաբերվում են I և III բաժիններում նշված եկամուտները
- [53] տողում նշվում է անձնական նվազեցումների տարեկան մեծությունը (տող[52]x25000)
- [54] տողում նշվում է հարկվող եկամտի գումարը {(տող [50]+տող [51])-տող[53]}
- [55] տողում նշվում է տարվա ընթացքում կատարված բարեգործական և այլ անհատույց հատկացումների նվազեցվող գումարը (տող [54]-տող[54]/1,05)
- [56] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեությունից, քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերից տարեկան հարկվող եկամուտի գումարը (տող[54]-տող[55])
- [57] տողում նշվում է [56] տողում նշված տարեկան հարկվող եկամտից (տարեկան դրույքաչափերով) հաշվարկված եկամտահարկի գումարը
- [58] տողում նշվում է տարվա համար հաշվարկված եկամտահարկի հանրագումարը (տող[23]+տող[49]+տող[57])
- [59] տողում նշվում է հաշվետու տարում հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարը՝ որպես եկամտահարկի եռամսյակային գումարների հանրագումար
- [60] տողում նշվում է ընդամենը տարվա համար հաշվարկված եկամտահարկը (տող[58] և տող[59] առավելագույնը)
- [61] տողում նշվում է նախորդ և հաշվետու տարիներում վճարված՝ եկամտահարկի գումարից չհաշվանցված նվազագույն եկամտահարկի գումարը (հաջորդ տարիներ փոխանցվող եկամտահարկի նվազագույն գումարը)
- 62] տողում նշվում է հարկային տարվա համար վճարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները
- [63] տողում նշվում է (հարկային գործակալների կողմից տրված տեղեկանքների հիման վրա) եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) եկամտահարկի գումարը
- [64] և [65] տողերում նշվում են այլ պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան պահված (գանձված) եկամտահարկը (օտարերկրյա պետության համապատասխան հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա) և եկամտահարկի այն գումարը, որի չափով ՀՀ օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման տարեկան եկամտահարկը
- [66] տողում նշվում է օրենքով սահմանված հարկային արտոնությունների ընդհանուր գումարը
- [67] տողում նշվում է տարեկան եկամտահարկից նվազեցման ենթակա գումարը (տող[62]+տող[63]+տող[65]+տող[66])
- [68] տողում նշվում է ՀՀ պետական բյուջե վճարման կամ ՀՀ պետական բյուջեից վերադարձման (հաշվանցման) ենթակա եկամտահարկի գումարը (տող[60]-տող[67]՝ բացասական արդյունքերը նշվում է փակագծերի մեջ)

Հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն եկամտահարկերի գումարներ (ըստ եռամսյակների)

Եռամսյակ	I	II	III	IV	Ընդամենը
Գումար					

Հաշվարկը ներկայացնողի ստորագրությունը

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԸՍՏ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ

1. ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՀ քաղաքացիների աշխատանքի վարձատվությանն ուղղվող և դրան հավասարեցված միջոցների (ԱՎՈՒՄ) 3% -ի չափով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Եկամուտների հաշվարկմանը հաջորդող ամսվա 20-ը ներառյալ

ՈՒՄ ՄԻՋՈՑՈՎ

Հաշվարկների ճշտության և վճարումը ժամանակին կատարելու պարտականությունը կրում է գործատուն

2. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԸ

ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ԱՎՈՒՄԸ (դրամ)	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ
ՄԻՆՉԵՎ 20.000	7.000 դրամ
20.000-100.000	7.000 + 20.000 դրամը գերազանցող մասի 15 %-ը
100.000 դրամից ավելի	19.000 + 100.000 դրամը գերազանցող մասի 5 %-ը

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Եկամուտների հաշվարկմանը հաջորդող ամսվա 20-ը ներառյալ

ՈՒՄ ՄԻՋՈՑՈՎ

Հաշվարկների ճշտության և վճարումը ժամանակին կատարելու պարտականությունը կրում է գործատուն

3. Քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից եկամուտ ստացած ֆիզիկական անձ

ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ԵԿԱՄՈՒՏ (ԴՐԱՄ)	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ	
	Գործատուի հաշվին	Ֆիզ անձից
ՄԻՆՉԵՎ 20.000	7.000 դրամ	չի պահվում
20.000-100.000	7.000 + 20.000 դրամը գերազանցող մասի 15 %-ը	չի պահվում
100.000 դրամից ավելի	19.000 + 100.000 դրամը գերազանցող մասի 5 %-ը	չի պահվում

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Եկամուտների հաշվարկմանը հաջորդող ամսվա 20-ը ներառյալ

ՈՒՄ ՄԻՋՈՑՈՎ

Հաշվարկների ճշտության և վճարումը ժամանակին կատարելու պարտականությունը կրում է գործատուն

4. ԱԱՀ վճարող հանդիսացող ՀՀ քաղաքացի Անհատ Ձեռնարկատերը

ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափը (դրամ)	Սոցիալական Վճար
Մինչև 1.200.000 դրամ	15 %, բայց ոչ պակաս 60.000 դրամից
1.200.000 դրամից ավելի	180.000+1.200.000 դրամը գերազանցող մասի 5%-ը

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը ներառյալ՝ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և ամսական նվազագույն սոցիալական վճարների՝ 60.000-ի, դրական տարբերությունը

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Յուրաքանչյուր ամսվա համար նվազագույն սոցիալական վճարներ են վճարում մինչև հաջորդ ամսվա 15-ը՝ 5000 դրամ

ՈՒՄ ՄԻՋՈՑՈՎ

Հաշվարկների ճշտության և վճարումը ժամանակին կատարելու պարտականությունը կրում է Անհատ Ձեռնարկատերը ինքնուրույն

5.1 ԱԱՀ վճարող չհանդիսացող ՀՀ քաղաքացի Անհատ Ձեռնարկատերը

ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

	Սոցիալական Վճար
Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափ	3 %, բայց ոչ պակաս 60.000 դրամից

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը ներառյալ՝ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և ամսական նվազագույն սոցիալական վճարների՝ 60.000-ի, դրական տարբերությունը :

2. Յուրաքանչյուր ամսվա համար նվազագույն սոցիալական վճարներ են վճարում մինչև հաջորդ ամսվա 15-ը՝ 5000 դրամ:

Օրինակ՝

Կազմակերպությունը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն 2009թ. սեպտեմբերի 4-ին հաշվում և վճարում է օգոստոս ամսվա աշխատավարձ՝ 80,0 հազ. դրամ (ԱՎՈՒՄ) գումարով:

Օգոստոս ամսվա համար հաշվարկված 80,0 հազ. դրամ ԱՎՈՒՄ–ից պետք է հաշվարկվի վարձու աշխատողի համար սոցիալական վճար 3% և գործատուի սոցիալական վճար: Հաշվարկված սոցիալական վճարները գործատուն պետք է վճարի մինչև հաշվարկված ամսվանը հաջորդող ամսվա 20-ը ներառյալ (20.09.2009):

Սոցիալական վճարները գործատուի կողմից հաշվարկվում է հետևյալ կերպ՝

- *աշխատողի համար սոցիալական վճար 3%*
  80.000x3%=2.400 դրամ
- *գործատուի կողմից վճարվող սոցիալական վճար՝*
  7.000+(80.000-20.000)x15%=16.000 դրամ

Այսպիսով, ստացանք որ գործատուն մինչև 20.09.09թ. ներառյալ պետ. բյուջե պետք է վճարի աշխատողի համար սոցիալական վճար 3%՝ 2.400դրամ և գործատուի կողմից սոցիալական վճար՝16.000 դրամ, ընդամենը՝ 16.000+2.400=18.400 դրամ

Օրինակ

Կազմակերպությունը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն 2009թ. մայիսի 5-ին հաշվարկում և վճարում է ապրիլ ամսվա աշխատավարձ՝ 155,000 դրամ (ԱՎՈՒՀ) և 50.000 դրամի չափով պարգևատրում:

Ապրիլ ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի և վճարի հաշվարկ՝ ելնելով աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների ընդհանուր գումարից՝150,000+50.000= 200.000:

Հաշվարկված ԱՎՈՒՀ-ից պետք է հաշվարկվի վարձու աշխատողի համար սոցիալական վճար 3% և գործատուի սոցիալական վճար:

Սոցիալական վճարները գործատուի կողմից հաշվարկվում է հետևյալ կերպ՝

- *աշխատողի համար սոցիալական վճար 3%*
  200,000x3%=6,000 դրամ

- *գործատուի կողմից վճարվող սոցիալական վճար՝*
  (200,000-100,000)x5%+19,000=24,000 դրամ

Այսպիսով, ստացանք որ գործատուն պետք է մինչև 20.05.09թ. ներառյալ պետ. բյուջե վճարի աշխատողի համար սոցիալական վճար 3%՝ 6,000 դրամ և գործատուի կողմից սոցիալական վճար՝ 24.000 դրամ. ընդամենը 30.000 դրամ:

Օրինակ

Կազմակերպությունը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող օտարերկրյա քաղաքացուն 2009թ. մայիսի 5-ին հաշվարկում և վճարում է ապրիլ ամսվա աշխատավարձ՝120,000 դրամ (ԱՎՈՒՀ) գումարով: Այս դեպքում (բացառությամբ այն դեպքի, եթե օտարերկրյա քաղաքացին կամավոր ցանկանում է կատարել սոց.վճարներ) օտարերկրյա քաղաքացին և գործատուն ազատվում են պարտադիր սոցիալական վճարների կատարումից:

Այն դեպքում, երբ օտարերկրյա քաղաքացին և քաղաքացիություն չունեցող անձը օրենքով սահմանված կարգով կամավոր ստանձնում է սոցիալական վճարներ կատարելու պարտականություն, ապա գործատուին պարտավոր է նրա աշխատավարձից կատարել 3 % դրույքաչափով սոցիալական վճարի պահում և փոխանցել ՀՀ պետական բյուջե: Այս դեպքում քաղաքացին և քաղաքացիություն չունեցող անձը կունենա ապահովագրական նպաստի իրավունք:

ԱՄԵՆԱՄՅԱ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՀԱՇՎԱՐԿ

Ամենամյա արձակուրդի ընթացքում պահպանվում է աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում միջին աշխատավարձ:
Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 28 օրացուցային օր է: Աշխատողի ցանկությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով, ընդ որում գործատուի և աշխատողի միջև այլ համաձայնություն չլինելու դեպքում, արձակուրդի մասերից մեկը պետք է կազմի առնվազն 2 աշխատանքային շաբաթ: Յուրաքանչյուր աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ տարում օրենքով սահմանված կարգով, սակայն աշխատողի և գործատուի համաձայնությամբ ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը կարող է միացվել հաջորդ տարվա ամենամյա արձակուրդին: Ամենամյա արձակուրդի համար գործատուն աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է վարձու աշխատողի միջին օրեկան աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով: Միջին աշխատավարձի հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում աշխատանքի վարձատրությանն ուղղվող բոլոր տեսակները (այդ թվում՝ լրավճարներ հավելավճարներ, պարգևատրումներ , միանվագ վճարներ, բացառությամբ օգնության գումարների):

- *հասանելիք արձակուրդային գումար = միջին օրական աշխատավարձ x հասանելիք արձակուրդի օրեր*
- *միջին օրական աշխատավարձը = միջին աշխատավարձ/30.4 (30.4՝ մեկ ամսվա միջին օրացուցային օրերի թիվն է):*
- *միջին աշխատավարձ =արձակուրդ գնալու ամսվան նախորդող վերջին 12 լրիվ ամիսների ընթացքում գործատուի կողմից աշխատողին վճարված ամենամյա աշխատավարձի (ներառյալ՝ լրավճարների, հավելավճարների և պարգևատրումների) ընդհանուր գումարը բաժանվում է 12-ի: Եթե որևէ պատճառով տասներկու ամիսները լրիվ չեն ծևավորվում, ապա աշխատողի միջին աշխատավարձի չափը հաշվարկվում է հնարավոր մյուս բոլոր միմյանց նախորդող լրիվ ամիսների և դրանց համար աշխատողին վճարված աշխատավարձի (ներառյալ՝ լրավճարների, հավելավճարների և պարգևատրումների) ընդհանուր գումարը լրիվ ամիսների թվի վրա բաժանելու միջոցով:*

Ամենամյա արձակուրդի վճարումների դեպքում սոցիալական վճարները հաշվարկվում և վճարվում են ընդհանուր սահմանված կարգով:

Օրինակ

Կազմակերպության վարձու աշխատողը (<< քաղաքացին) գնում է հերթական (ամենամյա) արձակուրդ 2009թ. հուլիսի 20-ին և վերադառնում է 2009թ.-ի օգոստոսի 17-ին (արձակուրդի տևողությունը՝ 28 օրացույցային օր): Աշխատողի ԱՎՈՒՄ-ը աշխատած վերջին լրիվ 12 ամիսների համար կազմում է 960,000 դրամ: Հուլիս-օգոստոս ամիսների աշխատավարձը կազմում է ամսական 80,000 դրամ:

Տվյալ դեպքում յուրաքանչյուր ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ելնելով տվյալ ամսվան վերաբերող արձակուրդային գումարի և աշխատավարձի ընդհանուր գումարից (ԱՎՈՒՄ):

Արձակուրդայինը հաշվելու համար կատարում ենք հետևյալ քայլերը՝ որոշում ենք

- *միջին աշխատավարձը `960,000/12=80,000 դրամ*
- *միջին օրական աշխատավարձ՝ 80,000/30.4=2,632 դրամ*
- *հասանելիք արձակուրդի օրեր՝ 28 օր*
- *հասանելիք արձակուրդային գումար՝ 2,632x28=73,696*

Հուլիս ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը հետևյալն է՝

- *ԱՎՈՒՄ ՝ 80,000/31օր x 19+73,696/28օրx12օր=80,616 դրամ*

  80/31x 19 օր - մեծությունը իրենից ներկայացնում է հուլիս ամսվա համար հաշվարկված աշխատավարձը

  73,696/28օրx12օր- մեծությունը իրենից ներկայացնում է հուլիս ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումարը

  գործատուի սոցիալական վճար ՝

  (80,616-20,000)x15%+7000=16,092 դրամ
- *վարձու աշխատողի համար սոցիալական վճար 3% (80,616x3%)=2,418դրամ*
- *Ընդամենը սոցիալական վճար՝ 16,092+2,418=18,510 դրամ*

Հուլիս ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄԸ՝ 80,616դրամ և սոցիալական վճարները՝ 18,510դրամ, արտացոլվում են հուլիս ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում,իսկ սոցիալական վճարները ենթակա են կազմակերպության կողմից վճարման մինչև 20.08.2009թ.(ներառյալ):

Օգոստոս ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը հետևյալն է՝

- *ԱՎՈՒՄ (73,696/28օրx16օր+80,000/31օրx15օր)=80,822դրամ*
- *գործատուի սոցիալական վճար (80,822-20,000)x15%+7000=16,123 դրամ*
- *վարձու աշխատողի համար սոցիալական վճար 3% (80,822x3%)=2,425 դրամ*
- *Ընդամենը սոցիալական վճար 16,123 + 2,425 =18,548 դրամ*

Օգոստոս ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄԸ՝ 80,822դրամ և սոցիալական վճարները՝ 18,548դրամ արտացոլվում են օգոստոս ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարները ենթակա են կազմակերպության կողմից վճարման մինչև 20.09.2009թ.(ներառյալ):

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում.

ա) մասնավորապես՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում գործատուն վարձու աշխատողին վճարում է արձակման նպաստ՝ օրենքով սահմանված կարգով և չափերով (առնվազն մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով, իսկ առանձին դեպքերում՝ 2 շաբաթվա աշխատավարձի չափով, որը հաշվարկվում է վարձու աշխատողի միջին օրաական աշխատավարձի չափից ելնելով): Վարձու աշխատողին վճարված արձակման նպաստից սոցիալական վճարներ չեն վճարում:

բ) գործատուն պարտավոր է վարձու աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ (աշխա տանքային պայմանագրի լուծման օրը, եթե օրենքով կամ աշխատանքային պայմանագրով այլ կարգ նախատեսված չէ)՝ վերջնահաշվարկի օրը վճարելով աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները:

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եթե աշխատանքները կատարվում կամ ծառայությունները մատուցվում են քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրում որևէ սահմանված ժամկետում, ապա՝

❖ այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով չեն նախատեսվում աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սոցիալական վճարներ չեն հաշվարկվում և չեն կատարվում,

❖ այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով նախատեսվում է աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սոցիալական վճարները հաշվարկվում են այդ ամիսների համար պայմանագրով առանձնացված վարձատրությունից ելնելով բայց ոչ պակաս, քան 7,0 հազ.դրամ) և վճարվում են այդ ամիսների հաշվարկված սոցիալական վճարների համար սահմանված ժամկետներում,

❖ այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով նախատեսվում է աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սակայն այդ ամիսների համար պայմանագրով առանձնացված վարձատրություն նախատեսված չէ, սոցիալական վճարները հաշվարկվում են պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների (կամ դրանց փուլերի) ընդհանուր արժեքի և այդ արժեքի մեջ ընդգկված ու պայմանագով առանձնացված վարձատրությամբ ամիսների վարձատրության տարբերությունը ըստ ամիսների հավասարաչափ բաշխվող գումարից ելնելով, բայց ոչ պակաս, քան 7000 դրամ),և վճարվում են այդ ամիսների հաշվարկված սոցիալական վճարների համար սահմանված ժամկետներում,

❖ պայմանագրի (կամ դրա փուլերի) ավարտից հետո հանձնման-ընդունման փաստաթղթերով հիմնավորված փաստացի կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների՝ ըստ ամիսների արժեքային այլ բաշխման դեպքում գործատուն ներկայացնում է ճշտված հաշվետվություններ բոլոր այն ամիսների համար, որոնց հաշվարկով (վերահաշվարկով) կատարվում է սոցիալական վճարների փոփոխություն, և դրանց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ:

Սոցիալական վճարները հաշվարկվում և վճարվում են հետևյալ կարգով՝

Եթե աշխատանքները կատարվում կամ ծառայությունները մատուցվում են քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրում նշված ժամկետում, որը պայմանավորված է որոշակի իրադարձություններով (այդ թվում՝ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման, դրանց հանձնման-ընդունման հետ), որի հետևանքով պայմանագրի հիման վրա հնարավոր չէ որոշել սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտն ըստ ամիսների, կամ՝ եթե քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրից, սկզբնական հաշվառման և վճարման փաստաթղթերից հնարավոր չէ որոշել սոցիալակն վճարների հաշվարկման օբյեկտն ըստ ամիսների, ապա սոցիալական վճարները հաշվարկվում են պայմանագրի շրջանակներում կատարված վճարումներից (վճարման ամիսների համար) և պայմանագրով (կամ դրա փուլերով) նախատեսված աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող հանձնման-ընդունման փաստաթղթերի հիման վրա, ընդ որում՝

❖ պայմանագրի շրջանակներում կատարված վճարումներից (այդ թվում՝ կանխավճարային ձևով) սոցիալական վճարները հաշվարկվում են՝ հաշվի առնելով պայմանագրի (կամ դրա փուլերի) կատարման վերաբերյալ հանձնման -ընդունման փաստաթղթերի տվյալները,

- պայմանագրի (կամ դրա փուլերի) կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման փաստաթղթերի հիման վրա սոցիալական վճարները հաշվարկվում են՝ հաշվի առնելով պայմանագրի շրջանակներում կատարված վճարումները (այդ թվում՝ կանխավճարային ձևով):

Օրինակ

Ֆիզիկական անձը 20.01.2009 քաղաքացիաիրավական պայմանագիր է կնքել իրավաբանական անձի հետ: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար սահմանվել է 500.000 դրամ, իսկ աշխատանքների կատարման վերջնաժամկետ՝ 28.02.09թ: Պայմանագրով նախատեսված վճարումը կողմերի պայմանավորվածությամբ պետք է կատարվի աշխատանքների ավարտից հետո:

2009թ. հունվարի 31-ին կողմերի միջև կնքվել է աշխատանքների հանձնման-ընդունման ակտ, ըստ որի ֆիզիկական անձի կողմից կատարվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների 30%-ը: Իսկ 2009թ փետրվարի 28-ին կողմերի միջև կազմվել է մնացած աշխատանքների հանձնման-ընդունման ակտը:

Հաշվարկները կատարվում են հետևյալ կերպ.

1. *Նախ և առաջ հաշվարկվում է սոցիալական վճարի հաշվարկման համար հիմք հանդիսացող եկամտի հաշվարկային մեծությունը՝ յուաքանչյուր ամսվա կտրվածքով*
   - *20.01.09-31.01.09 ժամանակաշրջանի համար*

   500.000X 30%=150.000 դրամ
   - *01.02.09-28.02.09 ժամանակաշրջանի համար*

   500.000-150.000=350.000 դրամ

2. *Վերոնշյալ գումարներից հաշվարկվում է գործատուի հաշվին կատարվող սոցիալական վճարների չափը՝ ամսական կտրվածքով*
   - *150.000 դրամից՝ 19.000+(150.000-100.000)*5%=21.500, որը պետք է վճարվի մինչև 20.02.09թ*
   - *350.000 դրամից՝ 19.000+(350.000-100.000)*5%=31.500, որը ենթակա է վճարման մինչև 20.03.09թ*

Նշենք նաև, որ քաղաքացու նկատմամբ անհատական սոց. վճարի՝ 3%-ի, պարտավորություն չի առաջանում:

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

Սոցիալական վճարների հաշվին ապահովագրական նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման, ինչպես նաև նպաստների չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի (եկամտի) հաշվարկման կարգը:

Գործատուները յուրաքանչյուր ամսվա սոցիալական վճարների հաշվին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով վարձու աշխատողներին հաշվարկում ու վճարում են ապահովագրական նպաստներ՝

- հիվանդության նպաստ
- պրոթեզավորման նպաստ
- առողջարանային բուժման նպաստ,
- հղիության և ծննդաբերության նպաստ
- թաղման նպաստ

որից հետո սոցիալական վճարների մնացորդ գումարները փոխանցում են պետական բյուջե: Ընդ որում՝ գործատուները յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարների գումարներից փաստացի վճարված ապահովագրական նպաստների գումարների չափով պակասեցնում կատարում են այդ նպաստների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ին:

Օրինակ

Կազմակերպության վարձու աշխատողին ներկայացված փաստաթղթերի հիման վրա 2009թ. մարտի 5-ին վճարվում է փետրվար ամսվա համար հիվանդության նպաստ՝ 10.000 դրամ: 2009թ. մարտ ամսվա աշխատավարձը կազմում է 90.000 դրամ:

Տվյալ դեպքում մարտ ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի

ամսական չափի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ելնելով տվյալ ամսվա աշխատավարձից (ԱՎՈՒՄ):

Մարտ ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը հետևյալն է՝

ԱՎՈՒՄ՝	*90.000 դրամ*
Գործատուի սոցիալական վճար (90.000-20.000)x15%+7.000՝	*17.500 դրամ*
Վարձու աշխատողի համար սոցիալական վճար՝ 90.000x 3 %՝	*2.700 դրամ*
Ընդամենը սոցիալական վճար 17.500+2.700՝	***20.200 դրամ***
Հիվանդության նպաստ՝	*10.000 դրամ*
Վճարման ենթական սոցիալական վճար (20.200-10.000)	***10.200 դրամ***

Մարտ ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (90000 դրամ), սոցիալական վճարները՝ (20.200 դրամ), հիվանդության նպաստը՝ (10.000 դրամ) արտացոլվում են մարտ ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ կազմակերպության կողմից մինչև 20.04.2009թ. (ներառյալ) ենթակա է վճարման 10.200 դրամ՝ մարտ ամսվա սոցիալական վճարների գումարը: Ընդ որում՝ 2009թ. մարտի 5-ին վճարված հիվանդության նպաստի չափով սոցիալական վճարի ապառքի գումարի պակասեցումը կատարվում է 2009թ. ապրիլի 20-ին:

Ապահովագրական նպաստների ստացման իրավունք ունեն գործատուների մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք, ովքեր ենթակա են պարտադիր սոցիալական ապահովության, որոնց համար օրենքով սահմանված կարգով սոցիալական վճարումներ են կատարվում ՀՀ պետական բյուջե: Ժամանակավոր անաշխատունակության նպաստ նշանակելու համար հիմք է հանդիսանում բուժական հիմնարկի կողմից տրված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, որը միաժամանակ հիմք է հանդիսանում նաև նպաստ վճարելու համար: Համատեղությամբ աշխատող վարձու աշխատողի համար հիմնական աշխատավայրի գործատուն անաշխատունակության թերթիկի հիման վրա նշանակում է ապահովագրական նպաստ, ինչպես նաև կնքում է աշխատողի ներկայացրած (գործատուի կողմից դեռևս չլրացրած) անաշխատունակության թերթիկի լուսապատճենը, ինչը հիմք է հանդիսանում մյուս գործատուի կողմից ապահովագրական նպաստ նշանակելու համար:

Վարձու աշխատողների ապահովագրական նպաստի հաշվարկումը, նշանակումը և վճարումը իրականացնում է գործատուն: Ապահովագրական նպաստը վճարվում է դրա նշանակումից հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված բոլոր վարձու աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը բավարար չէ, ապա գործատուն ապահովագրական նպաստը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է Հիմնադրամը, գործատուի կողմից սոցիալական վճարների վերաբերյալ ամսական (եռամսյակային) հաշվետվության հետ մեկտեղ հարկային մարմին ներկայացված համապատասխան տեղեկանքի հիման վրա հարկային մարմնի հաստատած տեղեկանքը Հիմնադրամ ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Ապահովագրական նպաստները հաշվարկվում են վարձու աշխատողի միջին աշխատավարձից (եկամտից), որը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացուցային ամիսներին տվյալ աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից, որոնցից սահմանված կարգով կատարվել են սոցիալական վճարներ:Եթե ապահովագրական դեպքին նախորդող եռամսյա ժամանակաշրջանում վարձու աշխատողը եկամուտ չի ունեցել (աշխատավարձ չի ստացել), ապա որպես միջին ամսական աշխատավարձ հիմք է ընդունվում «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսեկան աշխատավարձի չափը՝30.000 դրամ: Եթե ապահովագրական դեպքին նախորդող՝ տվյալ գործատուի մոտ աշխատանքի ժամանակաշրջանը պակաս է 3 օրացուցային ամիսներից, ապա միջին ամսական աշխատարձը հաշվարկվում է փաստացի աշխատած ամիսների (օրերի) համար հաշվարկված եկամտից:Ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացոյցայինն ամիսներին վարձու աշխատողի համար հաշվարկված ամենամյա վճարովի արձակուրդի կապակցությամբ վճարված գումարը, պարգևատրումները և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները գումարի 1/12-րդի չափով ավելացվում են վերը նշված կարգով հաշվարկված միջին ամսեկան աշխատավարձին:

Ապահովագրական նպաստները հաշվարկելու համար միջին ամսական աշխատավարձը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) վրա և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով:

- Հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստները հաշվարկելիս հիմք ընդունվող միջին աշխատավարձը վերցվում է 100%-ի չափով, եթե այն չի գերազանցում 100,0 հազ. դրամը, իսկ 100,0 հազ. դրամը գերազանցելու դեպքում՝ 100,0 հազ. դրամին գումարած 100,0 հազ. դրամը գերազանցող գումարի 30%-ը (ընդ որում՝ այս ձևով հաշվարկված միջին աշխատավարձը վերցվում է 100%-ի չափով այն աշխատողների համար, ովքեր ունեն 8 և ավելի տարվա ապահովագրական (աշխատանքային) ստաժ, կամ՝ ովքեր իրենց խնամքի տակ ունեն 18 տարին չլրացած հաշմանդամ երեխա կամ 3 և ավելի երեխա, իսկ 80%-ի չափով այն աշխատողների համար, ովքեր ունեն մինչև 8 տարվա ապահովագրական (աշխատանքային ստաժ):

ՕՐԻՆԱԿ

Վահան Հովհաննիսյանը 2009 թ մարտի 1-ին աշխատանքի է ընդունվել «Վան» ՍՊԸ-ում: 2009թ հունիսի 12-16 աշխատանքի չի ներկայացել: 2009թ հունիսի 17-ին նա գործատուին ներկայացրել է անաշխատունակության թերթիկ հունիսի 12-16 ժամանակաշրջանի համար: Մինչև «Վան» ՍՊԸ աշխատանքի անցնելիս Վահան Հովհաննիսյանի աշխատանքային ստաժը կազմել է 4 տարի: 2009թ նրա համար Վահան Հովհաննիսյանի համար հաշվարկվել են հետևյալ աշխատավարձերը՝

Մարտ- 60.000 դրամ

Ապրիլ- 90.000 դրամ

Մայիս- 120.000 դրամ

Նպաստի հաշվարկման համար կատարում ենք հետևյալ քայլերը՝

1. *Հաշվարկում ենք միջին աշխատավարձը = (60.000+90.000+120.000)/3=90.000 դրամ, քանի որ աշխատակցի աշխատանքային ստաժը չի գերազանցում 8 տարին, այդ իսկ պատճառով նպաստի հաշվարկի համար հիմք ընդունվող մեծությունը վերցնում ենք միջին աշխատավարձի 80 % չափով՝*
   90.000x80% = 72.000
2. *Միջին օրեկան վաստակ= 72.000/30.4=2368,42*
3. *Վճարվող նպաստի գումարը կկազմի՝ Միջին օրական վաստակx ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվ՝ 2368.42x5=11842,1 դրամ*

Օրինակ

Կազմակերպության վարծու աշխատողը (Հայաստանի Հանրապետության քաղաքացին), որը աշխատանքի է ընդունվել 07.01.2008թ.-ին 2009թ.-ի մարտին ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, որի հիման վրա նրան պետք է տրամադրվի հղիության և ծննդաբերության արձակուրդ:

Անաշխատունակության թերթիկի հիման վրա գործատուն պարտավոր է աշխատողին *հաշվարկել և վճարել հղիության և ծննդաբերության նպաստ 2009թ մարտի 1-ից մինչև հուլիսի 18-ը ընկած ժամանակաշրջանի համար (ընդամենը՝ 140 օր տևողությամբ- նախածննդյան՝ 70 օրացույցային օր և հետ ծննդաբերության՝ 70 օրացույցային օր):*

Տվյալ դեպքում հղիության և ծննդաբերության նպաստը հաշվարկվում է աշխատողի միջին ամսական աշխատավարձից: Վարծու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացույցային ամիսներին այդ աշխատողի համար հաշվարկված սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ հանդիսացող ԱԿՈՒՄ-ից և դրան հավասարեցված եկամուտներից:

- *մարտ ամսվան նախորդող 3 ամիսներն են՝ փետրվար, հունվար, դեկտեմբեր և դրանց համապատասխանաբար ԱԿՈՒՄ-ները՝ 90,000+80,000+80,000=250,000դրամ*
- *միջին ամսական աշխատավարձը կլինի՝ 250,000/3=83,333դրամ*
- *միջին օրական աշխատավարձը կլինի՝ 83,333/30,4=2,741դրամ*
- *հղիության և ծննդաբերության նպաստը գումարը կկազմի՝ 2,741x140 օր=383,740դրամ*

Տվյալ դեպքում, ենթադրենք գործատուի մարտ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարի գումարը կազմում է 250,000 դրամ, ապա գործատուն սոցիալական վճարի պարտավորություն չի ունենա պետության նկատմամբ, քանի որ մարտ ամսին նա իր աշխատակցին հաշվարկել և իր միջոցներից վճարել է հղիության և ծննդաբերության նպաստը՝ 383.740 դրամի չափով, որը մեծ է այդ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարի գումարից՝ 383.740 դրամ > 250.000 դրամ, իսկ 383,740 - 250,000=133,740 դրամի տարբերությունը պետությունը կազմակերպության կողմից համապատասխան տեղեկանքի տրամադրման ժամանակ պարտավորվում է փոխհատուցել (վճարել) մեկ ամսյա ժամկետում:

Պարտադիր սոցիալական ապահովության հաշվետվությունների լրացման կարգ

Նախորդ եռամսյակի յուրաքանչյուր ամսում մինչև հինգ (ներառյալ) վարձու աշխատող ունեցող գործատուները ընթացիկ եռամսյակի համար լիազոր մարմին են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ձևով սոցիալական վճարների եռամսյակային հաշվետվություն, մինչև այդ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Օրինակ

Եթե «Ա» կազմակերպությունը 2009թ հունվար ամսվա աշխատողների թիվը կազմել է 3, փետրվարին՝ 5, իսկ մարտ ամսում՝ 4 աշխատող, ապա «Ա» կազմակերպությունը 2009 թ II եռամսյակի համար պետք է ներկայացնի եռամսյակային հաշվետվություն մինչև 2009 թ հուլիսի 20-ը ներառյալ :

Նախորդ եռամսյակի որևէ ամսում 5-ից ավել վարձու աշխատող ունեցող գործատուները ընթացիկ եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար լիազոր մարմին են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ձևով սոցիալական վճարների ամսեկան հաշվետվություն, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Օրինակ

Եթե «Բ» կազմակերպության 2009թ. հունվար ամսվա վարձու աշխատողների թիվը կազմում է 4 հոգի, փետրվարինը՝ 7, իսկ մարտ ամսվանը՝ 3, ապա «Բ» կազմակերպությունը 2009 թ II եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար պետք է լիազոր մարմին ներկայացնի ամսական հաշվետվություն հետևյալ ժամանակաշրջաններում՝

ապրիլ ամսվա համար մինչև 2009թ մայիսի 20-ը ներառյալ
մայիս ամսվա համար մինչև 2009թ հունիսի 20-ը ներառյալ
հունիս ամսվա համար մինչև 2009թ հուլիսի 20-ը ներառյալ

«Ա» կազմակերպությունը զբաղվում է առևտրային գործունեությամբ, 2009թ հունիս ամսին հաշվարկել է 6 աշխատողի աշխատավարձ և 1 աշխատակցի համար հաշվարկել և վճարել է ժամանակավոր անաշխատունակության նպաստ 10 հազար դրամի չափով (մանրամասն տեղեկություն բերված է աղյուսակ 1-ում): 2009թ I եռամսյակի փետրվար ամսում «Ա» կազմակերպության աշխատակիցների թիվը կազմել է 6 հոգի, այդ իսկ պատճառով «Ա» կազմակերպությունը 2009թ. հունիս ամսվա համար պետք է ներկայացնի ամսական սոցիալական ապահովության վճարի հաշվետվություն:

Աղյուսակ1: 2009 թ «Ա» ՍՊԸ-ի աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների ամփոփ հաշվարկ 2009թ հունիս ամիս

N	Անվանում	Առձեռն	Հաստիք	Պարգևատրում	Ընդամենը հատկացված է	Անհատական սոցապ	Եկամտահարկ	Ընդամենը պահված է	Գործատուի սոցապ վճար	Ծանոթություն սոցաիլական վճարի հաշվարկման վերաբերյալ
1	Մարգարյան Մարգար	95,920	120,000	50,000	170,000	5,100	18,980	24,080	22,500	ա)170.000X3%=5.100 բ) 19.000+(170.000-100.000)*5%=22.500
2	Բաղդասարյան Սուրեն	46,650	50,000		50,000	1,500	1,850	3,350	11,500	ա) 50.000*3%=1.500 բ) 7.000+(50.000-20.000)*15%=11.500
3	Մարտիրոսյան Արամ	114,880	130,000		130,000	3,900	11,220	15,120	20,500	ա) 130.000*3%=3.900 բ) 19.000+(130.000-100.000)*5%=20.500
4	Նիկողոսյան Մարինե	195,760	240,000	20,000	260,000	7,800	36,440	44,240	27,000	ա) 260.000*3%=7.800 բ) 19.000+(260.000-100.000)*5%=27.000
5	Գրիգորյան Գրիգոր	81,570	90,000		90,000	2,700	5,730	8,430	17,500	ա) 90.000*3%=2.700 բ) 7.000+(90.000-20.000)*15%=17.500
6	Ալավերդյան Կարինե	51,570	60,000	30,000	90,000	2,700	5,730	8,430	17,500	ա) 90.000*3%=2.700 բ) 7.000+(90.000-20.000)*15%=17.500
	ԸՆԴԱՄԵՆԸ	**586,350**	**690,000**	**100,000**	**790,000**	**23,700**	**79,950**	**103,650**	**116,500**	

Այժմ օգտվելով վերը նշված հաշվարկից կազմենք «Ա» ՍՊԸ-ի հունիս ամսվա սոցիալական ապահովության հաշվետվությունը.

- մինչև 20.000 դրամ աշխատավարձով աշխատակից չունենալու պատճառով հաշվետվության 13 ա տողում ոչինչ չի ներառվի
- 13բ տողում կարտացոլվի 3 աշխատակցի ԱՎՈՒՄ-ների հանրագումարը, 50.000+90.000+90.000=230.000, որի դիմաց հաշվարկվել է՝ 1.500+11.500+2.700+17.500+2.700+17.500=53.400 դրամ սոցիալական ապահովության վճար
- 13գ տողում կարտացոլվի 3 աշխատակիցները ԱՎՈՒՄ-ների հանրագումարը, որոնք մեծ են 100.000 դրամից՝ 170.000+130.000+260.000=560.000, որի դիմաց հաշվարկվել է՝ 5.100+22.500+3.900+20.500+7.800+27.000=86.800 դրամ սոցիալական ապահովության վճար
- Քանի որ «Ա» ՍՊԸ-ն իր միջոցներով 2 աշխատակցի վճարել է ժամանակավոր անաշխատունակության նպաստ 10.000 դրամի չափով, ապա դա կարտացոլվի հաշվետվության աղյուսակ 3-ում, և այդ գումարի չափով հունիս ամսվա հաշվարկված սոց. վճարը պակաս կփոխանցվի,այսինքն 2009թ հունիս ամսվա համար վճարվելիք սոց վճարը կկազմի՝ 140.200-10.000=130.200, որը պետք է վճարվի մինչև 2009թ հուլիսի 20-ը ներառյալ:

Գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների

Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)

Հաշվետվություն (2009_թ._հունիս _ամիս)

Պետական գրանցման համարը [1]												
Պետական գրանցման ամսաթիվը [2]												
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) [3]												
Ապահովադրի կոդը [4]												
Կազմակերպության անվանումը [5]	«Ա» ՍՊԸ											
Ֆիզիկական անձի անուն, ազգանունը [6]												
Գործունեության ոլորտ(ներ)ը [7]	Առևտուր											
Գտնվելու (բնակության) վայրը [8]												
Հեռախոս [9]												
Հաշվետվության ներկայացման ամսաթիվը [10]												
	Չափի միավոր										Հազար դրամ	

- [1] և [2] տողերում նշվում է գործատուի պետական գրանցման համարը և օրը, ամիսը, տարին
- [3] տողում նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- [4] տողում նշվում է ապահովադրի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, նոտար) կոդը
- [5] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը
- [6] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը և ազգանունը
- [7] տողում նշվում է կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման ոլորտ(ներ)ը, իսկ նոտարի կողմից նշվում է նոտարական գործունեութուն իրականացնելու վերաբերյալ
- [8] և [9] տողերում նշվում են կազմակերպության գտնվելու վայրը և աշխատանքային հեռախոսահամարը, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի բնակության վայրը և աշխատանքային (տան) հեռախոսահամարը
- [10] տողում նշվում է հարկային մարմին հաշվետվության ներկայացման օրը, ամիսը, տարին

Աղյուսակ 1

Սոցիալական վճարների օբյեկտի (ԱՎՈՒՄ) միջակայքերը և քանակը		Հաշվարկված ԱՎՈՒՄ [11]	Սոցիալական վճար [12]
Վարձու աշխատողների մասով	*[13]*	790.0	140.2
20,0 հազ. դրամից ոչ ավել	[13ա]		
վարձու աշխատողների թվաքանակ	[13ա-1]		x
100,0 հազ. դրամից ոչ ավել	[13բ]	230.0	53.4
վարձու աշխատողների թվաքանակ	[13բ-1]	3	x
100,0 հազ. դրամից ավել	[13գ]	560.0	86.8
վարձու աշխատողների թվաքանակ	[13գ-1]	3	x
Այլ աշխատողների մասով	*[14]*		
20,0 հազ. դրամից ոչ ավել	[14ա]		
աշխատողների թվաքանակ	[14ա-1]		x
100,0 հազ. դրամից ոչ ավել	[14բ]		
աշխատողների թվաքանակ	[14բ-1]		x
100,0 հազ. դրամից ավել	[14գ]		
աշխատողների թվաքանակ	[14գ-1]		x
Օտարերկրացիների մասով	*[15]*		
վարձու աշխատողների թվաքանակ	[15-1]		x
Ընդամենը	**[16]**	**790.0**	**140.2**

- [11] սյունակում նշվում են տվյալ ամսում հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները (ԱՎՈՒՄ)
- [12] սյունակում նշվում են [11] սյունակում նշված ԱՎՈՒՄ-ների նկատմամբ հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները (սոցիալական վճարները)

- [13] տողում նշվում են տվյալ ամսում գործատուի մոտ աշխատանքային պայմանագրերով աշխատող (վարձու աշխատող) ՀՀ քաղաքացիներին հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարները (տող[13ա]+տող[13բ]+տող[13գ])
- [13ա], [13բ], [13գ] տողերում նշվում են տվյալ ամսում գործատուի կողմից վարձու աշխատող ՀՀ քաղաքացիներին նշված չափերով հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարները
- [13ա-1], [13բ-1] և [13գ-1] տողերում նշվում են տվյալ ամսում գործատուի մոտ աշխատող վարձու աշխատող ՀՀ քաղաքացիների թվաքանակը, որոնց հաշվարկված ԱՎՈՒՄ-ները և սոցիալական վճարները նշված են [13ա], [13բ] և [13գ] տողերում
- [14] տողում նշվում են տվյալ ամսում գործատուի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրերով (աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում) աշխատող (այլ աշխատող) ՀՀ քաղաքացիներին հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարները (տող[14ա]+տող[14բ]+տող[14գ])
- [14ա], [14բ], [14գ] տողերում նշվում են տվյալ ամսում գործատուի կողմից այլ աշխատող ՀՀ քաղաքացիներին նշված չափերով հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարները
- [14ա-1], [14բ-1] և [14գ-1] տողերում նշվում են տվյալ ամսում գործատուի մոտ այլ աշխատող ՀՀ քաղաքացիների թվաքանակը, որոնց ԱՎՈՒՄ-ները և սոցիալական վճարները նշված են [14ա], [14բ] և [14գ] տողերում
- [15] տողում նշվում են տվյալ ամսում գործատուի մոտ աշխատանքային պայմանագրերով աշխատող (վարձու աշխատող) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (օտարերկրացիներին) հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարները
- [15-1] տողում նշվում են տվյալ ամսում գործատուի մոտ աշխատանքային պայմանագրերով աշխատող (վարձու աշխատող) օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (օտարերկրացիների) թվաքանակը, որոնց ԱՎՈՒՄ-ները և սոցիալական վճարները նշված են [15] տողում
- [15] և [15-1] տողերը լրացվում են, եթե վարձու աշխատող օտարերկրացիները ցանկանում են կատարել սոցիալական վճարներ գործատուից ստացված ԱՎՈՒՄ-ների գծով
- [16] տողում նշվում են տվյալ ամսում գործատուի մոտ վարձու և այլ աշխատող ՀՀ քաղաքացիներին, վարձու աշխատող օտարերկրացիներին հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարները (տող[13]+տող[14]+տող[15])

Աղյուսակ 2

Առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ և դրա նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարներ	ԱՎՈՒՄ [17]	Վճարված ԱՎՈՒՄ-ի սոցիալական վճար [18]
Մնացորդը ամսվա սկզբին [19]		
Ծճարվել է տվյալ ամսում ԱՎՈՒՄ [20]		
Ծճարված ԱՎՈՒՄ-ների քանակը [21]		x
Մնացորդը ամսվա վերջում [22]		

- [17] սյունակում նշվում են առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ները
- [18] սյունակում նշվում են [17] սյունակում նշված ԱՎՈՒՄ-ների նկատմամբ հարկման տարբեր կարգերին (ընդհանուր, հաստատագրված վճարով, պարզեցված հարկով) համապատասխան հաշվարկված սոցիալական վճարների գումարները (հաշվարկային պարտքերը)
- [19] տողում նշվում են առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ների և սոցիալական վճարների հաշվարկային պարտքերի մնացորդները ամսվա սկզբին

- [20] տողում նշվում են տվյալ ամսում առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ների վճարումները (գումարը) և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարները
- [21] տողում նշվում են տվյալ ամսում առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ների վճարումները (քանակը)
- [22] տողում նշվում են առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ների և սոցիալական վճարների հաշվարկային պարտքերի մնացորդները ամսվա վերջում (տող[19]-տող[20])

Աղյուսակ 3

Ապահովագրական նպաստներ	Նպաստառուներ [23]	Օրեր [24]	Վճարված գումարը [25]
Հիվանդության նպաստ [26]	1	8	10.0
Պրոթեզավորման նպաստ [27]			
Առողջարանային բուժման նպաստ [28]			
Հղիության և ծննդաբերության նպաստ [29]			
Ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ [30]			
Թաղման նպաստ [31]			
Ընդամենը [32]			**10.0**
Վերականգնված միջոցներ [33]	x	x	( )

- [23] սյունակում նշվում են տվյալ ամսում գործատուից ապահովագրական նպաստներ ստացած վարձու աշխատողների (նպաստառուների) թիվը
- [24] սյունակում նշվում են տվյալ ամսում գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական նպաստներ ստացած վարձու աշխատողների (նպաստառուների) օրերի թիվը
- [25] սյունակում նշվում են տվյալ ամսում գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական նպաստները և << սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի (Հիմնադրամի) կողմից վերականգնված միջոցները
- [26], [27], [28], [29], [30] և [31] տողերում նշվում են տվյալ ամսում գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական նպաստների յուրաքանչյուր տեսակների և թաղման նպաստի վերաբերյալ տվյալները (նպաստառուների թիվը, օրերի թիվը, վճարված գումարները)
- [32] տողում նշվում են տվյալ ամսում գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական և թաղման նպաստների հանրագումարը (տող[26]+տող[27]+տող[28]+տող[29]+ +տող[30]+տող[31])
- [33] տողում նշվում են տվյալ ամսում Հիմնադրամի կողմից վերականգնված՝ նախկինում գործատուի միջոցների հաշվին վարձու աշխատողներին վճարված ապահովագրական և թաղման նպաստների գումարները

Աղյուսակ 4

Հաշվարկված սոցիալական վճարի գումարը [34]	140.2
Կատարված ծախսեր [35]	(1 0.0)
Վճարվող սոցիալական վճարի ամսվա գումարը [36]	130.2
Չծևակերպված աշխատողի սոցիալական վճար1 [37]	
Չծևակերպված աշխատողի սոցիալական վճար2 [38]	

- [34] տողում նշվում են տվյալ ամսում հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարը (տող[16]/սյունակ[12]+տող[20]/սյունակ[18])
- [35] տողում նշվում են տվյալ ամսում սոցիալական վճարների հաշվին գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական և թաղման նպաստների ընդհանուր գումարը (տող[32]/սյունակ[25])
- [36] տողում նշվում են տվյալ ամսում սոցիալական վճարների և դրանց հաշվին կատարված ծախսերի դրական տարբերությունը (տող[34]+տող[35], եթե տող[34]>տող[35]) կամ 0 (եթե տող[34]=<տող[35])
- [37] տողում նշվում են տվյալ ամսում ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից կատարված ստուգումներով բացահայտված (արձանագրված) չծևակերպված աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը (յուրաքանչյուր չծևակերպված աշխատողի համար 60,0 հազ. դրամ)
- [38] տողում նշվում են տվյալ ամսում ՀՀ հարկային մարմինների կողմից կատարված ստուգումներով բացահայտված (արձանագրված) չծևակերպված աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը (յուրաքանչյուր չծևակերպված աշխատողի համար 60,0 հազ. դրամ)

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Գլխ.հաշվապահ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անհատ ձեռնարկատերերը սոցիալական ապահովության հաշվարկները և վճարումները, որպես կանոն, կատարում են ինքնուրույնաբար, այսինքն հանդես են գալիս որպես «Ապահովադիրներ»:

Անհատ ձեռնարկատերերը սոցիալական ապահովության պարտադիր վճարը հաշվարկում են 5-րդ կետում նկարագրված սխեմայով: Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ ասելով հասկանում ենք «հաշվեգրման եղանակով» հաշվարկված համախառն եկամտից նվազեցնելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով նվազեցումներն իրականացնելուց հետո ստացվող մեծությունը: Նվազեցումներ ասելով պետք է հասկանալ՝

- նվազեցվող եկամուտներ
- ծախսեր

Դեպք 1 : Անհատ Ձեռնարկատեր Պողոս Պետրոսյանը որպես ապահովադիր հաշվառման է կանգնել 2009թ հունվարի 10-ին և համարվում է ԱԱՀ վրարող: Նա զբաղվում ապրանքների ներմուծմամբ և վաճառքով: 2009թ արդյունքներով տնտեսական գործունեությունը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

1. Համախառն եկամուտը՝ 15.500.000 (առանց ԱԱՀ-ի)
   այդ թվում՝
   - Ձեռնարկատիրական գործունեությունից (ապրանքների իրացումից հասույթը)- 15.000.000 դրամ
   - Նվիրատվության կարգով ֆիզիկական անձից ստացված գույք- 500.000
2. 2009թ ընթացքում կատարվել են հետևյալ ծախսերը, այդ թվում
   - Վաճառված ապրանքների ինքնարժեք - 10.000.000
   - Տարածքի վարձակալության վճար- 600.000
   - Գովազդի ծախսեր- 2.000.000
   - Գործուղման ծախսեր- 500.000
   - Ձեռք է բերվել 500.000 դրամի գրենական պիտույքներ, որից հիմնավորված փաստաթղթերով ձեռքբերումը կազմում է 300.000 դրամը

Սոցիալական վճար հաշվարկելու համար նախ և առաջ անհատ ձեռնարկատերը պետք է որոշի այն եկամուտը, որից հաշվարկում է սոցիալական վճարը:Այնուհետև օրենքով սահմանված դրույքաչափերով հաշվարկվում է սոցիալական վճարը և եթե հաշվարկը գերազանցում է 60.000 դրամը (անհատ ձեռնարկատերը պարտավոր է յուրաքանչյուր ամիս վճարել 5.000 դրամ նվազագույն սոցիալական վճար), ապա վճարումը կատարվում է փաստացի հաշվարկի չափով, իսկ եթե սոցիալական վճարի հաշվարկած մեծությունը փոքր է 60.000 դրամից, ապա վճարումը կատարվում է օրենքով սահմանված նվազագույն չափով (60.000 դրամ):

1

Համախառն եկամուտ

15.000.000+500.000 = 15.500.000

—

Նվազեցվող եկամուտներ

500.000

—

Ծախսեր

10.000.000+600.000+2.000.000

+500.000+ 300.000 = 13.400.000

=

ԵԿԱՄՈՒՏ, ՈՐԻՑ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԸ

1.600.000

2

Սոցիալական վճար	Թույլատրելի սահմանի պահպանում
180.000+(1.600.000-1.200.000)X5%= 200.000 դրամ	200.000 > 60.000

Այսպիսով անհատ ձեռնարկատիրոջ կողմից սոցիալական ապահովության գծով պարտադիր վճարների գումարը 2009թ համար կազմում է 200.000 դրամ, որը պետք է փոխանցվի մինչև 2010թ մարտի 1-ը ներառյալ:

Դեպք 2: Եթե նույն անհատ ձեռներեց Պողոս Պետրոսյանը 2009թ համարվեր որպես ԱԱՀ չվճարող ձեռնարկատեր, ապա նրա 2009թ սոցիալական ապահովության գծով պարտադիր վճարների գումարը կկազմեր՝

Սոցիալական վճար	Թույլատրելի սահմանի պահպանում
1.600.000X3%= 48.000 դրամ	48.000 < 60.000 դրամ

Այսպիսով Անհատ Ձեռնարկատիրոջ կողմից սոցիալական ապահովության գծով պարտադիր վճարների գումարը 2009 թ համար կազմում է 48.000 դրամ, բայց քանի որ այդ գումարը փոքր է 60.000 դրամից, ապա անհատձեռնարկատերը պարտավոր է սահմանված ժամկետում 60.000 դրամը փոխանցել պետական բյուջե:

Բացի վերը նշված հաշվարկից Անհատ Ձեռնարկատերը պետք է մինչև 2010 թ մարտի 1-ը հաշվետու տարվա արդյունքներով իրենց տարածքային հարկայն տեսչություն ներկայացնի պարտադիր սոցիալական ապահովության վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագիր, կից ներկայացված է հայտարարագրի լրացված օրինակը, վերը նշված դեպք 1-ի հիման վրա:

Անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի տարեկան եկամուտների մասին ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ **Բաժին I**	Փաստաթղթի մուտքագրման համարը *(լրացվում է հարկային մարմնի կողմից)* Փաստաթղթի մուտքագրման ամսաթիվը *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*
1. Պետական գրանցման համարը	
2. Պետական գրանցման ամսաթիվը (օր, ամիս, տարի)	
3. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	4. Հաշվետու տարի 2 0 0 9
0 0 0 0 0 0 0 0	6. Սոցիալական քարտի համարը
5. Ապահովադրի կոդը	
	8. Մշտական բնակության հասցեն
7. Անունը, ազգանունը, հայրանունը Պողոս Պետրոսյան	
9. ՀՀ-ում ժամանակավոր բնակության հասցեն	10. Տան հեռախոսի համարը / 11. Աշխատանքային հեռախոսի համարը
12. Գործունեության վայրի հասցեն ՀՀ, ք. Երևան, Սարյան 10	13. Վկայականի համարը □□□□□□□□ / 14. Անձնագրի սերիան 15. Անձնագրի համարը □□□□□□□□□ / 16. Տրված □□□
17. Գործունեության ոլորտ(ներ)ը Առևտուր	18. Ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի) □□□□□□□□□□ 19. Հարկային մարմին ներկայացման ամսաթիվը
20. Բանկային հաշիվները *(ներառյալ բանկի անուն(ներ)ը, գտնվելու վայրը)*	
	Չափի միավոր / Դրամ

- 1 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի պետական գրանցման համարը-
- 2 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի պետական գրանցման ամսաթիվը
- 3 - նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- 4 - նշվում է հաշվետու տարին, որի համար ներկայացվում է հայտարարագիրը
- 5 - նշվում է ապահովադրի (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կոդը
- 6 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի սոցիալական քարտի համարը
- 7 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը և հայրանունը

- 8 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անձնագրում գրանցված մշտական բնակության հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը)
- 9 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի ՀՀ-ում ժամանակավոր (փաստացի) բնակության հասցեն
- 10, 11 - նշվում են անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի տան և աշխատանքային հեռախոսի համարները
- 12 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի գործունեության իրականացման վայրը (հասցեն)
- 13 - նշվում է պետական ռեգիստրի կողմից անհատ ձեռնարկատիրոջը տրված վկայականի համարը
- 14, 15 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անձնագրի սերիան և համարը
- 16 - նշվում է անձնագիր տված լիազորված մարմնի անվանումը (կոդը)
- 17 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման ոլորտը (ոլորտները), իսկ նոտարի կողմից նշվում է նոտարական գործունեություն իրականացնելու վերաբերյալ
- 18 - նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի ծննդյան թիվը և ամիսը
- 19 - նշվում է հարկային մարմին հայտարարագրի ներկայացման ամսաթիվը
- 20 - նշվում են անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի բանկային հաշիվների համարները (պարտադիր նշելով բանկի կամ բանկի մասնաճյուղի անվանումը)

ԲԱԺԻՆ II

ԳԸՀԾԸՊՆԵՐՊԵՏՅՈՒՆԻՉ ԽԿԱՉԾԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Գործունեությունից ստացված եկամուտները	[21]	15.000.000
Եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերը	[22]	13.400.000
Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը	[23]	1.600.000
Սոցիալական վճարի գումարը	[24]	200.000

- [21] տողում անհատ ձեռնարկատերերի կողմից նշվում են հաշվետու տարում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, իսկ նոտարների կողմից՝ նոտարական և դրա հետ կապված գործունեությունից ստացված եկամուտները (առանց նվազեցվող եկամուտների)
- [22] տողում անհատ ձեռնարկատերերի կողմից նշվում են հաշվետու տարում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից նվազեցվող ծախսերը (այդ թվում՝ նախորդ տարվանից փոխանցված հարկային վնասը), իսկ նոտարների կողմից՝ նոտարական և դրա հետ կապված գործունեությունից ստացված եկամուտներից նվազեցվող ծախսերը
- [23] տողում նշվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվարկման օբյեկտը (տող[21]-տող[22])՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի հաշվարկման ժամանակ անձնական նվազեցումները հաշվի չեն առնվում
- [24] տողում նշվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումարը

Բ Ա Ժ Ի Ն III

ՀՀ ԺԱՀԿԱԴԻՀ ԽԸՋԻԱԼԱԿԱՆ ԱԺԱՀԸԾԸՂԹՅԱՆ ԲՅՈՒՐԵ ԾԱԽՍԱՆ ԵՆԹԱԿԱ ԽԸՋԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԻ ՀԱՇՎԱՀԿ

(Վերնագիրը փոփ. 08.12.08 N 13-Ն)

Հաշվետու տարում հաշվարկված սոցիալական վճարի գումարը	[25]	200.000
Հաշվետու տարվա սոցիալական վճարի նվազագույն գումարը	[26]	60.000
Հաշվետու տարվա վճարման ենթակա սոցիալական վճարի գումարը	[27]	200.000

- [25] տողում նշվում է հաշվետու տարում գործունեությունից ստացված եկամուտներից հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումարը (տող[24])
- [26] տողում նշվում է հաշվետու տարվա համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարի նվազագույն գումարը
- [27] տողում նշվում է հաշվետու տարվա համար վճարման ենթակա պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումարը ([25] և [26] տողերի առավելագույնը)

(կետը փոփ. 08.12.08 N 13-Ն)

Հայտարարագիրը ներկայացնողի ստորագրությունը	Հայտարարագրի ընդունման ամսաթիվը
Հայտարարագիրը ընդունողի անունը, ազգանունը	Ստորագրությունը

Հայտարարագիրը լրացվում է 2 օրինակից, որոնք ներկայացվում են հարկային մարմին: Հայտարարագիրը առձեռն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է ապահովադրին: